

Ս. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՆ
ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ.
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

С. Х. СТЕПАНЯН

АРМЯНСКАЯ ТОРГОВАЯ
БУРЖУАЗИЯ
В ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ
ИРАНА
(КОНЕЦ XIX—НАЧАЛО XX ВВ.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1992

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԱԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԱՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ


Ա. Խ. ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ԱՌԵՎԱԼԱԳԻՏՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ
ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

(XIX ԴԱՐԻ ՎԵՐջ XX ԴԱՐԻ ՍԿԻզբ)

A 11/222762

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ



ԳՄԴ 63.3 (2Հ) 52 + 63.3 (5 Իրան)

Ա 887

Տպագրվում է Հայաստանի ԳԱ արևելագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Եղանյան
Գիրքը հրատարակության մեջ հրաշխավորել զրախոսներ՝
պատմական գիտությունների թեկնածուներ
Ա. Գ. Ստամբուլցյանը և Հ. Լ. Փանլանյանը

Ստեփանյան Ս. Խ.

Ա 887 Հայ առևտրական բուրժուազիան Իրանի
տնտեսական կյանքում/(Պատ. խմբ.՝ Հ. Մ.
Եղանյան; ՀԳԱ արևելագիտ. ին-տ.—Եր.: ՀԳԱ
Հրատ., 1992.—174 էջ:

Գրքում քննության մեջ առնվում XIX դ. վերջին XX դ.
սկզբին Իրանի տնտեսական կյանքում Հայ բուրժուազիայի
գործունեության հետ առնչվող հարցերը, կուսարանները և ճար
տեղն ու դերը Իրանի արտաքին առներում, հատկապես
ռուս-իրանական առևտրատնտեսական հարարերությունների
զարգացման գործում, ինչպես նաև Իրանի ներտնտեսական
կյանքի տարրեր ուրախներում՝ արդյունաբերության մեջ, ներ-
թարկվում նաև իրանահայ համայնքի ժողովրդագրական և սո-
ցիալ-տնտեսական վիճակը:

Գիրքը հասցեագրվում է արևելագետներին և ընթերցող
լայն շրջաններին:

0503020913

Ա ————— 26—91

703(02)—92

ISBN 5—8080—0234—6

ԳՄԴ 63.3 (2Հ) 52 + 63.3 (5 Իրան)

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

XIX դարի վերջը XX դարի սկիզբն իրանի սոցիալ-տնտեսական կյանքում նշանավորվեց զգալի տեղաշարժերով: Դրանք ոչ միայն իրանի ներքին զարգացման, այլև երկրի համաշխարհային շուկա ներքաշվելու արդյունք էին: Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հետ տնտեսական կասպերի զարգացումը, արտաքին առևտորի ծավալի նշանակալի աճը խթանեցին իրանական զյուղում ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը: Երկիրը մշտապես ավելացնում էր զյուղատնտեսական ապրանքների արտահանումը, դրանով իսկ դառնալով զարգացած կապիտալիստական երկրների հումքային կցորդը:

Մյուս կողմից արևմտաեվրոպական երկրների և Ռուսաստանի հարաբերություն առևտրատնտեսական էքսպանսիան կործանաբար հետևանքներ ունեցավ իրանական տնայնագործական արդյունաբերության ավանդաբար զարգացած ճյուղերի համար, որոնք շդիմանալով եվրոպական էժան արդյունաբերական ապրանքների մրցակցությանը լինակատար անկում էին ապրում:

Երկրում սկսված տնտեսական տեղաշարժերը զգալի փոփոխություններ առաջացրին իրանի սոցիալական կառուցվածքում: Գյուղում ընթացող կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացն ուղեկցվում էր զյուղացիական լայն խավերի ունեղրկմամբ: և մասնավոր հողատերերի ձեռքում հողի կենտրոնացմամբ:

Առևտրաարհեստագործական խոշոր կենտրոններում տեղի էր ունենում արհեստավորների քաղմահաղարանոց բանա-

կի քայրայման և առևտրական ու դրամական կապիտալի կենտրոնացման ուժգին գործընթաց:

Այս ամենը օբյեկտիվ նախադրյալներ էր ստեղծում քաղաքում և գյուղում նոր արտադրական հարաբերությունների զարգացման և կապիտալիստական հասարակության երկու հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման համար: Սակայն երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների յուրահատկությունը, նրա կիսագաղութային վիճակն իրենց կնիքն էին թողնում բուրժուազիայի և պրոլետարիատի կազմավորման գործընթացի վրա, պայմանավորում նրա առանձնահատկությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանական բուրժուազիան թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական առողջության չափազանց թույլ էր: Սակայն նա աստիճանաբար ուժ էր հավաքում և ավելի ու ավելի ակտիվորեն էր մասնակցում երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքին:

XIX դարի երկրորդ կեսից հայերն ուրիշ ազգությունների հետ միասին կարեռ գեր էին խաղում իրանի տնտեսական կյանքում: Հայ բուրժուազիան ամուր դիրքեր էր նվաճել Իրանի արտաքին և ներքին առևտրում, ֆինանսների բնագավառում և արդյունաբերության մեջ:

Սույն աշխատության շրջանակներում քննության ենք ենթարկում ոչ միայն իրանահպատակ, այլև ոռւսահպատակ հայ վաճառականների գործունեությունը: Հարցի այդօրինակ լուսաբանումը բացատրվում է հետեւյալ նկատմառումներով:

Սույն. Պատմական պայմանների բերումով հայ բուրժուազիայի և ընդհանրապես հայ ազգի ձևավորումն ընթանում էր միաժամանակ Օսմանյան կայսրությունում, իրանում և Ռուսաստանում: Իհարկե, այդ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման տարրեր մակարդակները, նրանցում գոյություն ունեցող պատմական պայմանների յուրահատկությունները կանխորոշում էին հայ բուրժուազիայի առանձին խմբերի ձևավորման առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ հայ բուրժուազիայի կազմավորումն իրենից ներկայացնում էր միասնական գործընթաց: Նրա առան-

ձին հաստվածների առևտրական, ֆինանսական և արդյունաբերական գործունեության ձևերն ու եղանակներն այնքան նման էին, որ անհնար է նրանց տարրերել: Այդ մասին վկայում են նաև ժամանակակից Հեղինակները: Այսպես, Ռուսաստանի Առևտրի և մանուֆակտուրաների դեպարտամենտի հատուկ համանարարությունների պաշտոնյա Մ. Տոմարան, որը 1893—94 թվականներին գործուղվել էր իրան ուսումնական առևտրի վիճակն ուսումնասիրելու համար, նշում է:

«Եվ սրանց, և նրանց* առևտրի հնարքները և սովորությունները. նրանց բարոյական և արդյունաբերական բնույթն այնքան նման է, որ հնարավոր չէ նրանց միջև որևէ տարրերություն դնել»¹:

Երկրորդ. Իրանահպատակ և ոռուսահպատակ հայ ձեռնարկատերներն իրանի տնտեսության բոլոր ոլորտներում սերտ համագործակցություն էին հաստատել: Նրանց առևտրաֆինանսական գործարքները, որպես կանոն, այնքան միաձուլված էին, որ հնարավոր չէ գրանք քննության առնել առանձին առանձին: Հատկանշական է, որ իրանում առևտրաֆինանսական լայն գործովնեություն ծավալած հայկական առևտրական ընկերությունները նույնպես միավորում էին ինչպես իրանահպատակ, այնպես էլ ոռուսահպատակ ձեռնարկատերերին:

Երրորդ. Պակաս կարեոր հանգամանք չէ նաև այն, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում այս կամ այն ձեռնարկատիրոջ հպատակությունը զգալի շափով պայմանական բնույթ էր կրում: Ռուսահպատակ հայ ձեռնարկատերների նշանակալի մասն ավելի սերտորեն կապված էր իրանի, քան թե Ռուսաստանի հետ: Նրանցից շատերն ամբողջ կյանքում աղբում էին իրանում, հիանալի գիտենին տեղի լեզուն և սովորությունները: Մյուս կողմից, զգալի թվով իրանահպատակ հայ ձեռնարկատերներ ստիպված էին ձեւականորեն ընդունել ոռուսական հպատակություն և ազատվել տեղական իշխանու-

* Հեղինակը նկատի ունի իրանահպատակ պարսիկներին, հայերին, արաւաներին, թաթարներին և Ռուսաստանի, Օսմանյան կայսրության, Անգլիայի և Մոսկաթի սուլթանի հպատակության տակ գտնվող նույն աղդությունների սերկարացուցիչներին:

թյունների կամայականություններից: Թնորոշ է, որ այդ միշտցին էր գիմել նաև Իրանում հայտնի այնպիսի խոշոր մի ընկերություն, ինչպիսին էր «Թումանյանց եղբայրներ» առևտըրական տունը, որի երկու անդամներ ուստական հպատակություն էին ընդունել:

Իրանահպատակ և ոստահպատակ հայ ձեռնարկատերերի գործունեությունը մեկ ընդհանուր համալիրում քննության առնելով հանդերձ, մենք միաժամանակ տարրերակված մոտեցում ենք հանդես բերել նրանց գնահատման հարցում, հաշվի առնելով, որ ոստահպատակ հայերի առևտրաֆինանսական և արդյունաբերական գործունեությունն Իրանում սերտորեն կապված էր ոստաստանյան կապիտալի Իրան ներթափանցման հետ և այդ ներթափանցման ուղղակի արդյունք էր:

Իրանում հայ բուրժուազիայի տնտեսական գործունեության համալիր ուսումնասիրությունը կարևոր զիտական նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն քննարկել ուսու-իրանական հարաբերությունները, ինչպես նաև բացահայտել հայ-իրանական բազմադարյան փոխարարերությունների նոր, շլուաբանված էջեր: Միևնույն ժամանակ այն թույլ է տալիս հետեւել իրանական բուրժուազիայի կազմավորման գործընթացին, վեր հանել Իրանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները: Մասնավորապես, արդյունաբերության բնագավառում իրանահպատակ և ոստահպատակ հայերի ձեռնարկատիրական գործունեության համագրումը հնարավորություն է տալիս պատասխանել այն հարցին, թե ինչու էր իրանում գերիշխում առևտրաֆինանսական բուրժուազիան շափականց թույլ էր և դեռևս գտնվում էր սազմակառման փուլում:

Հետազոտության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են XIX դարի վերջը XX դարի սկիզբը, ավելի կոնկրետ, XIX դարի 60-ական թվականներից մինչև նորագույն շրջանի սկիզբը: Ինչպես արդեն նշվել է, այդ ժամանակաշրջանը ընութագրվում է Իրանի սոցիալ-տնտեսական կյանքում

տեղի ունեցող կարևոր տեղաշարժերով, կապիտալիստական հարաբերությունների ծագմամբ և զարգացմամբ, ազգային արդյունաբերության ստեղծման առաջին լուրջ փորձերով։ Հայ բուրժուազիայի գործունեության ակտիվացումը դիտվում է հենց այս պատմական ֆոնի վրա։

Սույն աշխատության համար հիմնական աղբյուր են հանդիսացել նախկին ԽՍՀՄ Արտաքին գործոց նախարարությանը կից Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի (ՌԱԶՄ), Կենտրոնական պետական պատմական արխիվի (ԿՊՊԱ), Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվի (ՎԿՊՊԱ) և ՀՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի (ՀԿՊՊԱ) ֆոնդերի նյութերը, որոնց գգալի մասն առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ։ Դրանք հիմնականում հյուպատոսների զեկույցներ են, իրանի տարբեր շրջանների տնտեսական վիճակի մասին տեղեկանքներ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում XIX դարի վերջին XX դարի սկզբին իրանի տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում՝ արտաքին առևտրում, արդյունաբերական շինարարության և հողատիրության բնագավառներում Հայ բուրժուազիայի ծավալած բազմարնույթ գործունեության մասին։

Այդ նյութերի նշանակությունը դժվար է գերազնահատել, քանի որ նրանցում բերվող վիճակագրական և այլ տվյալները, որպես կանոն, ստացվել են սկզբնաղբյուրներից և ավելի արժանահավատ են, քան ուրիշ նյութեր։

Հատկապես կարևոր են ուսուական Հաշվավարկային բանկի նյութերը։ Բանկի գրամարկղային գրքերը, ծառայողների կողմից կազմված տարբեր տեղեկանքները, բանկի բաժանմունքների և գործակալությունների ամսական և տարեկան հաշվետվությունները և տեղեկագրերը կարենոր տեղեկություններ են պարունակում Հայկական տարբեր առևտրական տների և վաճառականների ֆինանսական դրության, նրանց առևտրական գործարքների, արդյունաբերության բնագավառում կապիտալների ներդրման և այլնի մասին։

Եղակի վիճակագրական տվյալներ ենք քաղել ՎԿՊՊԱ ֆոնդերից։ Դրանք զլիավորապես ուսւ-իրանական առևտրի մասին անդրկուլկացան մաքսատների տեղեկագրերն են, որոնք որոշակի պատկերացում են տալիս այս կամ այն վաճառականի առևտրական շրջանառության մասին։

ՀԿՊՊԱ ֆոնդերից օգտագործված նյութերը կարեոր նշանակություն ունեն իրանահայ բնակչության տեղաբաշխման և նրա սոցիալ-տնտեսական դրության ուսումնասիրության համար։

Իրանի տնտեսական կյանքի, ուսւ-իրանական առևտրական հարաբերությունների զարգացման, իրանի տնտեսության տարրեր ոլորտներում հայ բուրժուազիայի գործունեության կարեոր աղբյուր են հյուպատոսական զեկույցների ժողովածուները։

Որոշակի փաստական նյութ են պարունակում մինչեղափոխական շրջանի ուսւ հեղինակների աշխատությունները։ Նրանցից շատերը երկար տարիներ կարեոր պաշտոններ էին զբաղեցրել իրանում և լավատեղյակ էին երկրի տնտեսական կյանքի տարրեր կողմերին։

XIX դարի վերջի իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության ուսումնասիրության արժեքավոր աղբյուր է գրնդապետ Վ. Կոսոգովսկու օրագիրը², որը հրատարակել է խորհրդագային գիտնական Գ. Պետրովը։ Լինելով քաջատեղյակ անձնավորություն, իրանական կազակական բրիգադի հրամանատար Վ. Կոսոգովսկին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում երկրի Փինանսական դրության, պետական ապարատում լայնորեն տարածված կաշառակերության, կենտրոնական կառավարության թուլության և տեղական կառավարիչների անկախության ուժեղացման վերաբերյալ։

Հիշատակության արժանի է Ֆ. Բակուլինի աշխատությունը³։ Լինելով Աստրաբագում Ռուսաստանի հյուպատոսը, նա հնարավորություն ուներ ի մի հավաքել և համակարգել Աստրաբագի և նրա հարակից շրջանների տնտեսական դրության վերաբերյալ հյուպատոսությունում եղած հարուստ վիճակագրական նյութերը։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ նա

անձնական սերտ կապեր ուներ հայ վաճառականների հետ և նրանցից նույնպես որոշակի ինֆորմացիա էր ստանում, ապա պարզ կդառնա, որ նրա հաջորդած տեղեկությունները Մադանդարանում և Աստրաբաղում հայ վաճառականների ծավալած գործունեության, նրանց առևտրական շրջանառության, գնվող և վաճառվող ապրանքների վերաբերյալ միանգամայն արժանահավատ են: Մասնավորապես, շափականց կարևոր են հեղինակի տեղեկությունները հայ և իրանահպատակ ու ոռւսահպատակ մահմեդական վաճառականների առևտրական շրջանառության մասին, որոնք որոշակիորեն վկայում են, որ հայ վաճառականներն առևտրական շրջանառության ընդհանուր ծավալով գերազանցում էին մահմեդականներին, չնայած թվական առումով զգալիորեն զիջում էին նրանց⁴:

Որոշակի արժեք է ներկայացնում Ժ. Կասիսի աշխատությունը⁵: Իինելով Հաշվավարկային բանկի Սարգսեարի գործակալության կառավարիչը, հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է Խորասանի նահանգի առևտրատնտեսական կյանքը: Ուստի պատահական շէ, որ նրա աշխատությունը հարուստ փաստական նյութ է պարունակում բամբակազտման գործում հայ բուրժուազիայի արդյունաբերական ձեռնարկատիրության, բամբակի առևտրի հղանակների, իրանական բամբակի, բրդի, շոր մրգի և այլ ապրանքների արտահանման գործում հայ վաճառականների գերի մասին: Մեր կարծիքով բերված փաստական նյութի արժանահավատությանը շպետք է կասկածել, քանի որ դրանք ստացվել են գերազանցապես սկզբնադրյուրներից: Օրինակ, Ռուսաստանի հետ Սարգսեարի առևտրի մասին բազմաթիվ տվյալները հեղինակը ստացել է հայկական ընկերությունների լիազորների հարցման ճանապարհով:

Ուշագրավ տեղեկություններ է պարունակում Գլխավոր շտարի գնդապետ Բինդերկի աշխատությունը⁶: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է Իրանի Աստրաբաղ-Շաստամի շրջանը և բազմաթիվ վիճակագրական տվյալներ է հաղորդում Շահրուդի, Բանդար Գյազի և շրջակայքի առևտրի մասին: Աշխատության հավելվածում հեղինակը տվյալներ է հաղորդում Բանդար Գյազում և Շահրուդում գործող հայ վա-

ճառականների առևտրական շրջանառության մասին։ Այս, ինչպես նաև բազմաթիվ այլ տվյալներ հեղինակը ստացել է ռուսական Հյուպատոսության գործակալների միջոցով։ Պակաս կարենոր չեն Կասպից ծովում առևտրական նավերի շարժման մասին տեղեկությունները, որոնք հնարավորություն են տալիս եղրակացնել, որ հայ վաճառականներից և արդյունաբերողներից շատերը սիփական առևտրական նավեր ունեին և իրենք էին իրականացնում Կասպից ծովով ապրանքների արտահանումը և ներմուծումը։

Որոշակի հետաքրքրություն Են ներկայացնում Պ. Օգործովի աշխատությունները⁷։

1874 թվականին մոսկվացի վաճառական Գլուխովսկու չանքերով հանգերձավորվեց և Իրանի վրայով Աֆղանստան ուղարկվեց հատուկ քարավան՝ այդ երկրներում առևտրի պայմաններն ուսումնասիրելու նպատակով։ Քարավանի հետ Իրան մեկնեց նաև Ռուսաստանի աշխարհագրական ընկերության ներկայացուցիչ Օգործնիկովը։ Աշխարհագրական ուսումնասիրություններին զուգընթաց նա ուսումնասիրում էր նաև ռուս-իրանական առևտրի կազմակերպման պայմանները և հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Մազանդարանում, Աստրաբաղում և Խորասանում հայ վաճառականների գործունեության, նրանց առևտրական կալերի, ինչպես նաև Ռուսաստանի վրայով կատարվող տարանցիկ առևտրի մասին։

Բանդար Գյազում, Շահրուդում և Խորասանի Հյուսիսային շրջաններում հայ վաճառականների ծավալած գործունեության մասին հարուստ նյութ կա և. Կ. Արտամոնովի աշխատություններում⁸։ Ուշադրության արժանի է հատկապես հեղինակի այն վկայությունը, որ հայ վաճառականները Խորասանից Ռուսաստան էին արտահանում ոչ միայն իրանական, այլև աֆղանական, հնդկական և անգլիական արտադրության ապրանքներ⁹։

Մինչհեղափոխական շրջանի ռուս հեղինակների որոշ աշխատություններ կարենոր նշանակություն ունեն Իրանի ձկնարդյունաբերության մեջ հայ բուրժուազիայի դերի հար-

ցի ուսումնասիրման համար: Ն. Շավրովի, Ն. Սոլովկինի աշխատությունները¹⁰ հետաքրքրական տեղեկություններ են պարունակում կիանողովներին պատկանող ձկնորսարանների տեխնիկական հագեցվածության, ձկնորսության եղանակների, աշխատանքային պայմանների, աշխատողների ազգային կազմի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ ռուս հեղինակների ոչ բոլոր աշխատություններն են հավաստի տեղեկություններ պարունակում: Մասնավորապես, Գ. Կայեմը զգալի փաստական նյութ պարունակող իր աշխատության մեջ¹¹ միտումնավոր մոտեցում է հանդես բերում իրանում հայ վաճառականների առևտրաարդյունաբերական գործունեության գնահատման հարցում: Այսպես, խոսելով XX դարի 10-ական թվականներին վերոհիշյալ ձկնորսարաններից կիանողովների ստացած շահույթի շափի մասին, նա անհիմն պնդում է, որ ձեռնարկատերների շահույթը միայն կարասում ձկնորսարաններից ստացվող վորայի վաճառքից կազմում էր ավելի քան 500 հազար ռուբլի, իսկ վարձակալի տարեկան մաքուր շահույթը հասնում էր մի քանի միլիոն ռուբլու¹²:

Հեղինակը զգալիորեն շափազանցրել է նաև Բանդար Գյաղում «Բեղլարյանց և Կարապետյանց» և «Նասիրյանց և Տեր-Պետրոսյանց» առևտրական տներին պատկանող բամբակագոտից գործարաններից ստացվող շահույթի շափերը:

Զգալի փաստական նյութ են պարունակում նաև մյուս հեղինակների՝ Ա. Սախարովի, Ն. Շավրովի, Լ. Սոբոցինսկու, Ն. Զերովիցի, Պ. Ռիտիխի, Ս. Օստապենկոյի, Պ. Ավերյանովի, Ս. Լոմնիցու և այլոց աշխատությունները¹³:

Իրանահայ բնակչության տեղաբաշխման, նրա սոցիալ-տնտեսական զրությանը վերաբերող հարցերի լուսաբանման համար կարենոր աղբյուր են հայ հեղինակների գործերը, որոնք վիճակագրական հարուստ տվյալներ են պարունակում: Եթե նկատի ունենանք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանում բացակայում էր պաշտոնական և ոչ պաշտոնական վիճակագրությունը, ապա պարզ կդառնա, որ հաճախ հայ հեղինակների գործերը հայ համայնքի կյանքին

վերաբերող այս կամ այն հարցի լուսաբանման միակ հաշվաստի աղբյուրն են:

Մասնավորապես, իրանի կենտրոնական և հարավային շրջանների հայ բնակչության թվաքանակի և տեղաբաշխման, նոր ջուղայի հայ համայնքի սոցիալական կառուցվածքի, արհեստագորների և առևտրականների տարբեր կատեգորիաների մասին արժեքավոր վիճակագրական տեղեկություններ է պարունակում և անգնահատելի աղբյուր է՝ Հարություն Տեր-Հովհանյանցի աշխատությունը¹⁴:

Իրանի հյուսիսային շրջանների, մասնավորապես Ասրապատականի թեմի հայ բնակչության թվակազմի, նրա տնտեսական գրության ուսումնասիրման համար մեծ արժեք է ներկայացնում Ե. Ֆրանգյանի աշխատությունը¹⁵: Այն հավաստի փաստական նյութ է պարունակում բնակչության տեղաբաշխման և նրա տեղաշարժի, հայերի շրջանում տնայնագործական արհեստագործության տարածման մասին:

«Սալմաստ» գրքում¹⁶ մանրակրկիտ տեղեկություններ կան Սալմաստի շրջանի հայկական բոլոր բնակավայրերի բնակչության թվաքանակի, հայերի տարագնացության, հայ պյուղացիների գրության, հողատիրության տարրեր ձևերի մասին:

Օգտագործել ենք նաև Ասրապետի և Մկրտիչ Երկարակեցյանի աշխատությունները¹⁷:

Կարևոր աղբյուր է նաև XIX դարի վերջի XX դարի սկզբի հայ պարբերական մամուլը: «Մշակ», «Արձագանք», «Ճոր Ջուղայի լրաբեր», «Ալիք», «Ծավիղ» թերթերում հարուստ նյութ կա իրանահայ բնակչության թվաքանակի և տեղաբաշխման, նրա սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

Խորհրդային պատմագրության մեջ իրանում հայ բուրժուազիայի տնտեսական գործունեության հարցը հատուկ ուսումնասիրության առարկա չի եղել, ինչը, բնականորեն, դժվարացնում է մեր խնդիրը: Սակայն հարկ է նշել, որ այդ գործունեության առանձին կողմեր լուսաբանվել են խորհրդային իրանագետների ընդհանուր բնույթի աշխատություններում:

Խորհրդային պատմագրության մեջ Իրանի տնտեսության ուսումնասիրման առաջին լուրջ փորձը ն. Բորինինի աշխատությունն է¹⁸: Մասնագիտությամբ վիճակով գյուղատնտես-տնտեսագետ և ձեռքի տակ ունենալով ինչպես ոռուսական, այնպես էլ իրանական հավաստի աղբյուրներ, հեղինակը տալիս է Իրանի ժամանակակից տնտեսության համառոտ վերլուծությունը և հանգամանորեն լուսաբանում է Իրանի արտաքին առևտրի վիճակը 1901—1923 թվականներին: Մեզ համար հատկապես հետաքրքր են վիճակագրական տվյալները ոռուս-իրանական առևտրի տարրեր բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև Իրանի բամբակարդյունաբերության մեջ հայ վաճառականների ծավալած գործունեության առնչվող փաստերը:

Զ. Արդուկակի աշխատությունը¹⁹ նվիրված է Իրանում արդյունաբերության զարգացման, կապիտալիստական հարաբերությունների ձևավորման և բանվոր դասակարգի ծագման առանցքային հարցերի ուսումնասիրությանը: Հանգամանորեն վերլուծելով իրանի արդյունաբերության վիճակը, հեղինակը, բնականաբար քննության է ենթարկում նաև այդ բնագավառում հայ բուրժուազիայի ձեռնարկատիրական գործունեության հարցը: Հեղինակը լուսաբանում է նաև Իրանի ձենարդյունաբերության մեջ հայ առևտրական կապիտալի դերի հարցը:

XIX դարի վերջի XX դարի սկզբի Իրանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրման գործում զգալի ավանդ է Ռ. Սեիդովի աշխատությունը²⁰, որտեղ քննության են ենթարկվում իրանական բուրժուազիայի ծագման, նրա զարգացման վրա օտարերկրյա կապիտալի թողած բացասական ազդեցության, ազգային արդյունաբերական կապիտալի թուլության և առևտրավաշխառուական կապիտալի գերազանցության հարցերը:

Աշխատության դրական կողմերից է այն, որ հեղինակը հանգամանորեն վերլուծում է իրանական բուրժուազիայի ազգային, մասնագիտական և գույքային կազմը: Յավոք, այդ

Վերլուծությունը հիմնվում է հիմնականում Հաշվավարկային բանկի բանկային գրքերի նյութերի վրա և չի կարող տալ իրանական բուրժուազիայի կազմի ճշգրիտ և լիակատար պատկերը։ Անշուշտ, հեղինակն անդրադառնում է նաև իրանի տնտեսական կյանքին հայ բուրժուազիայի մասնակցության հարցին։ Նա հիմնականում ճիշտ է գնահատում հայ բուրժուազիայի դերը, նշելով, որ հայերը պարսիկների և ադրբեջանցիների^{*} հետ միասին կազմում են իրանական բուրժուազիայի առաջատար խումբը և կարենոր դեր էին խաղում իրանի արտաքին առևտում, արդյունարերության մեջ և արհեստագործության բնագավառում։

Իրանում հայ բուրժուազիայի գործունեության հետ կապված հարցերն այս կամ այն շափով արծարծվել են նաև Վ. Գլուխովեդի, Լ. Կուլագինայի, Ն. Կուզնեցովայի աշխատություններում²¹,

Լիանոզովների ձևորսարաններում ձկնորսության կազմակերպման եղանակների, վարձակալների ծախսերի և եկամուտների, աշխատողների թվաքանակի և տեխնիկական հագեցվածության վերաբերյալ հետաքրքրական փաստական նյութ կա Ս. Նեվրակի և Գ. Տեր-Հովհաննեսովի հոգվածներում²², Երկու հեղինակներն ել մեծ շափով օգտագործել են ի. Ֆարմանովի աշխատությունը²³, սակայն մեզ չհաջողվեց այն հայտնաբերել Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Թրիլիսիի և Երևանի գրադարաններում։

Օգտագործել ենք նաև Հ. Եգանյանի և Ս. Դյումինի աշխատությունները²⁴, որոնք օգնել են ճիշտ գնահատել XIX դարի վերջին իրանի ազրարային հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը։

Աշխատության համար որոշակի արժեք են ներկայացնում արեմտաելրոպական և ամերիկյան հեղինակների գործերը։ Սակայն հարկ է նշել, որ չնշին բացառությամբ իրա-

* Հեղինակը նկատի ունի ոռուահպատակ և իրանահպատակ թաթարներին։

նում հայ բորժուազիայի գործունեության վերաբերյալ նրանց հաղորդած տեղեկությունները կցկառուր են և հաճախ կը ըկնում են ուսական սկզբնաղբյուրները:

Այս առումով բացառություն է կազմում և մեզ համար հատկապիս մեծ արժեք է ներկայացնում Զարլզ Իսավիի խմբագրած «Իրանի տնտեսական պատմությունը 1800—1914 թթ.» ժողովածուն²⁵, որտեղի մի են բերված ինչպես ուսական, այնպես էլ արտասահմանյան Հեղինակների աշխատություններից հատվածներ, անդինական հյուպատունների և այլ պաշտոնական անձանց գեկուցագրեր: Այդ նյութերի մի մասը տարրեր պատմառներով մեզ չի հաջողվել օգտագործել բնագրով: Ժողովածուն հետաքրքիր փաստեր է պարունակում առեւտրի պայմանների, ֆինանսների և արդյունաբերության բնագավառում հայ բորժուազիայի գործունեության վերաբերյալ: Հատկապես կարևոր են անգիտական հյուպատունների հաղորդած տեղեկությունները 70-ական թվականների կեսերին կիանողովների ծախսերի և եկամուտների, ձենորսարանների աշխատութիւն թվաքանակի և ազգային կազմի մասին, որոնք լրացնում են ուսական սկզբնաղբյուրների նյութերը: Որոշ գեպերում ժողովածուի նյութերը հանդիսանում են միակ աղբյուրը: Այսպես՝ անգիտական հյուպատունների գեկուցագրերից մեկի շնորհիվ տեղեկանում ենք, որ գեռևս XIX դարի 80-ական թվականներին Օսմանյան կայսրության հայ առևտրաբարդյունարերական շրջանների ներկայացուցիչները դիմել էին իրանական կառավարությանը՝ իրանի պետական բանկի ստեղծման խնդրանքով²⁶:

Դիտական մեծ արժեք է ներկայացնում Իրանի լավագույն գիտակներից մեկի՝ անգիտացի Զորջ Փերզոնի աշխատությունը²⁷: Հեղինակը մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում արհեստագործական և տնայնագործական արտադրության, գյուղատնտեսության և ֆինանսների վիճակի, վերաբերյալ: Մեզ համար հատկապես կարևոր են Հեղինակի տվյալները իրանահայ բնակչության թվաքանակի և տեղաբաշխման, Սարգսեարում և Խորասանի այլ քաղաքներում հայ



վաճառականների ծավալած գործունեության, Ռուսաստանի վրայով խորասանյան բրդի տարանցիկ առևտորի մասին:

Հայկական առևտրական տների և ընկերությունների առևտրական շրջանառության, տարրեր բնագավառներում նրանց ձեռնարկատիրական գործունեության մասին որոշ պատկերացում է տալիս Վ. Լիթթենի աշխատությունը²⁸:

Իրանի ազգարային հարաբերությունների վերաբերյալ հարուստ փաստական նյութ է պարունակում Ա. Լամբթոնի աշխատությունը²⁹: Հեղինակը հանգամանորեն վերլուծում է Հողատիրության տարրեր ձեռքի հարաբերակցության, մասնավոր հողատիրության զարգացման հարցերը: Աշխատության պարունակած փաստական նյութը հնարավորություն է տալիս հետևել զյուղացիության քայլքայման, ֆեոդալական տնտեսությունները կիսաֆեոդալականի փոխարկվելու գործընթացին:

Օգտագործել ենք նաև Ե. Եղանեգիի, Զ. Բարիերի, Մ. Էնթների, Բիշովի և այլոց աշխատությունները³⁰, որոնք նվիրված են Իրանի պատմության ընդհանուր խնդիրներին:

Ցավոք, XIX դարի վերջի XX դարի սկզբի Իրանի պատմությանը և տնտեսությանը վերաբերող պարսիկ հեղինակների գործերում շափազանց քիչ տեղեկություններ կան հայրուրժուազիի գործունեության վերաբերյալ: «Թումանյանց եղբայրներ» առևտրական տան բազմակողմանի գործությանը վերաբերող որոշ տվյալներ քաղել ենք «Իրանի ազգային բանկի երեսնամյա պատմություն (1928—1958)» գրքից³¹: Մեզ համար կարեոր են հատկապես ոռու-իրանական առևտրին վերոհիշյալ ընկերության մասնակցությանը, առևտրական տան ֆինանսաբանկային գործունեությանը, թումանյանցների կողմից զգալի հողային զանգվածների գընմանը վերաբերող փաստերը: Մասնավորապես զրքում եղած տեղեկություններից կարելի է եղբակացնել, որ XIX դարի վերջից առևտրական տան գործունեության մեջ գերակշռում էին ֆինանսաբանկային գործարքները:

Վերոհիշյալ առևտրական տան ֆինանսական գործու-

նեռության, նրան իրանական կառավարության պարտքի շափերի վերաբերյալ հազվագյուտ տեղեկություններ է հաղորդում պարսիկ հեղինակ Խամացիլ Ռախինը³²:

Իրանական արդյունաբերության վիճակի, մասնավորապես XIX դարի կեսերին Իրանում արդյունաբերական շինարարության հարցերը քննելիս օգտվել ենք Ֆերիդուն Աղմիյաթի աշխատությունից³³: Հեղինակը հանգամանալի վերլուծության է ենթարկում վարչապետ Միրզա Թաղի-խանի գործունեությունը, որն ուղղված էր Իրանում ազգային արդյունաբերության ստեղծմանը և կարևոր տեղեկություններ է հաղորդում առաջին արդյունաբերական ձեռնարկությունների մասին:

Մուստաֆա Ֆաթեհի աշխատությունը³⁴ նվիրված է Իրանի ֆինանսների և բանկային գործի վիճակի քննությանը: Զափազանց արժեքավոր են Իրանում և Ռուսաստանում «Թումանյանց եղբայրներ» առևտրական տան ունեցած կապիտալի շափերի վերաբերյալ հեղինակի տեղեկությունները:

Օգտագործել ենք նաև Սեյիդ Մոհամեդ Ալի Զամալզադեի աշխատությունը³⁵, որն առ այսօր մնում է XIX դարի վերջի XX դարի սկզբի Իրանի տնտեսական պատմության միակ համահավաք հետազոտությունը:

ՅԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻԿ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ
XX ԴԱՐԻ ՍԿզբին

XIX դարի կեսերին իրանը տիպիկ միջնադարյան արեւ-
վելլան պետություն էր, որտեղ գերիշխում էին ֆեոդալական
արտադրական հարաբերությունները։ Բնակչության հիմնա-
կան մասի զբաղմունքը գյուղատնտեսությունն էր։

Ազրարային հարաբերությունների հիմքում ընկած էր
Հոգի նկատմամբ ֆեոդալական սեփականությունը։ Ու-
սումնասիրվող ժամանակաշրջանում իրանում տարածված
էին հողատիրության հետևյալ հիմնական ձևեր՝ խալիսե,
վակֆ, արբարի, իլյաթի և օմումի։ Վիճակագրական ճշգրիտ
տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս
ամբողջական պատկերացում կազմել հողատիրության տար-
բեր ձևերի հարաբերակցության մասին, սակայն աղբյուրնե-
րում առկա տվյալները թույլ են տալիս ուրվագծել ազրարա-
յին հարաբերությունների զարգացման ընդհանուր օրինաչա-
փությունները և անհել որոշ ընդհանրացումներ։

XIX դարի երկրորդ կեսից իրանի ազրարային հարա-
բերություններում տեղի էին ունենում զգալի տեղաշարժեր,
որոնք պայմանավորված էին ինչպես ներքին, այնպես էլ
արտաքին գործոններով։ Դյուլում ապրանքադրամական
հարաբերությունների զարգացմանը զուգընթաց բնատնտե-
սությունն աստիճանաբար քայլայվում էր և նախադրյալներ
էին ստեղծվում կապիտալիստական հարաբերությունների
զարգացման և համազգային շուկայի ձևավորման համար։

Ծակույն այդ գործընթացի ընորոշ առանձնահատկությունն այն էր, որ այն ընթանում էր զգալի շափով արտաքին գործողի ազգեցության տակ: Անցյալ դարի 70-ական թվականներից սկսվում է Իրանի ինտենսիվ ներքաշումը համաշխարհային կապիտալիստական շուկա: Տեղի էր ունենում գյուղատնտեսության ապրանքայնացման գործընթաց, որը ըսկըսում էր ավելի ու ավելի մեծ շափով աշխատել արտաքին շուկայի համար: Գյուղատնտեսական ապրանքների արտահանման աճը որոշակիորեն խթանում էր տնտեսության այդ ճյուղի զարգացումը: Հողի ապրանքային արժեքն անշեղորեն աճում էր: Ժամանակակից արդյունաբերության բացակայության պայմաններում այն դառնում էր կապիտալի ներդրման ամենաշահավետ ոլորտներից մեկը:

Այս ամենը նկատելիորեն փոխում էր հողատիրության տարրեր ձևերի հարաբերակցությունը: Եթե մինչև XIX դարի կեսերը հողատիրության հիմնական ձևերը խալիսեն՝ պետական հողեր և վակֆն էին՝ մզկիթապատկան հողեր, ապա հետագայում տիրապետող միտում է դառնում մասնավոր հողատիրության արագ զարգացումը, որի հետևանքով արբարի ֆոնդն անշեղորեն ընդլայնվում էր: Դա հիմնականում պայմանավորված էր հողի նկամտաբերության աճով: Սակայն պակաս կարեոր չէր նաև այն, որ իրանական կառավարությունը և նասր Էդ-Դին շահը մշտապես դրամի կարիք ունենալով ստիպված էին մասսայաբար վաճառել խալիսե հողերը: Ուստի խալիսե հողերի ֆոնդն արագորեն կրճատվում էր: Այսպես՝ XIX դարի 70-ական թվականների վերջին Մալայիրի շրջանի 236 գյուղերից 206-ը արբարի էին, 7-ը՝ մասնակիորեն արբարի, 16-ը՝ խալիսե, 5-ը՝ մասնակիորեն խալիսե և 2-ը՝ վակֆ¹:

1880-81 թվականներին Ղարաղանի շրջանում 46 գյուղեր արբարի էին, 13-ը՝ մասնակիորեն արբարի, և միայն մեկ գյուղի 1/3 մասն էր խալիսե: Մեկ գյուղի կեսը, մյուսի 1/3-ը և երրորդի 1/6-ը վակֆ էին²:

Նասր Էդ-Դինի կառավարման շրջանում Մալայանի շրջակայթի պետական բոլոր հողերը վաճառված էին և երբ Մո-

զաֆեր էդ-Դին շահն իշխանության գլուխ եկալ, միակ խալիսն Հողերը Բարաապի ավերված գյուղերն էին³:

Աստրաբագի շրջանում 229 բնակեցված գյուղերից 168-ը կալվածատերերի մասնավոր սեփականությունն էին կազմում և միայն 19-ն էր պատկանում սրբառաթյանը⁴:

Հողատիրության տարբեր ձևերի հարաբերակցության նման պատկերը բնորոշ է ուսումնասիրվող ժամանակաշրջանի Իրանի համարյա բոլոր շրջաններին:

Արքարի Հողերի ամի հիմնական աղբյուրը պետական Հողերն էին: Սակայն այն տեղի էր ունենում նաև ի հաշիվ Հողատիրության մյուս ձևերի: Օրինակ, Իրանի խոշորագույն մզկիթապատկան տիրություններից էր Զահրին: Այդ վիթխարի կալվածքը բազկացած էր 380 գյուղերից, սակայն XX դարի սկզբին կրոնական հաստատությունների ձեռքում մնացել էր ընդամենը 12—15 գյուղ, մյուսներն անցել էին մասնավոր Հողատերերին⁵:

XIX դարի վերջին Մակվի խանությունում կար 14 մըզկիթապատկան գյուղ, մինչդեռ XX դարի սկզբին արդեն ոչ մի մզկիթապատկան գյուղ չկար⁶:

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ Հողի մասնավոր սեփականատիրությունը զարգանում էր նաև վակֆի՝ մզկիթապատկան Հողերի հաշվին: Նման միտումը շափականց հետաքրքիր է նաև այն առումով, որ գյուղուն ունեցող կարգի համաձայն մզկիթապատկան Հողերի վաճառքն արգելվում էր: Սակայն անցյալ դարի վերջից այդ կարգն արգեն չեր պահպանվում, իսկ մահմեդական Հողերականներն ամեն անզամ որևէ պատճառ էին գտնում Հողերի վաճառքի համար:

Արքարի Հողերի ընդլայնումը տեղի էր ունենում նաև ի հաշիվ խորդեմալեքային՝ մանրկալվածատիրական և հանրային Հողերի: Օրինակ, XIX դարի 80-ական թվականների սկզբին Զարաղանի շրջանի 14 խորդեմալեքային գյուղերից 7-ը գտնվում էին արքարի վերածման գործընթացում⁷:

Արտաքին առևտուրական կապերի ընդլայնումը և ապրանքադրամական հարաբերությունների արագ զարգացումը

ոոցիալական խորը տեղաշարժեր առաջացրին իրանական գյուղում: Մինչև XIX դարի կեսերը գյուղում տիրապետող տաքրը ժառանգական խաներն էին, սակայն դարի վերջից իրադրությունը կտրուկ կերպով փոխվում է: Առևտրական կապիտալը ներթափանցում է գյուղ: Արտաքին առևտրի հետ կապված խոշոր վաճառականները որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում հողի նկատմամբ: Նրանք զգալի քանակությամբ հողեր են գնում իրանի տարրեր շրջաններում և գործի են տալիս առևտրային հողագործությանը: Մասնավորապես վիթխարի հողային տարածություններ էին ձեռք բերել առևտրագրամական կապիտալի այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Զամշիդյանները, Զահանյանները (փարսեր), Թումանյանները (Հայեր) և այլոք:

Առևտրական կապիտալի ներթափանցումը գյուղ երկակի նշանակություն ուներ: Մի կողմից այն խթանում էր գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և ֆեոդալական տնտեսությունների փոխակերպումը կիսաֆեոդալականի: Մյուս կողմից, դա բացասաբար էր անդրադառնում ազգային արդյունաբերության զարգացման վրա, քանի որ խոշնդոտում էր առևտրական կապիտալը արդյունաբերականի փոխարկվելու բնականոն գործընթացը:

Խոշոր վաճառականները զգալի կապիտալ ներդնելով հողագործության բնագավառում վերածվում էին վաճառական-կալվածատերերի, ինչը բնորոշ երևույթ է XIX դարի վերջի XX դարի սկզբի իրանի համար: Միևնույն ժամանակ տեղի էր ունենում հակադարձ երևույթը: Խոշոր ֆեոդալները և մյուս հողատերերը ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց սկսում էին սեփական տնտեսություն վարել և անմիջականորեն կամ միջնորդների միջոցով զբաղվել առևտրով:

«Գյուղատերերը սեփական տնտեսություն չունեին և բավարարվում էին ժողովրդից ստացած բերքի 1/10-րդ մասով: Սակայն, եթե մրգերն սկսեցին վաճառվել մեծ քանակությամբ, գյուղատերերն ընտրեցին լավագույն հողակտոր-

ները, այգիներ հիմնեցին և գյուղացիներին ստիպեցին անվճար աշխատել իրենց այգիներում», —նշում է Ատրպետը⁹:

Նոր հողատերերի թվում նշանակալի տոկոս էին զաղմում մահմեդական հոգեորականները: Թեհրանի, Թավրիզի, Սպահանի շատ մոշթեհրդներ ձեռք էին բերել 50—200 գյուղ և մրցում էին վաճառականների և զրամատերերի հետ⁹:

Գյուղատնտեսության մեջ տեղի էին ունենում զգալի կառուցվածքային փոփոխություններ: Հացահատիկային կուլտուրաների հաշվին, որոնք բավարարում էին հիմնականում ներքին շուկայի պահանջարկը, արագորեն ավելանում էր տեխնիկական կուլտուրաների արտադրությունը:

Ամբողջ Իրանում¹⁰ հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները կրնատվում էին և ընդլայնվում էին բամբակի, ափիոնի, ծխախոտի և այլ տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները: Մի շարք շրջաններում հացահատիկային կուլտուրաների արտադրությունն այնքան կրնատվեց, որ այլևս չէր բավարարում տեղական բնակչության պահանջարկը: Դա վերաբերում է հատկապես հարավային Իրանին, որը դարձել էր իրանական ափիոնի արտադրության հիմնական կենտրոնը:

«Այդ կուլտուրայի շահավետությունը, որը Զինաստանում միշտ նշանակալի պահանջարկ ունի, այնքան գայթակեց հարավային Իրանի հողագործներին, որ նրանք հրաժարվեցին հացահատիկի և բրնձի մշակությունից, որի պատճառով հաճախ սովոր են մատնվում, քանի որ հաղորդակցության լավ ճանապարհների բացակայության պայմաններում, հացի տեղափոխումն այլ շրջաններից անհնար է», —նշում է Մ. Տոմարան¹¹:

Սպահանի շրջանում ափիոնի արտադրությունն, ի վեցահատիկային կուլտուրաների, այնքան արագ էր զարգանում, որ սկսեց անհանգստացնել նույնիսկ տեղական իշխանություններին: Վերջիններս աշխատում էին ամեն կերպ արգելակել այդ գործընթացի հետագա խորացումը: Սպահանի նահանգապետը նույնիսկ հատուկ կարգադրություն հրապարակեց, որի համաձայն գյուղացիները պարտավոր էին

Հոգագությունը շորս մաս ափիոնի դիմաց ցանել մեկ մաս հացահատիկ¹²:

Իրանի տարբեր շրջաններում լայնորեն տարածված էր բամբակի մշակությունը: Այդ կուլտուրայի մշակությամբ Իրանում զբաղվում էին նաև XIX դարի սկզբին, սակայն մինչեւ դարի կեսերը քամբակի արտադրությունն ուներ գերազանցապես տեղական նշանակություն և այն արտահանվում էր աննշան շափերով: Իրադրությունն արմատապես փոխվեց դարի վերջին: Ծուսաստանում տեքստիլ արդյունաբերության արագ զարգացումը որոշակիորեն խթանեց բամբակի արտադրությունն Իրանում: Դրան մեծ շափով նպաստեց նաև ԱՄՆ-ում սկսված քաղաքացիական պատերազմը: ԱՄՆ-ը բամբակի խոշորագույն արտահանողն էր ամբողջ աշխարհում, սակայն վերոհիշյալ պատերազմի պատճառով այդ ապրանքի արտահանումն ԱՄՆ-ից խիստ կրճատվեց: Պատերազմը ցույց տվեց Ծուսաստանի տեքստիլ արդյունաբերության կախումն ամերիկյան հումքից և նրան ստիպեց փընտրել հումքի նոր աղբյուրներ: Ամերիկյան բամբակի արտահանման կրճատումը խթանեց այդ կուլտուրայի մշակությունը մյուս երկրներում, այդ թվում նաև Իրանում: Այդ երկրում բամբակի արտադրության և նրա արտահանման աճի կարևոր պատճառներից մեկը Ծուսաստանի աշխարհագրական դիրքն էր, նրա մոտիկությունն իրանական բամբակի արտադրության հիմնական կենտրոններին: Պակաս կարևոր չէր նաև Ծուսաստանի մաքսային քաղաքականությունը, որը XIX դարի վերջից արտոնյալ մաքսային սակագին էր հաստատել իրանական բամբակի համար:

Այս ամենի հետևանքով XIX դարի կեսերից իրանական բամբակի արտադրությունն ու արտահանումն արագորեն ավելանում էր: Այսպես, եթե 1858—67 թվականներին Իրանից Ծուսաստան էր արտահանվում տարեկան միջին հաշվով 121.700 փութ բամբակ, ապա Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին այդ թիվն աճել էր ավելի քան 12 անգամ և կազմում էր 1.553.620 փութ¹³,

Բամբակի արտադրության նման շեշտակի վերելքը, ինչպես նշվեց, պայմանավորված էր գլխավորապես արտաքին պահանջարկով և համաշխարհային հապիտալիստական շուկա Իրանի ներքաշման արդյունք էր: Արտադրված բամբակի ճնշող մասն արտահանվում էր, իսկ երկրի ներսում մնում էր նրա միայն 1/6 մասը: Օրինակ, 1912—14 թվականներին արտադրվում էր տարեկան միջին հաշվով 2 մլն. փութ բամբակ, որից 1.650.000 փութն արտահանվում էր գերազանցապես Ռուսաստան, իսկ 350.000 փութը մնում էր երկրի ներսում ներքին պահանջարկը բավարարելու համար¹⁴:

Իրանում վաղուց ի վեր զբաղվում էին շերամապահությամբ: Մի քանի դար շարունակ մետաքսը Իրանի արտահանման կարևորագույն ճյուղն էր: Անցյալ դարի սկզբին շերամաբուժությունը դեռևս շարունակում էր կարևոր դեր խաղալ Իրանի անտեսական կյանքում: Սակայն 60-ական թվականներից դյուղատնտեսության այդ կարևոր բնագավառն աճելում էր ապրում, որը շերամորդի հիվանդության արդյունք էր: Հինգ տարվա ընթացքում՝ 1864—69 թթ., Գիլանում մետաքսի արտադրությունը կրճատվել էր մոտավորապես 5 անգամ¹⁵: Հետագայում ևս Գիլանում շերամաբուժությունը խորը ճգնաժամ էր ապրում: Գիլանի շերամապահները մետաքսի արտադրությունը վերականգնելու բազմաթիվ անհաջող փորձեր կատարեցին, Շերամի սերմեր ներմուծվեցին Խորասանից, Խանեկինից և նույնիսկ Ճապոնիայից, սակայն այդ փորձերից ոչ մեկը դրական արդյունք չտվեց¹⁶:

Գիլանում շերամաբուժության նոր վերելքը սկսվեց միայն անցյալ դարի 90-ական թվականներից: 1893 թվականին հունական Պասխալիդիս ընկերության ներկայացուցիչը Բեզանոսը Գիլանի շերամապահներին բաժանեց Բուրսայից ներմուծված պաստերյան եղանակով պատրաստված 8.000 ունցիա (1 ունցիան հավասար է 29,86 գրամի) շերամի սերմ: Առևտրական տան փորձն անմիջապես դրական արդյունք տվեց և մետաքսի արտադրությունը սկսեց արագորեն ավելանալ:

| | |
|----------------|-----------------------------|
| 1893—34.549 կգ | 1902— 865.912 |
| 1894— 76.068 | 1903—1529.400 ¹⁷ |
| 1895—107.035 | 1904— 44.500 գուբ |
| 1896—101.984 | 1905— 46.400 |
| 1897—156.774 | 1906— 65.800 |
| 1898—294.500 | 1907— 77.800 |
| 1899—557.600 | 1908— 44.200 |
| 1900—765.496 | 1909— 60.400 ¹⁸ |
| 1901—585.200 | |

Բացի Գիլանից շերամաբուծությամբ զրադվում էին նաև Մազանդարանում, Խորասանում, Իրանական Ադրբեջանում, Քաջանի, Սպահանի, Քիրմանի շրջակայքում և այլ շրջաններում:

Շերամորդի Հիվանդության պատճառով Գիլանում զգալիորեն կրծատվեցին թթենու այգիները: Գյուղացիները զարկ տվեցին այլ կուլտուրաների մշակությանը: Հյուսիսային շրջաններում արագորեն ավելանում էր ծխախոտի, ձիթապտղի, բրնձի, Հարավում՝ ափիոնի արտադրությունը¹⁹:

Սակայն XIX դարի վերջից շերամաբուծության նկատելի աշխատացման հետևանքով այս ճյուղը լայն տարածում գտավ և ընդգրկեց նորանոր շրջաններ: Շերամաբուծությամբ սկսեցին զբաղվել ոչ միայն մետաքսի արտադրության ավանդական շրջաններում, այլև Լահիջանում, Լանգերուդում, Էնդիլում, Աբ-Քենարում, Քեսմում, Թոնկարունում և այլուր²⁰:

Արտադրված մետաքսը և մետաքսարոժութիւն արտահանվում էին գերազանցապես Ֆրանսիա և Իտալիա: Երկրում մնում էր ընդհանուր արտադրանքի շնչին մասը: Այսպես, 1906 թվականին Գիլանում Հավաքված մետաքսարոժութիւն ընդհանուր քանակի 3/4-ը արտահանվել էր, իսկ տեղում մնացել էր միայն 1/4 մասը²¹:

XIX դարի վերջից իրանում արագորեն ավելանում էր բրնձի արտադրությունը, որը աստիճանաբար դառնում էր իրանի արտահանման գլխավոր ճյուղերից մեկը: Բրնձի արտադրության զլիավոր շրջանները մերձկասպյան նահանգներն էին՝ Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը, որտեղից բրնձն արտահանվում էր բացառապես Ռուսաստան: Պարսիկ հեղինակ Զամալ-զադեի տվյալներով 1872—1910 թվականներին բրնձի արտահանությունը Ռուսաստան ավելացել էր 58 անգամ²²: XX դարի սկզբին բրնձն իրանի արտահանման մեջ գրավում էր չորրորդ տեղը:

Այսպիսով, կապիտալի ներթափանցումն իրանական դյուդ հանգեցրեց զյուղատնտեսության ապրանքայնացմանը, հողատիրության տարբեր ձևերի միջև հարաբերակցության և զյուղատնտեսության կառուցվածքի փոփոխությանը: Գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը արագացրեց ֆեոդալական տնտեսությունը կիսաֆեոդալականի փոխարիկվելու դորժընթացը: Որոշ հետազոտողներ, ինչպես օրինակ Մ. Պավլովիչը, հակված էին գրանում տեսնել սոցիալական նոր կարգի հաղթանակը: Իրականում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում, իրանական զյուղում կապիտալիստական հարաբերությունները դեռևս տիրապետող չէին:

«Կապիտալն աշխատանքն իրեն է ենթարկում ամենից առաջ այն տեխնիկական պայմանների հետ միասին, որոնց մեջ նա պատմականորեն գտնում է հիշյալ աշխատանքը: Այս պատճառով նա անմիջաբար չի փոխում արտադրության եղանակը», — նշում է Կ. Մարքսը²³:

Կ. Մարքսի այս բնորոշումը լիովին կարելի է կիրառել նաև իրանի ազգարային հարաբերությունների վիճակը բնութագրելիս: Անցյալ դարի վերջին և մեր դարի սկզբին իրանական զյուղում գեռևս գերիշխում էին ֆեոդալական արտադրական հարաբերությունները: Կապիտալիստական վերափոխումները մեծ շափով ընթանում էին արտաքին գործոնների ազգեցության տակ, որի պատճառով կիսատպուատ,

Առևտրական կապիտալի գյուղ ներթափանցման և մասնավոր հողատիրության զարգացման հետևանքով տեղի էր ունենում գյուղացիների ունեղրկման ուժգին գործընթաց։ Նորմալ պայմաններում դա պետք է նպաստեր կապիտալիթական ձեռնարկատիրության զարգացմանը, քանի որ պատրանգորական ուժի զգալի բանակ էր առաջանում։ Սակայն իրանի պայմաններում, որտեղ չկար ձեռներեց արդյունարեշտ բական կապիտալ և ընդհանրապես ժամանակակից արդյունարերությունն, գյուղացիների ունեղրկումը չէր կարող խթան ծառայել կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ Այդ պատճառով տեղի էր ունենում ստրկական պայմաններով հողի հետ գյուղացիների վերամիավորում։ Խնդրո առարկա ժամանակաշրջանում իրանական գյուղացիության հիմնական մասը կազմում էին հողագործել և սակավահող գյուղացիները, որոնք չափազանց ծանր պայմաններով վարձակալում էին կալվածատերերին և այլ հողատերերին պատկանող հողը։ Անշուշտ, իրանում գյուղացիների ճորտական կախվածությունը չստացավ այնպիսի սուր տեսք, ինչպիսին Ռուսաստանում էր։ Նրանք անձնապես ազատ էին, կարող էին տեղափոխվել մեկ հողատիրոջից մյուսի մոտ, ըզրազմունք ընտրել և այլն։ Սակայն, փաստորեն, իրանական գյուղացիության մեծամասնության սոցիալական դրությունը թիւ բանով էր տարբերվում ոռուսական ճորտ գյուղացու վիճակից։ Ողջ իրանում հողատերերը սեփական տնտեսությունը վարում էին կիրառելով գյուղացիության շահագործման նախկին ֆեոդալական ձևերը, զուգորդելով հարկադրման տնտեսական և արտատնտեսական մեթոդները²⁴։

Ինչպես նշվեց, գյուղացիները հողը վարձակալում էին ստրկական պայմաններով։ Պահպանվում էր բերքի բաժանման միջնադարյան հնգանդամ բանաձեռք, որի համաձայն բերքը բաժանվում էր հինգ հավասար մասի՝ հողի, ջրի, սերմացուի, քաշող ուժի և աշխատուժի համար։ Լավագուցն զեպում գյուղացին հողատիրոջը տալիս էր բերքի 1/5 մասը՝ վարձակալած հողի դիմաց։ Սակայն շատ հաճախ ֆեոդալին էր պատկանում ոչ միայն հողը, այլև ջուրը, քաշող ուժը և

աներմացուն։ Նման գեղքերում գյուղացին ֆեռդալին տալիս էր բերքի 2/5 մինչև 4/5 մասը։ Օրինակ, Մերվաշտի, Շիրազի, Ֆիրուզաբադի շրջաններում գյուղացիները հողատիրոջն էին տալիս բերքի 2/3 մասը, Ջավականում՝ 1/2-ը²⁵։

Ապրանքային տնտեսության զարգացմանը զուգընթաց բնամթերային ռենտային փոխարինելու էր գալիս դրամականը, որի շափերն անընդհատ աճում էին։ Ընդհանուր առմամբ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բավականին դանդաղ էր ընթանում։ Չնայած առեւտրային հողագործության որոշ աշխուժացմանը, այն դեռևս չէր գերիշխում գյուղատնտեսության մեջ, իսկ ապրանքային արտադրանքի բաժինը տնտեսությունների ընդհանուր արտադրանքում այնքան էլ մեծ չէր։

Ինչպես նշում է Շ. Թաղիևան «...գյուղատնտեսության ապրանքայնացման գործընթացը տեղական հայրենական արդյունաբերության հետ փոխադարձ կապի բացակայության պատճառով ընթանում էր միակողմանիորեն, արդյունաբերություն, որի զարգացումն ընթանում էր ավելի դանդաղ, քան ընդհանուր առմամբ հողագործության և գյուղատնտեսության զարգացումը»²⁶։

XIX դարի վերջին XX դարի սկզբին իրանում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն օբյեկտիվ նախադրյալներ էր ստեղծում ազգային ֆաբրիկագործարանային արդյունաբերության առաջացման համար, երկրում տեղի էր ունենում կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթաց, առեւտրադրամային կապիտալի ներկայացուցիչների ձեռքում խոշոր միջոցներ էին կուտակվում։ Քայլքայլած արհեստավորները և մասնավոր հողատիրության զարգացման հետեւանքով ունեղրկված գյուղացիները ժամանակակից ֆաբրիկագործարանային արդյունաբերության զարգացման համար ազատ քանվորական ուժի զգալի բազա էին ստեղծում։ Իրանն ուներ նաև հարուստ բնական ռեսուրսներ։

Մյուս կողմից, դեռևս անցյալ դարի սկզբին իրանական տնամնագործական արդյունաբերության տարրեր ճյուղերում

արդեն գոյցություն ունեին կապիտալիստական ապրանքային-արտադրության սաղմեր²⁷:

Սակայն Իրանի ռեալ սոցիալ-անտեսական և քաղաքական-պայմանները չեին նույստում ազգային արդյունաբերության զարգացմանը: Ավելին, դրանք գգալի շափով խոշընդոտում էին կապիտալիստական ուղղով երկրի առաջընթաց զարգացումը: Կապիտալիստական ձեռնարկատիրության առաջին անհրաժեշտ պայմանի՝ վաճառականի անծի և գույքի անձեռնմխելիության, ինչպես նաև անհրաժեշտ հումքային և էներգետիկ բաղայի, ժամանակակից փոխադրամիջոցների բացակայությունը, առևտրական կապիտալի դանդաղ փոխարկումն արդյունաբերականի, նրա սերտ կապը վաշխառության և հողի հետ, Իրանի բաղաքական ուայմանները կանխորոշեցին արդյունաբերության բնագավառում կապիտալիստական հարաբերությունների զարգացման դանդաղ տեմպերը: Այս ամենի հետևանքով անցյալ դարի վերջին Իրանում բացակայում էր ժամանակակից ֆարրիկագործարանային արդյունաբերությունը:

XIX դարի վերջի XX դարի սկզբի Իրանի սոցիալ-տնտեսական պատմության բոլոր հետազոտողները համամիտ են այն բանում, որ Իրանի արդյունաբերությունն ընդհանուր առմամբ տնայնագործական բնույթ էր կրում:

«Պարսկաստանի վերամշակող արդյունաբերությունը դեռևս գտնվում է զարգացման ստորին աստիճանում և իր բնույթով կարող է դասվել տնայնագործականի շարքը, որտեղ աշխատողն ընտանիքն է, իսկ սակավաթիվ դեպքերում արհեստավորների ամբողջ միավորումներ՝ նրանց միջև աշխատանքի հատակ բաժանմամբ», — նշում է Պ. Ռիտիխը²⁸:

Արդյունաբերության վիճակը մոտավորապես նույն կերպ են բնութագրում նաև ավելի ուշ շրջանի հեղինակները: Լ. Սոբոցինսկին 1913 թ. հրատարակած իր աշխատության մեջ նշում է: «Խոսելով Պարսկաստանի արդյունաբերության մասին, հարկ է նշել, որ այն դեռևս գտնվում է տեխնիկական շատ ցածր մակարդակի վրա և դեռևս դուրս չի եկել տնայ-

նագործական և արհեստավորական արտադրության փուլ-
ից»²⁹:

Մեկ այլ ուսումնասիրող՝ Գ. Տեր-Ղուկասովը նույնպես
վկայում է, որ «Պարսկաստանում բառի նեղ իմաստով ֆար-
սիկագործարանային արդյունաբերություն չկա...», և որ
ավելի ճիշտ կլիներ այն դասել տնայնագործականի շարքը,
որտեղ հենց իրենք՝ տերերը հանդիսանում են նաև աշխա-
տողներ³⁰:

Իրանական տնայնագործական արդյունաբերության
ամենազարգացած ճյուղը գորգագործությունն էր, որի հիմ-
նական կենտրոններն էին Ֆարսը, Խորասանը, Աղրբեջանը,
Քաշանը, Քիրմանը և Քուրդիստանը: Այդ շրջաններում գործ-
ված գորգերը լայն հռչակ էին վայելում ինչպես Իրանում,
այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ճյուղի լայն տարած-
ման մասին է խոսում նաև այն փաստը, որ գորգագործու-
թյամբ զբաղվում էին ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև
գյուղական բնակավայրերում:

Առանձնապես հայտնի էին Սուլթանարադի գորգերը,
որոնք մեծ քանակությամբ արտահանվում էին արտասահման:
Զ. Քերզոնի վկայությամբ վերոհիշյալ շրջանի 150 գյուղե-
րում հաշվվում էր մոտ 5 հազար գորգագործական հաստոց³¹:
Գորգագործությամբ զբաղվում էին հիմնականում կանայք և
երեխաները: Արհեստագործության այս ճյուղը մեծ տարա-
ծում ուներ նաև քոչվոր և կիսաքոչվոր ցեղերի շրջանում:

Հատկանշական է, որ հենց գորգագործության մեջ, մյուս
ճյուղերից ավելի վաղ, հանդես եկան կապիտալիստական ապ-
րանքային արտադրության սաղմերը: Ճյուղի արտադրանքի
հիմնական մասը հանվում էր շուկա և միայն չնշին մասն էր
պահպան սեփական կարիքների համար Արդեն անցյալ դարի
վերջին գորգագործության բնագավառում հանդես եկան ցրված
մանուժակտուրաների և փոքրիկ ֆարբիկաների տիպի առաջին
ձեռնարկությունները: Օրինակ, XX դարի սկզբին Մաշհադում
գործում էին 150 գորգագործական ֆարբիկաներ և արհես-
տանոցներ: Դրանց մի մասն ուներ մինչև 100 աշխատող³²:

Իրանական գորգերի պահանջարկը համաշխարհայիշ-
շուկայում մշտապես աճում էր: Հիմնական գնորդներն ԱՄՆ-ի
և Անգլիայի առևտրական ընկերություններն էին, որոնք
իրենց ներկայացուցիչներն ունեին իրանի գորգագործական
բոլոր խոշոր կենտրոններում: Սակայն օտարերկրյա կապի-
տալի ներթափանցումն այս բնագավառ ունեցավ նաև բացա-
սական հետևանքներ: Բնական ներկերի համեմատությամբ
էժան անիլինային ներկերի օգտագործումը զգալի շափով ազ-
դում էր իրանական գորգերի որակի վրա: Մյուս կողմից, ժա-
մանակի ընթացքում իրանական նախշերը դուրս էին մզվում
և վրոպականով, ինչն ուղղակի վտանգ էր ներկայացնում իրա-
նական գորգերի յուրահատկության համար: Այդպիսի նախշե-
րով գորգեր պատվիրում էին օտարերկրյա ընկերություննե-
րի գնորդ-գործակալները, որոնք սերտորեն կապված էին
արտագրողների հետ:

Իրանական տնայնագործական արտադրության ավան-
դական զարգացած ճյուղերից էր ջուլհակությունը: Իրանա-
կան ջուլհակների արտադրանքը լայն հոշակ էր վայելում նաև
Իրանի սահմաններից դուրս: Հատկապես բարձր էին գնա-
հատվում մետաքսյա գործվածքները, որոնց արտադրության
հիմնական կենտրոններն էին Ռաշտը, Քաշանը, Եղդը, Թավ-
րիզը, Սպահանը և Մաշհադը: Սակայն XIX դարի 60-ական
թվականների կեսերից Իրանում սկսված շերամաբուծության
երկարատև ճնշաժամը կործանարար հետևանքներ ունեցավ
մետաքսագործության համար: Մետաքսյա գործվածքների
արտադրությունը կտրուկ անկում ապրեց, իսկ մետաքսա-
գործական արհեստանոցները փակվեցին: Եթե անցյալ դա-
շի 60-ական թվականներին Գիլանում մետաքսագործության
մեջ զբաղված էր 30 հազար աշխատող³³, ապա 70-ական
թվականների վերջին Գիլանի գլխավոր քաղաք Ռաշտում
կար ընդամենը 6 մետաքսագործական արհեստանոց³⁴:

Համանման պատկեր էր տիրում նաև մետաքսագործա-
կան արտադրության մյուս կենտրոններում: Զ. Քերզոնի
վկայությամբ, Եղդում, որտեղ «մետաքսագործությունը նախ-
կինում տեղական արդյունաբերության զլխավոր ճյուղն էր»,

XIX դարի կեսերին գործում էին 1.800 մետաքսագործական արհեստանոցներ 9 հազար աշխատողներով³⁵:

Սակայն վերոհիշյալ ճգնաժամի պատճառով դրանց մեծ մասը փակվեց: Միայն դարավերջին այդ ճյուղն սկսեց կրկին վերելք ապրել: Ն. Շետալովի տվյալներով դարի վերջին այստեղ արդեն գործում էր մետաքսագործական 400 արհեստանոց 2 հազար հաստոցով՝³⁶:

Մետաքսագործական արտադրության մյուս կարևոր կենտրոնը Մաշհադն էր: Սակայն XIX դարի կեսերին այստեղ գործող 1200 մետաքսագործական հաստոցներից³⁷ դարի վերջին աշխատում էր 650-ը³⁸:

Մինչև դարի վերջը մետաքսեղինը զգալի տեղ էր դրավում իրանի արտահանման մեջ, սակայն ելքուղական Երկերոների հետ առևտրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց արագորեն աճում էր արտասահմանյան մետաքսյա գործվածքների ներմուծումը, որի հետևանքով իրանում նույնատիպ ապրանքների արտադրությունն աստիճանաբար կրճատվում էր:

Մեծ հեղինակություն էին վայելում իրանական շալերը, որոնց զգալի մասն արտահանվում էր: Լավագույն տեսակներն արտադրվում էին Քիրմանում, Քաշանում և Եղում: Փ. Սայքսի տվյալներով, անցյալ դարի վերջին Քիրմանում կար մոտ 3 հազար հաստոց, որոնք արտադրում էին շուրջ 300 հազար թումանի շալ³⁹:

Մաշհադում ևս անցյալ դարի վերջին կար շալ արտադրող 320 հաստոց⁴⁰:

Իրանի շատ շրջաններում զարգացած էր բամբակյա և բրդյա գործվածքների արտադրությունը: Առանձնապես հայտնի էին Սպահանի, Եղդի, Բորուցերդի գործվածքները: Բարոն Բողեն, որը XIX դարի կեսերին այցելել էր Իրան, նշում է, «Յորուշերդը Փարսկաստանի իսկական Մանշեստրն է, այնտեղ կա բամբակյա գործվածքի ավելի քան 50 ֆարթիկա»⁴¹:

Տեքստիլ արդյունաբերության մյուս կարևոր կենտրոն Եղում, մեր դարի սկզբին գործում էին բամբակյա գործ-

վածքի շուրջ 800 արհեստանոցներ Հ հազար հաստոցներով, որոնց տարեկան արտադրանքը կազմում էր մոտ 100.000 թուման⁴²: Դրանք հիմնականում փոքր ձեռնարկություններ էին 2—3 հաստոցներով, որոնցում կիրավում էր վարձու աշխատանք:

Ապահանում ևս դարասկզբին կար բամբակյա գործվածք արտադրող ավելի քան 2 հազար հաստոց⁴³:

Սակայն արտասահմանյան տեքստիլ ապրանքների անընդհատ ուժեղացող ներմուծումը միակողմանի բացասական հետևանքներ ունեցավ տեղական տեքստիլ արդյունաբերության զարգացման համար: Դարի սկզբից այս ճյուղի բոլոր խոշոր կենտրոններում զգալի անկում է նկատվում: Այն հատկապես ակնհայտ էր Սպահանում, Քաշանում, Թավրիզում, Եղղում, Թիրմանում և Մաշհադում⁴⁴:

Քաղաքացին արհեստագործության մեջ կարեոր տեղ էր գրավում կաշեգործությունը: Արտադրության այս ճյուղը բավարարում էր հիմնականում շուկայի պահանջարկը և հենվում էր տեղական հումքի վրա: Անցյալ դարի վերջից այստեղ ևս նկատելի էին կապիտալիստական արտադրության սաղմեր: Տարածված էր հատկապես ցրված մանուֆակտուրան: Հաճախ խոշոր վաճառականները գնում էին կաշվի հումքը և քաֆանում արհեստավորներին՝ վերամշակելու համար: Սակայն այս ճյուղը ևս զերծ չմնաց տնայնագործական արդյունաբերության մեջ նկատվող ընդհանուր ճգնաժամից: Լ. Սորոցինսկու տվյալներով, 1909 թվականին Համադանում կար սեկի 400 ֆաբրիկա և արհեստանոց, մինչդեռ 1912 թ. մնացել էր ընդամենը 300, Մաշհադում 500 արհեստանոցներից շարունակում էին արտադրանք տալ 50-ը⁴⁵:

Քաշանում, Սպահանում, Համադանում և այլ քաղաքներում զարգացել էր պղնձյա իրերի արտադրությունը: Թիրմանը հոշակված էր զինագործ վարպետներով⁴⁶, Մաշհադը, Թավրիզը, Սպահանը և Շիրազը՝ ոսկերիշներով: Իրանի շատ քաղաքներում զարգացած էին բրուտագործությունը, խեցեգործությունը, ճենապակուց, հախճապակուց պատրաստված իրերի արտադրությունը:

Ամփոփելով վերևում ասվածը, կարելի է նշել, որ ՀԽ
դարի վերջից իրանական տնայնագործական արդյունագե-
րության ավանդաբար զարգացած ճյուղերում սկսվել . էր
երկարատև անկման ժամանակաշրջան։ Արտասահմանյան մե-
տաղյա, տեխստիլ և այլ արդյունաբերական ապրանքներն աս-
տիճանաբար հեղեղում էին իրանական շռւկան։ Չդիմանալով
Արևմտյան Եվրոպայից և Ռուսաստանից ներմուծվող էժան
արդյունաբերական ապրանքների մրցակցությանը արհես-
տանոցներն ու ֆարբիկաները փակվում էին, իսկ արհեստա-
վորները՝ սնանկանում։ Այդ էր պատճառը, որ անցյալ դարի
վերջերին իրանում գոյություն ունեցող կապիտալիստական
արտադրության սաղմերը հետագա զարգացում չստացան։
Արևմտանեվրոպական երկրների և ԱՄՆ-ի նորմալ սոցիալ-
տնտեսական պայմաններում կապիտալիզմն անցավ զար-
գացման երեք աստիճան։ ստորին ձեւերից՝ արհեստավորա-
կան արհեստանոց, մանուֆակտուրա դեպի կապիտալիստա-
կան արտադրության բարձրագույն ձևը՝ ֆարբիկագործարա-
նային արդյունաբերություն։ Սակայն իրանում, ինչպես նաև
Արևելքի մի շարք այլ երկրներում, ուսումնասիրվող ժամանա-
կաշրջանում կապիտալիզմի զարգացումը միջին օդակից՝ մա-
նուֆակտուրայից, այն կողմ չանցավ։ Ֆարբիկագործարա-
նային տիպի ձեռնարկությունների ստեղծման առանձին փոր-
ձերը, որպես կանոն, ձեռնարկվում էին «վերկից»՝ ազգային
կամ օտարերկրյա առևտրագրամական կապիտալի ներկա-
յացուցիչների կողմից։ Սակայն բոլոր այդ փորձերը վաղ թե
ուշ ավարտվում էին ձախողմամբ, ինչը պայմանավորված էր
ինչպես իրանի առանձնահատուկ սոցիալ-տնտեսական պայ-
մաններով, այնպես էլ իմպերիալիստական տերությունների
գաղութային քաղաքականությամբ։

Անցյալ դարի վերջից իմպերիալիստական խոշոր տերու-
թյունների միջև ուժեղանում է պայքարն աշխարհի տնտեսա-
կան բաժանման և տերիտորիալ վերաբաժանման համար։
Ասիայի և Աֆրիկայի թույլ զարգացած երկրները դառնում են
տնտեսական ու քաղաքական կատաղի պայքարի թատերա-
բեմ, որը հաճախ ավարտվում էր այդ երկրների գաղութաց-

մամբ։ Սակայն, բնութագրելով իմակերիալիզմի գաղութային համակարգը, Վ. Ի. Լենինը գրում է, որ «այդ դարաշրջանի համար տիպական են ոչ միայն երկրների երկու հիմնական խմբերը՝ գաղութատեր երկրներն ու գաղութիները, այլև քաղաքականացես ձեւականորեն անկախ, բայց իրականում ֆինանսական և դիվանագիտական կախման ցանցերում կաշ-կանդված կախյալ երկրների բաղմազան ձեւեր»⁴⁷։

Նման բնորոշումը լիովին կարելի է կիրառել XIX դարի վերջի XX դարի սկզբի իրանի վերաբերյալ։

Օտարերկրյա կապիտալի ներթափանցումն իրան սկսվել էր գեռես անցյալ դարի առաջին կեսին։ Սակայն այն ժամանակ իրանը գեռես պահպանում էր իր տնտեսական ու քաղաքական ինքնուրույնությունը։ Ավելին, մինչև դարի կեսերն իրանը հաճախ բացահայտորեն հանգես էր գալիս եվրոպական տերությունների գեմ։ Սակայն 1826—1828 թվականների ռուս-իրանական և, հատկապես, 1856—57 թվականների անգլո-իրանական պատերազմներում կրած պարտություններից հետո սկսվում է իրանի այսպես կոչված «խաղաղ» նվաճման և նրա կիսազաղութի վերածման ժամանակաշրջանը, որը XX դարի սկզբին ավարտվում է նրա բաժանմամբ։

Դեռևս անցյալ դարի սկզբին նախ Ռուսաստանը և Անգլիան, ապա նաև ԱՄՆ-ը և Գերմանիան Իրանին փաթաթեցին անիրավահայտապես պայմանագրեր, որոնցով իրավարանորեն ձեւակերպեցին իրենց արտոնյալ վիճակն իրանում։ Դրան նպաստեց նաև կապիտուլյացիաների համակարգը, որն իրանի գաղութացման զիսավոր միջոցն էր։ Նրա ընձեռած արտոնություններից օգտվում էին նաև մյուս եվրոպական տերությունները, սակայն իրանում գերիշխանություն հաստատելու համար պայքարն ընթանում էր հիմնականում Անգլիայի և Ռուսաստանի միջև, որոնք այդ նպատակին հասնելու համար դիմում էին տնտեսական և քաղաքական բարեկացման ամենատարբեր ձեւերին։ Իմակերիալիստական տերությունների գաղութային քաղաքականության համալիրում առանձնահատուկ տեղ էին գրավում բաղմաթիվ կոն-

ցեսիաները, որոնք կապիտալ ներդրումների կարևոր ձև էին: XIX դարի 60-ական թվականներից սկսած նախ Անգլիան, ապա և Ռուսաստանը Իրանից ստացան առաջին կոնցեսիաներ՝ մասնավորապես Հեռագրային ուղիների անցկացման համար: Այս ուղղությամբ առանձնահատուկ ակտիվություն էին ցուցաբերում անգլիական իմպերիալիստները, որոնք Իրանը դիտում էին որպես պաշտպանական պատճեզ գեպի Հնդկաստան տանող ճանապարհին:

1872 թվականին բրիտանահպատակ բարոն Ջուլիուս գը Ռեյտերը շահական կառավարությունից 70 տարի ժամկետով կոնցեսիա ստացավ, որը նրան երկաթուղային շինարարության, նավթային և այլ հանքային հարստությունների, անտառային տաքածությունների շահագործման, ոռոգիչ կառուցյների շինարարության մենաշնորհ իրավունք էր տալիս: Այդ կոնցեսիան, փաստորեն, Իրանի տնտեսական ոհսուրսները լիովին դնում էր անգլիական կապիտալի հսկողության տակ: Սակայն Ռեյտերի պլաններն այդպես էլ շիրականացան, որովհետև նրան շնչացողվեց նախօրոք համաձայնեցված վեցամսյա ժամկետում հավաքել անհրաժեշտ գումարը: Մյուս կողմից, ուստական գիվանագիտությունը ճնշում գործադրեց շահի վրա և վերջինս ստիպված էր չեղյալ հայտարարել կոնցեսիան: Սակայն 1889 թվականին Ռեյտերը որպես փոխհատուցում շահական կառավարությունից ստացավ Շահնշահական բանկի ստեղծման կոնցեսիա: Կարճ ժամանակում վերոհիշյալ բանկը գարձավ Իրանում բրիտանական իմպերիալիզմի գաղութային քաղաքականության գըլխավոր լծակներից մեկը: Բանկն իր գործունեությունը շերսահմանափակում զուտ ֆինանսական գործառնությամբ, քանի որ լայն լիազորություններ ուներ երկրի առևտրական և արդյունաբերական գործերում: Այն բաժանմունքներ և գործակալություններ ուներ Իրանի բոլոր խոշոր քաղաքներում՝ Թեհրանում (կենտրոն), Աբադանում, Բանդար Գյազում, Քիրմանում, Երազում, Սպահանում, Թերմանշահում, Եղղում, Բուշիրում, Թավրիզում, Ռաշտում, Էնզելիում, Ղաղվինում և այլուր⁴⁸, իր հսկողության տակ պահելով երկրի ֆի-

նանսները: Բանկն ուներ նաև դրամահատարանին անսահմանափակ քանակությամբ արծաթի մատակարարման և քանկատոմսերի բաց թողման մենաշնորհ իրավունք: Փաստութեն, տնօրինելով պետական հաշիվները և վերահսկելով դրամահատարանը, բանկը սահմանում էր իրանական դրամի կուրսը, ներթափանցում առևտրի բնագավառ և իր գործունեությամբ նպաստում էր երկրի ֆինանսատնտեսական վիճակի հետագա վատթարացմանը:

Իրանում բրիտանական իմպերիալիզմի կարևորագույն նվաճումներից մեկը դը Արարի կոնցեսիան էր: 1909 թվականին դրա հիման վրա ստեղծվեց Անգլո-իրանական նախային բնկերությունը, որն սկսեց անխնա ձեռվ շահագործել հարավ-արևմտյան Իրանի նավթային հարստությունները, հսկայական շահույթներ ստանալով դրանից:

Իրանում բրիտանական իմպերիալիզմի գլխավոր մըրցակիցը ցարական Ռուսաստանն էր: Իրանի հարևանությունը, ապրանքների տեղափոխման համեմատական հարմարությունը կանխորոշեցին Ռուսաստանի համար իրանական շուկայի կարևորությունը և ոռուսական արդյունաբերական ապրանքներին հնարավորություն տվեցին հաջողությամբ մրցել արևմտահվորական արտադրության ապրանքների հետ: Զգալի շափով հենց այս գործոններով էր պայմանափորված ռուս-իրանական առևտրի արագ զարգացումը: Հատկապես սրբնթաց էր աճում ռուսական ներմուծումը: Կես դարի՝ 1840—1890 թվականների ընթացքում իրանական ապրանքների արտահանումը Ռուսաստան աճել էր մոտավորապես 3,5 անգամ, մինչդեռ ռուսական ներմուծումն իրան ավելացել էր ավելի քան 12 անգամ: Նույն ժամանակահատվածում ռուս-իրանական առևտրի ընդհանուր ծավալը 4.117.018 ռուբլուց աճել և հասել էր 21.679.108 ռուբլու⁴⁹:

Զնայած ռուսական ներմուծման ավելի արագ աճին, ընդհուպ մինչև XIX դարի վերջը Ռուսաստանն իրանի հետ առևտրական հաշվեկշռում բացասական հաշվեմնացորդ ուներ, նման վիճակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մինչև անցած դարի վերջը Ռուսաստանի զարգացող

արդյունաբերությունը դժվարությամբ էր դիմանում արեւ-
մտահվողական ասլրանքների մրցակցությանը, մինչդեռ
իրանից արտահանվող գյուղատնտեսական հումքը Ռուսաս-
տանում սպառման լայն շուկա ուներ: Զի կարելի անտեսել
նաև այն, որ իրանը Ռուսաստանի վրայով վարում էր նաև
տարանցիկ առևտուր՝ Ռուսաստան արտահանվող ապրանք-
ների մի մասը հետազայում վերաարտահանվում էր Արև-
մտյան Եվրոպա: Ռուսաստանում արդյունաբերության զար-
գացմանը զուգընթաց վերջինս աստիճանաբար դարձավ Իրա-
նի գլխավոր առևտրական գործընկերն ինչպես արտահան-
ման, այնպես էլ ներմուծման բնագավառում: Օրինակ,
1909/10 տնտեսական տարում Ռուսաստանին բաժին էր ընկ-
նում Իրանի արտահանման 70,6 և ներմուծման 51,2 տոկո-
սը, այն դեպքում, եթե Անգլիայի (Հնդկաստանի հետ միա-
սին) բաժինը կազմում էր համարատասխանաբար 8,4 և 34
տոկոս⁵⁰:

Ուշագրավ է, որ մեր դարի սկզբին ևս ուսւ-իրանական
առևտրական հաշվեկշռում պահպանվում էր արտահանման
և ներմուծման մոտավոր հավասարակշռությունը, մինչդեռ
Անգլիան Իրանը դիտում էր որպես սեփական արդյունաբե-
րական ապրանքների սպառման շուկա: Պատահական չէ, որ
անգլիական (Հնդկաստանի հետ) արտահանումն Իրան մոտ
5 անգամ գերազանցում էր այդ երկրից նրա ներմուծումը⁵¹:

Արտաքին առևտուրն Անգլիայի և Ռուսաստանի կողմից
Իրանի տնտեսական ստրկացման կարևորագույն, բայց ոչ
միակ միջոցն էր: Իրանի վրա տնտեսական և քաղաքական
հնշում գործադրելու կարևոր լծակներից մեկն արտաքին փո-
խառություններն էին: XIX դարի 90-ական թվականներից
շահական կառավարությունը փոխառություններ ստանալու
նպատակով պարբերաբար դիմում էր մերթ Անգլիային, մերթ
Ռուսաստանին: Սակայն այդ փոխառությունները ոչ միայն
չէին նպաստում երկրի տնտեսական զրության և ֆինանսա-
կան վիճակի բարելավմանը, այլ, ընդհակառակը, ջլատում
էին երկրի ֆինանսները, այն դնում Անգլիայի և Ռուսաստա-

նի լիակատար հսկողության տակ: Իրանին տրամադրված փոխառությունները բացահայտ գաղութային բնույթ էին կրում: Որպես կանոն, դրանք տրվում էին պետական եկամուտների որոշակի աղբյուրների, ամենից առաջ մաքսատուրքերից ստացվող եկամուտների զիմաց: Հարավային մաքսատների եկամուտները երաշխիք էին ծառայում անդրիական փոխառությունների համար, հյուսիսային մաքսատներինը՝ ոռուականի: Արդեն XX դարի սկզբին արտաքին փոխառությունների զիմաց վճարումները հսկայական գումար էին կազմում և ծանր բնույթին էին իրանի տնտեսության համար: Պետական եկամուտների գլխավոր աղբյուրը կազմող մաքսատուրքերը ծախսվում էին հիմնականում արտաքին փոխառությունների տոկոսները վճարելու համար, իսկ մնացորդը բաշխվում էր շահի և նրա մերձավորների միջև:

Իրանի բոլոր մաքսատների կառավարչի վկայությամբ «...1898/99 թթ. մաքսատուրքերի ողջ մնացորդը ֆինանսների նոր նախարարի կողմից արդեն բաշխվել է շահի մերձավորների, նրա հարեմի և ընդհանրապես շահական արքունիքի միջև... և ներկայումս այդ մաքսերից մնացել է ընդհանունը 14 թուման...»⁵²:

Արտաքին փոխառությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ դրանք, որպես կանոն, շէին ներդրվում արտադրական ոլորտ և ոչնչով շէին նպաստով իրանի տնտեսական զարգացմանը, այլ բավարարում էին շահի և մեծատոհմիկների պահանջները: Ավելին, որոշ փոխառություններ ընդհանրապես երկիր շէին մտնում, այլ ծախսվում էին շահի ճանապարհորդությունների կամ նախկին փոխառությունների տոկոսները վճարելու համար:

Վերոհիշյալ երկրներն իրանին փոխառություններ տրամադրելով առաջ էին բաշում բազմաթիվ քաղաքական պահանջներ, որոնք ավելի ու ավելի էին սահմանափակում իրանի տնտեսական ու քաղաքական ինքնուրուցւնությունը: Այսպես, 1900 թվականին ցարական Ռուսաստանն Իրանին տրամադրեց 22,5 մլն. ռուբլու փոխառություն, որի համար

Երաշխիք էին ժառայում իրանական բոլոր մաքսատների՝ բացառությամբ հարավայինների, եկամուտները: Իրանը պարտավոր էր այդ փոխառության հաշվին մարել Շահնշահական բանկի փոխառության պարտքը: Սակայն իրանի համար առանձնապես ստրկացուցիչ էր այն, որ նա պարտավորվում էր այդուհետ առանց Ռուսաստանի համաձայնության փոխառությունների համար շղիմել այլ երկրների, ինչն իրանի քաղաքական անկախության էական սահմանափակում էր:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իրանի արտաքին պարտքը հին փոխառություններից մնացած պարտքի մասնակի մարման հետ կազմում էր 6,6 մլն. ֆունտ ստեղնինգ, որից 4,6 մլն. Ռուսաստանին և 2 մլն. Անգլիային:

Ռուսաստանը ևս բազմաթիվ անիրավահավասար կոնցեսիաներ էր փաթաթել իրանին, ձգտելով նրա գաղութային ստրկացման հարցում ևտ շմնալ բրիտանական իմպերիալիզմից: Անգլիայից անմիջապես հետո Ռուսաստանը նույնպես շահական կառավարությունից ստացավ հեռազրային ուղիների անցկացման կոնցեսիաներ:

Դարավեհը իրան է ներթափանցում ուսւական բանկային կապիտալը: Շահնշահական բանկի ստեղծումից անմիջապես հետո՝ 1890 թվականին ուսւահպատակ Յակով Պոլյակովը շահական կառավարությունից ստացավ շաշվավարկանին բանկը ձգտում էր ակտիվորեն ներազգել իրանի հյուսիսային շրջանների փինանսատնտեսական կյանքի վրա և ամեն կերպ խոշընդուռել Շահնշահական բանկի ազգեցության հետագա աճը:

Բանկի կարևորագույն խնդիրներից մեկը իրանում ուսւական արդյունաբերական ապրանքների համար շուկայի ապահովումն էր: Այն ստեղծման օրից դարձավ իրանում Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական ազգեցության ուժեղացման կարևոր գործոն: Պատահական չէ, որ բանկը մըշ-

տապես զգում էր ցարական կառավարության և մասնավորաւելիս ֆինանսների նախարարության աջակցությունը: Ավելին, 1898 թվականին վերոհիշյալ բանկի բոլոր արժեթղթերը հանձնվեցին Ռուսաստանի պետական բանկին և այն, փաստորեն դարձավ վերջինիս բաժանմունքը:

Հաշվավարկային բանկի ստեղծման հետ համարյամիաժամանակ՝ 1891 թվականին Լազար Պոլյակովը շահական կառավարությունից «Պարսկական ապահովագրական և տրանսպորտային» ընկերությունն կազմակերպելու կոնցեսիա ստացավ: Կոնցեսիայի պայմանների համաձայն ընկերությանն էր պատկանում ողջ Իրանում ապահովագրության կազմակերպման և բնութերի տեղափոխման մենաշնորհ իրավունքը: Կոնցեսիայի ժամկետը՝ 75 տարի էր, ընկերության հիմնական կապիտալը կազմում էր 2 մլն. ֆրանկ:

Չնայած ուսումնասիրվող ժամանակաշրջանում ոռուիրանական առևտորի ծավալն անշեղորեն աճում էր, իսկ ոռու ձեռնարկատերերը շահավետ կոնցեսիաներ էին ստանում, այնուամենայնիվ Ռուսաստանի առևտրաարդյունաբերական շրջանների համար գեռես շափազանց դժվար էր առանց պետական օգնության մրցել Անդիայի հետ: Ահա թե ինչու ցարական կառավարությունը մշտապես ակտիվորեն աջակցում էր ոռու ձեռնարկատերերին և Իրանում զգալի ուղղակի ծախսեր էր կատարում: Դեռևս 1905 թվականին Ռուսաստանի և Իրանի ապագա հարաբերությունների հարցին նվիրված Հատուկ խորհրդակցությունն արձանագրել էր, որ Իրանում ոռուսական պետական գանձարանի ուղղակի ծախսերը հսկայական շափերի են հասել՝ 69.526. 918 ռուբլի⁵⁴:

Հաջորդ տարի այդ դումարն արդեն կազմում էր 72.204. 754 ռուբլի⁵⁵: Անգլիայի և Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական մրցակցությունը մեծ շափով արգելակում էր Իրանի սոցիալ-տնտեսական զարգացումը: Ասվածի ցայտով վկայությունն Իրանում երկաթուղային շինարարության հարցում այդ երկրների վարած քաղաքականությունն է: Ցարական կառավարությունը վախենում էր, որ Ռուսաստանի տնտեսա-

կան հետամնացության պայմաններում երկաթուղիների կառուցումը կհեշտացնի անզլիական ապրանքների ներթափանցումն իրանի հյուպիսային շրջաններ, որոնք Ռուսաստանի գերիշխանության ոլորտն էին: Անզլիայի քաղաքականությունն այս հարցում արմատական փոփոխությունների էր ենթարկվել: Մինչև Սուեզի ջրանցքի բացումն Անզլիան շահագրգությած էր անդրիբանյան երկաթուղագծի կառուցմամբ, քանի որ այն կարճ ճանապարհ էր բացում դեպի Հնդկաստան: Վերոհիշյալ ջրանցքի բացումով Անզլիան Հնդկաստանի հետ կապող ծովային հարցմար ուղի ստացավ և կողցրեց հետաքրքրությունն իրանում երկաթուղիների կառուցման նկատմամբ: Ավելին, նա սկսեց ամեն կերպ խոշընդոտել անդրիբանյան երկաթուղու կառուցմանը, նպատակ ունենալով թույլ շտալ Ռուսաստանի ելքը Հնդկական օվկիանոս: Նույն ժամանակ իրանում Ռուսաստանի ֆինանսատնտեսական քաղաքականության հարցին նվիրված Հատուկ խորհրդակցությունը որոշեց «Հակազդել Իրանում երկաթուղային շինարարության զարգացմանը»⁶⁶:

Այսպիսով, ցարական Ռուսաստանի և իմակերիալիստական Անզլիայի գաղութային քաղաքականության հետեանքով, իրանը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, փաստորեն, զրկված էր երկաթուղիների կառուցման համարակորությունից:

XX դարի սկզբին անզլո-ռուսական մրցակցությունն իրանում ավելի սրվեց: Երկու իմակերիալիստական գիշատիչների միջև հակասությունները, երբեմն, թվում էին անլուծելի: Սակայն դարի սկզբին միշտզգային նոր իրազրություն էր ստեղծվել: Առաջին պլան էին մղվել անզլո-գերմանական հակասությունները: Երիտասարդ, բայց արագորեն առաջադիմող իմակերիալիստական գիշատիչը՝ Գերմանիան, աստիճանաբար դառնում էր բրիտանական իմակերիալիզմի զլիսավոր հակառակորդը:

Անզլո-գերմանական և ռուս-գերմանական հակասությունների հետագա խորացումն Անզլիային և Ռուսաստանին ստիպում էր համաձայնության ուղիներ փնտրել իրանի հար-

շում: Արդեն անցյալ դարի վերջին անգլիական կառավարող շրջանները ցարական կառավարությանն առաջարկում էին բաժանել Իրանը: Սակայն Ռուսաստանն այդ առաջարկության հետ համաձայնվեց միայն մեր դարի սկզբին: 1906 թվականին հրավիրվեց Անգլիայի հետ համաձայնության հարցին նվիրված Հատուկ խորհրդակցություն, որը սկզբունքութեն համաձայնություն տվեց Իրանի բաժանման դադարիարին: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա. Իզվոլսկին հիմնավորելով այդ որոշումը, հայտարարեց. «Հայետք է մոռանալ, որ մենք պետք է բնարություն կատարենք համաձայնության, որն ի վիճակի է հուսալիորեն ապահովել մեր շահերի թեկուզ մի մասը, և այնպիսի պայմաններում մըրցակցության միջն, որի գեպքում մենք վստահ չենք, թե մեզ սերտորեն վերաբերող հարցերը չեն լուծվի առանց մեզ և ի վնաս մեր բոլոր շահերի»^{57:}

1907 թվականի օգոստոսի 31-ին Անգլիայի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագրով իրավաբանորեն ձևակերպվեց Իրանի բաժանումն ազգեցության ոլորտների: Սակայն անգլո-ռուսական համաձայնության կնքումը լիովին շվերացրեց երկու երկրների միջև եղած հակասությունները և նույնիսկ դրանից հետո էլ նրանց տնտեսական ու քաղաքական մրցակցությունն Իրանում շարունակվում էր: Ցարական Ռուսաստանը տեր ու անօրինություն էր անում Իրանի հյուսիսային շրջաններում, Անգլիան՝ հարավում: Միևնույն ժամանակ երկու երկրներն էլ ակտիվորեն գործում էին շեզոր գոտում: Անգլիայի կառավարող շրջանները պատրաստ էին բաժանել նույնիսկ շեզոր գոտին, քանի որ վախենում էին նրանում ռուսական ազգեցության ուժեղացումից:

«Ակնհայտ է դառնում, որ ռուսները կընդլայնեն և կամրապնդեն իրենց ազգեցությունը շեզոր գոտում: Նման պայմաններում շեզոր գոտու հետագա գոյությունը շահավետ կլինի նրանց համար և ոչ շահավետ՝ մեզ համար: Անգլիայի դիրքերի թուլությունը կայանում է նրանում, որ ռուսները պատրաստ են օկուպացնելու Պարսկաստանը, իսկ մենք՝

ոշ», — գրում էր է. Գրեյը Պետերբուրգում անգլիական դեսպան Բյուկենենին⁵⁸:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ռուսաստանը և Անգլիան հակայական կապիտալ ներդրում՝ ներ էին կատարել Իրանում: 1913 թվականին Ռուսաստանի կապիտալ ներդրումներն այդ երկրում կաղմում էին 163.750.000ռուբրի (մոտավորապես 1005,4 մլն. դռան), Անգլիայինը՝ 2,7 մլն ֆունտ ստերլինգ (մոտ 597,5 մլն դռան)⁵⁹:

Նման խոչըր կապիտալ ներդրումները վերոհիշյալ տերույթումներին ստիպում էին կրքոտ կերպով պաշտպանել իրենց տնտեսական ու քաղաքական շահերն Իրանում: Առկայն եթե Անգլիայի և Ռուսաստանի նպատակներն այս հարցում հիմնականում համընկնում էին, ապա գաղութային քաղաքականության իրականացման ձևերն ու հղանակները զգալի շափով տարբերվում էին: Տնտեսապես ավելի հզոր և գաղութային քաղաքականության մեծ փորձ ունեցող անգլիական իմպերիալիզմը նախապատվությունը տալիս էր տընտեսական ստրկացման մեթոդին, մինչդեռ Ռուսաստանը տընտեսական ներթափանցմանը զուղընթաց ամրապնդում էր նաև իր քաղաքական ազգեցությունը: Ռուսական Հյուպատոսները զգալի քաղաքական կշիռ ունեին Հյուսիսային Իրանում, և Հաճախ տեղական կառավարողները նրանցից ավելի էին վախենում, քան կենտրոնական կառավարությունից: Նման վիճակը ոչ միայն իմպերիալիստական տերությունների տընտեսական ու քաղաքական աճող ճնշման, այլև կենտրոնական կառավարության թուլության և կամազլիկության արդյունք էր: Իրանի իշխող վերնախավն ավելի շատ մտածում էր իր անձնական, քան թե պետական շահերի մասին:

Դեռևս 1886 թվականին Գիլանում ռուսական Հյուպատոսը գրում էր. «Պարսկաստանի ներկայիս կառավարիչներն իրենցից ներկայացնում են ամեն տեսակ միջակությունից ցածր ապաշնորհներ, անհատների մի շարք, որոնց միակ ընդունակությունը և հատկությունը շափ չճանալող հարստացարությունն է»⁶⁰:

Նման քաղաքականության հետևանքով ծայրամասային կառավարիչների անկախությունն ավելի ու ավելի էր ուժեղաբերում։ Նահանգապետները միայն անվանապես էին ենթարկվում Թեհրանին, իսկ իրականում իրենց նահանգներում լիիրավ տերեր էին և շատ հաճախ հրաժարվում էին կենտրոնական կառավարության հրահանգները կատարել։

«Ներկայումս նահանգապետները, զգալով թէհրանյան կառավարության թուղթիունը և անկայունությունը, չնայած շահի բոլոր պահանջներին, սպասողական դիրք են գրավել և մինչև այժմ գավառների մայիսաթի մնացած մասը թէհրան չեն ուղարկում», — նշում է Վ. Կոսոգովսկին⁶¹:

Որոշ նահանգներ ոչ միայն մալիսաթ չէին վճարում, այլև կենտրոնական կառավարությունից լրացուցիչ միջոցներ էին պահանջում։ Օրինակ, Աստրաբագի նահանգն իր մալիսաթով շեր բավարարվում և այնուեղ լրացուցիչ միջոցներ էին ուղարկում Խորասանից և լրուս նահանգներից⁶²։

Իմպերիալիստական տերությունները բոլոր միջոցներով խրախուսում էին ժայռամասային կառավարիչների անջատողական ձգությունները, քանի որ դա թուլացնում էր Թեհրանի կառավարության դիրքերը և նրան ավելի զիջող դարձնում։ Անպիսան մշտապես աջակցում էր ռազմատեսնչ բախտիարների և լուրերի կառավարող վերնախավին, կաշառում էր ազգեցիկ խաներին և նրանց հրահրում կառավարության դեմ։

Իր հերթին Ռուսաստանը ևս մշտապես ուժեղացնում էր իր քաղաքական ազդեցությունը Հյուսիսային Իրանում։ Ռուսական կառավարող շրջաններում նույնիսկ մշակվում էին Ռուսաստանի Հօվանավորության ներքո ինքնավար Ադրբեջանի կազմավորման հեռուն գնացող պայմաններ։

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում
կազմված և 1914 թվականի մարտի 5-ին թվագրված Հա-
սուկ «Գրության» մեջ նշվում է. «Պարսկական գործերում
ժինք հավասարապես կարող էինք որոշ զիջումների հասնել
անզլիւցիներից։ Օրինակ, նրանք կարող էին պարտավորվել
շառչընդոտել Եռչա էդ-Դովլեի ցմա՞զ ղեկավարության և մեռ-

Հովանավորության տակ փաստորեն ինքնավար Ազգային կազմավորմանը, նրան միացնելով՝ նախկինում Ռուսաստանին պատկանող Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը»^{63:}
Այսպիսով, իմադերիալիստական տերությունների տնտեսական և քաղաքական գերիշխանությունը, կենտրոնական կառավարության թուլությունը և անզործությունը հանգեցրին նրան, որ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին իրանը վերածվեց տիպիկ կիսազաղութիւն: Օտարերկրյակապիտակը, որը սկզբնական շրջանում խթանեց երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, հետագայում դարձավ Իրանի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր խոշլնդուրը:

ԻՐԱՆԱՀԱՅ ԹՆԱԽԶՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՔԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

Իրանահայ համայնքը բազմագարյան և հարուստ պատմություն ունի: Դեռ վաղ ժամանակներից հայերը բազմակողմանի հարաբերություններ էին հաստատել այդ երկրի հետ: XV դարի վերջից Հայաստանը պայքարի թատերաբեմ է դառնում Մեֆյան Փարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: Այդ երկրների միջև անընդհատ պատերազմների հետևանքով երկիրն ամայանում էր, իսկ բնակչությունն՝ արտագաղթում: Հայ ժողովրդի համար հատկապես ծանր հետևանքներ ունեցան XVI դարի վերջի XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմները: Դրանցից մեկի ժամանակ՝ 1603 թվականին, Արքաս 1-ին շահը, թուրքական զորքերի ճնշման տակ նահանջելով, հրամայեց ամայացնել Հայաստանի գրավված տարածքները և տեղի բնակչությանը բռնագաղթեցնել իրան: Կարճ ժամանակամիջոցում երևանի, Նախիջևանի և Վասպուրականի շրջաններից մոտ 350 հազար մարդ բռնագաղթեցին և տեղափոխվեցին Սպահանի շրջակայքում, Մազանդարանում և Իրանի Հյուսիս-արևելուտքում: Դրա հետևանքով Իրանում ստեղծվեց բազմահազարանոց հայ համայնք, որը հետագա դարերի ընթացքում կարևոր դեր էր խաղում երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում:

Բազմաշարշար հայ ժողովրդի և մասնավորապես իրանահայերի համար բախտորոշ նշանակություն ունեցան XIX դարի սկզբի ոսւս-իրանական պատերազմները: 1828 թվականի փետրվարի 10-ին թուրքմենչայում ստորագրվեց հաշ-

տության պայմանագիր, որի համաձայն Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Ընդհանուր առմամբ հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող այս իրադարձությունը բացասական հետևանքներ ունեցավ իրանահայ համայնքի համար: Պայմանագրի համաձայն իրանում մնացած հայերն իրավունք ստացան վերաբնակվել Արևելյան Հայաստանում: Կարճ ժամանակում Թավրիզի, Մակվի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և այլ շրջաններից ավելի քան 45 հազար հայ տեղափոխվեց Արևելյան Հայաստան: Նման զգալի արտագաղթի հետևանքով իրանի հայ բնակչությունը նկատելիորեն կրճատվեց:

Պատերազմի ավարտից հետո իրանական կառավարությունը սկսեց հայերի նկատմամբ վարել բռնությունների և Հալածանքների քաղաքականություն՝ ի պատասխան պատերազմի ժամանակ ուստաներին ցույց տված օգնության: Նման քաղաքականությունը շարունակվեց ընդուապ մինչև 50-ական թվականների սկիզբը, ուստի պատահական չեր, որ տեղական իշխանությունների հետապնդումների և տնտեսական ծանր գրության պատճառով հայ բնակչության արտագաղթը Ռուսաստան շարունակվում էր մինչև XIX դարի կեսերը:

Թավրիզում բրիտանական հյուպատոսը 1844 թվականին գրում էր, որ Խոյի, Սալմաստի և Ուրմիայի շրջաններից մի քանի հազար հայեր մեկնել են Ռուսաստան: Նրանց մի մասը մի քանի ամսվա աշխատանքից հետո վերադարձել էր, մյուսները մնացել էին այնտեղ: Հյուպատոսի կարծիքով, եթե հայերին թույլտվություն տրվեր, ապա հնարավոր է, որ «...Սուլդուզի, Սոուչքուզաղի և Մարաղայի բոլոր հայերն անձնագրեր ձեռք բերեին և արտագաղթեին, փրկվելու համար այն ճնշումից, որին նրանք ենթարկվում էին այդ երկրում»¹:

Սակայն, չնայած հայերի մասսայական արտագաղթին, XIX դարի վերջին XX դարի սկզբին իրանում բավականին մեծաթիվ հայկական համայնք կար: Ցավոք, ուսումնասիրվող ժամանակականքը անդամագրել է հայերին և արտագաղթեին, փրկվելու համար այն ճնշումից, որին նրանք ենթարկվում էին այդ երկրում:

Հակագրական տվյալները, որի հետևանքով ինչպես իրանի բնակչության ընդհանուր թվաքանակի, այնպես էլ նրանում բնակվող ազգացին փոքրամասնությունների թվի վերաբերյալ հզգրիտ տվյալներ դժվար է հայթայթել: Պատահական չէ, որ տարրեր աղբյուրների հաղորդած տեղեկությունները շափառանց հակասական են, իսկ երեմն էլ իրարամերժ: Այսպիս, անգիտացի թումանի տվյալներով 1868 թվականին իրանում բնակվող հայերի թիվը 4.660 ընտանիք կամ 26.035 մարդ էր², ինչն ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը:

Մեկ ուրիշ հեղինակ՝ Մաքսիմովիչ-Վասիլկովսկին նշում է, որ XX դարի սկզբին իրանում հաշվվում էր 70 հազար քրիստոնյա, որի 45,7 տոկոսը կազմում էին հայ լուսավորիչները: Դա կազմում է մոտավորապես 32 հազար մարդ³:

Ե. Աբրահամյանի հաշվումներով, 1850 թվականին իրանում բնակվում էր շուրջ 110 հազար հայ⁴: Սակայն մեր կարծիքով, հեղինակի տվյալները զգալիորեն շափառանցված են:

Պաշտոնական վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում կարեռ նշանակություն են ձեռքբերում հայկական ազգյուրները: Դրանք հիմնականում հոգեկորականների հաշվետվություններ են, եկեղեցական վիճակագրություն կամ առանձին հեղինակների հավաքած վիճակագրական տվյալներ: Հայկական աղբյուրների տեղեկությունների համապրումն օտար և ոռուսական աղբյուրների հաղորդած տեղեկությունների հետ հնարավորություն է տալիս որոշ ընդհանրացումներ անել իրանի հայ բնակչության թվաքանակի և տեղաբաշխման հարցում:

1856 թվականին Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առաջնորդ սուրբ Թագիսուի հրամանով թեմում անցկացվեց հայ բնակչության հաշվագրում: Ըստ թվագրության, թեմի տարածքում (այն ընդգրկում էր իրանի ողջ տարածքը, բացառությամբ հյուսիսարևմտյան շրջանների) բնակվող հայերի թիվը կազմում էր 3.123 տուն կամ 19409 հոգի⁵: Նրանցից 2.493 ընտանիք կամ 15.533 մարդ բնակվում էր Զարմահալի, Փերիայի, Բուրվառի, Քեամարայի, Քեազագի,

Դյափլայի և Ղարաղանի շրջաններում։ Մնացածը քաղաքաբարնակներ էին, որոնք տեղաբաշխված էին Նոր Ջուղայում, Համագանում, Թեհրանում, Ռաշտում, էնդելիում և այլ քաղաքներում։ Տարբեր շրջանների բնակչության թիվն անընդհատ փոխվում էր, սակայն հայ բնակչության հիմնական մասը կենտրոնացած էր Փերիայի, Զարմահալի և Գյափլայի շրջաններում։

Հետագայում թեմի հայերի թիվն արագորեն աճում էր և կես դարի ընթացքում համարյա կրկնապատկվեց։ Մեր դարի սկզբին թեմի հայերի թիվն արդեն հասնում էր 36.305 մարդու՝ 5.678 տուն⁶։

Իրանահայ բնակչության մյուս կարևոր կենտրոնը հյուսիսարևմտյան Իրանն էր, որը կազմում էր Ատրպատականի թեմը։ Այդ շրջանները, որոնք նախկինում մտնում էին պատմական Հայաստանի Պարսկահայք և Վասպուրական նահանգների մեջ վաղուց ի վեր բնակեցված էին հայերով։ XIX դարի սկզբի ռուս-իրանական պատերազմներից հետո այդ շրջաններում բնակվող հայերի զգալի մասն արտագաղթեց Արելյան Հայաստան, սակայն հետագայում ևս հայերն այստեղ նկատելի թիվ էին կազմում։ Զ. Քերզոնի տվյալներով, անցյալ դարի 90-ական թվականների սկզբին այստեղ հաշվվում էր 4.815 տուն հայ։ Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր 6 շնչից, ապա հայերի ընդհանուր թիվը կկազմի 28.890 մարդ⁷։ Ըստ հեղինակի, հայ բնակչության հիմնական մասը տեղաբաշխված էր Սալմաստում, Ուրմիայում, Ղարաղանում և Մակվում։

Հայկական աղբյուրները ևս մոտավորապես նույնպիսի տվյալներ են պարունակում։ Օրինակ, Ե. Ֆրանգյանի հաշվումներով XX դարի սկզբին Ատրպատականում (Իրանի Աղբքան նահանգ—Ս. Ս.) բնակվում էր 34.000 հայ⁸։

Ատրպատականի թեմական առաջնորդ եպիսկոպոս ներնի Մելիք Թանգյանը կաթողիկոսին ուղղված 1913 թվականի դեկտեմբերի 11-ի գեկուցագրում թեմում բնակվող հայերի թիվը սահմանում է 30 հազար⁹։

Մեկ ուրիշ հայկական աղբյուրում նշվում է, որ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին իրանի հյուսային շրջաններում հաշվվում էր 32.750 հայ¹⁰:

Սյսպիսով, կարելի է վստահորեն եզրակացնել, որ XX դարի սկզբին Աստրատականի թեմում բնակվում էր 30—35 հազար հայ: Հարկ է նշել, որ այս շրջաններում հայերի թիվը շափականց գանդաղ էր ավելանում, չնայած, որ XIX դարի վերջից Արևմտյան Հայաստանում իրադրության վատթարացման հետևանքով հարևան թուրքական տերիտորիաներից զգալի արտագաղթ է սկսվում իրանի սահմանամերձ շրջանները:

Կերոհիշյալ թեմի տարածքում հայ բնակչությունն անհավասարաշափ էր տեղաբաշխված: Ամբողջ բնակչության մոտ 1/3 մասը կենտրոնացած էր Սալմաստում: Ե. Ֆրանգյանի տվյալներով, մեր դարի սկզբին Սալմաստի 23 գյուղերում բնակվող հայերի թիվը կազմում էր 1916 տուն կամ 10.250 մարդ¹¹:

Մեկ ուրիշ աղբյուրի համաձայն, Սալմաստի հայ բնակչությունը կազմում էր 1857 տուն կամ 10.085 մարդ¹²:

Հայ բնակչության թվով երկրորդը Ուրմիան էր: Արխիվային տվյալների համաձայն, 1913 թվականին Ուրմիայի շրջանի 31 գյուղերում հաշվվում էր 936 տուն հայ¹³: Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր 6 շնչից, Ուրմիայի հայ բնակչության ընդհանուր թիվը կկազմի 5.600 մարդ: Բներքած թվական տվյալների հավաստիությանը կարելի է շկսակածել, քանի որ մյուս աղբյուրները ևս նույնառություններ են պարունակում: Այսպես, ըստ Ե. Ֆրանգյանի, XX դարի սկզբին Ուրմիայի 32 գյուղերում բնակվում էր 5.624 հայ՝ 978 տուն¹⁴: Ինչպես տեսնում ենք, շրջանի հայ բնակչութան թիվը տաս տարվա ընթացքում համարյա փոփոխության շինթարկվել: Դրա հիմնական պատճառը հայ բնակչության իրավագուրկ և տնտեսական ժանր վիճակն էր, որի հետևանքով մեծ քանակությամբ հայեր մշտակես արտագաղթում էին Ռուսաստան: Նման միտումը բնորոշ էր հատկապես Խոյի և Մակվի շրջաններին, որտեղ հայ բնակ-

Հության դրությունը հատկապես ծանր էր: Այդ շրջանները՝
որտեղ ժամանակին զգալի քանակությամբ հայեր կային,
աստիճանաբար ամայանում էին: Երջապատի մահմեդական
բնակչության կրոնական մոլեուանդությունը և գյուղացիների
անապահով վիճակը շատ հայերի ստիպում էր արտագաղթել
Ռուսաստան կամ վերաբնակվել այլ շրջաններում: Երբեմն
տեղափոխվում էին ամբողջ գյուղերով: Այսպես, 1906 թվա-
կանին Կամրեր-Քենդի հայ բնակիչները՝ ընդամենը 15 ըն-
տանիք, ուստա Շահրապի գլխավորությամբ գաղտնի անցան
Ռուսաստան¹⁵:

Մասսայական արտագաղթի պատճառով Խոյի և Մակվի
հայ բնակչության թիվը XX դարի սկզբին մեծ շափով կըր-
ճատվել էր: Ե. Ֆրանգյանի տվյալներով, դարասկզբին Խոյի
հայ բնակիչների թիվն ընդամենը 258 տուն էր կամ 1290
շունչ, իսկ Մակվինը՝ 180 տուն՝ մոտ 1000 շունչ¹⁶:

Հայերը զգալի թիվ էին կազմում նաև Ղարագաղում: Նրա 28 գյուղերում բնակվում էր շուրջ 3000 հայ¹⁷: Այստեղ
և հայ բնակիչների վիճակը ծայրահեղ անբարենպաստ էր
և պատահական չէ, որ նրանց թիվն աստիճանաբար կրճատ-
վում էր:

Ընդհանրացնելով վերեւում ասվածը, կարելի է եղբա-
կացնել, որ անցյալ դարի կեսերին Իրանի հայ բնակչության
թիվը կազմում էր 35—40 հազար: Հետագայում այն համար-
յա կրկնապատկվեց և Առաջին համաշխարհային պատերազմի
նախօրյակին հայ համայնքում արդեն հաշվվում էր ավելի
քան 80 հազար մարդ:

Ուսումնամիրությունները ցույց են տալիս, որ իրանա-
հայ համայնքի հիմնական մասը կազմում էին գյուղական
բնակիչները: Քաղաքային բնակչությանը բաժին էր ընկնում
հայ համայնքի ընդհանուր թվի մոտ 20 տոկոսը: Օրինակ,
Պարոկաստանի և Հնդկաստանի թեմի հայ բնակչության ընդ-
հանուր թվից 29.295 մարդ բնակվում էր թեմի 98 գյուղերում,
մինչդեռ Թեհրանում, Սպահանում, Համադանում, Ռաշտում,
Ղազվինում և այլ քաղաքներում բնակվող հայերի թիվը կազ-
մում էր ընդամենը 7 հազար¹⁸:

Պատկերը նույնն էր նաև Աստրապատականի թեմում, որի խոշոր քաղաքներում հաշվվում էր ընդամենը մոտ 7 հազար հայ, ընդ որում քաղաքային բնակչության հիմնական մասը՝ մոտ 5 հազար մարդ, կենտրոնացած էր Թավրիզում:

Ընդհանուր առմամբ, նկատվում է քաղաքային հայ բնակչության աճի միտում: Օրինակ, եթե անցյալ դարի վերջին Թավրիզում կար ընդամենը 500 տուն հայ¹⁹, ապա մեր դարի սկզբին այդ թիվը հասնում էր 800-ի²⁰:

Սրագորեն աճում էր Թեհրանի հայ բնակչության թիվը: 1856 թվականի 75 տան դիմաց կես դար հայոց այն հասավ 320 տան²¹:

Ավելի քան երկուսուկես անգամ ավելացել էր Համադանի հայ բնակչության թիվը²²:

Հատկապես արագ էր աճում այնպիսի խոշոր առևտրապեհության կենտրոնների հայ բնակչության թվաքանակը, ինչպիսիք էին Թավրիզը, Թեհրանը, Ռաշտը, Համադանը և ուրիշներ:

Քաղաքային բնակչության աճը իրանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տեղաշարժերի արդյունք էր: Ինչպես նշվել է, զյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով տեղի էր ունենում գյուղացիական լայն մասսաների ունեղրկման գործընթաց: Հողից զրկված և աղքատացած գյուղացիները փոխադրվում էին քաղաք, համալրելով աղատ աշխատութիւն զգալի բանակը: Ե. Ֆրանգյանի վկայությամբ, Թավրիզի հայկական թաղամասերից մեկի՝ Ղալայի, համարյա բոլոր բնակիչները Թավրիզ էին տեղափոխվել Մուսումբարից, Սոյլուրից, Ալղամուլքից և Ղարադաղի գյուղերից:

Գյուղական բնակչության հաշվին քաղաքային հայ բնակչության աճը հանգեցրեց նրան, որ արդեն XX դարի կեսերին իրանահայ բնակչության հիմնական մասը կենտրոնացած էր առևտրարդյունաբերական խոշոր կենտրոնում:

Սոցիալական առումով իրանահայ բնակչությունը միատարր չէր: Այն տարաբաժանվում էր դասակարգերի և սո-

ցիալական խմբերի, որոնք գտնվում էին սոցիալական տարբեր բնեոներում։ Վիճակագրական ստույգ տվյալների բացակայությունը դժվարացնում է սոցիալական տարբեր խմբերի հարաբերակցության հզգրիտ պատկերի բացահայտումը։ Սակայն մեր տրամադրության տակ եղած նյութերը որոշ ընդհանրացումների հնարավորություն են տալիս։

Անշուշտ, չի կարելի համաձայնվել խորհրդային հետազոտող ն. Կուզնեցովայի այն եղբահանգման հետ, թե Արևելյան Հայաստանը նույսաստանին միանալուց և իրանի գյուղական հայ բնակլության զգալի կրճատումից հետո ոհայերի հիմնական զբաղմունքը դարձան արհեստները և առեստուրը²³։ Ի՞արկե, արհեստավորները և առեստականները նկատելի տեսակարար կշիռ ունեին իրանահայ բնակչության մեջ, սակայն, ինչպես ցուց են տալիս վերոհիշյալ փաստերը, իրանահայ համայնքի հիմնական և ամենամեծաթիվ սոցիալական խումբը կազմում էր գյուղացիությունը, որի հիմնական զբաղմունքը հողագործությունը և անասնապահությունն էր։ Հայ գյուղացիների սոցիալական վիճակը շափականց ծանր էր, որովհետև նրանց հնշող մասը պատկանում էր հողագորկ և սակավահող գյուղացիների կատեգորիային։

Ապրանքագրամական հարաբերությունների զարգացման և մասնավոր հողատիրության աճի հետևանքով սկսված գյուղացիների ունեղբկման ընդհանուր գործընթացը շշողանցեց նաև հայ գյուղացիությանը։ Նրա զգալի մասը կորցրեց սեփական հողերը և ստիպված էր ստրկական պայմաններով վարձակալել կալվածատերերի հողերը։ Օրինակ, Զարմահամեր շրջանի հայ գյուղացիների 95 տոկոսը պատկանում էր հողագորկ գյուղացիների թվին²⁴։

Ղարաղանի բոլոր յոթ գյուղերը, որոնք բնակեցված էին հայերով, կալվածատերերի մասնավոր սեփականությունն էին²⁵,

Սալմաստի հայաբնակ 23 գյուղերի մեծ մասը և պատկանում էր կալվածատերերին, իսկ գյուղացիները ստիպված էին վարձակալել նրանց պատկանող հողերը²⁶։

Սովորաբար վարձակալները հողատերերին վճարում էին թերքի 1/3-ից մինչև կեսը: Պետական հողերը մշակող գյուղացիները վճարում էին 1/8-ից մինչև 1/10 մասը: Սակայն հաճախ գյուղատերերը և հարկանավաքները մալիաթը հավաքում էին կրկնակի կամ եռակի շափով ավելի: Սահմանված շափով մալիաթն ուղարկվում էր մայրաքաղաք, Անացյալն օգտագործվում էր վերջիններիս կողմից: Օրինակ, Հոսեյնավայ գյուղի բնակիչները որպես մալիաթ վճարում էին 192թուման, սակայն պետական դանձարան էր ուղարկվում միայն 110 թումանը²⁷:

Բացի ուղղակի պետական հարկերից, գյուղացիները վճարում էին նաև բազմաթիվ անուղղակի հարկեր: Այս առումով բնորոշ են վերոհիշյալ գյուղի բնակիչներից հավաքվող անուղղակի հարկերը: Ամբողջ գյուղը բաժանված էր 48 գույզ և զնիրի: Յուրաքանչյուր գույզից վերցնում էին 4 թուման որպես մալիաթ, ինչպես նաև ջրովի հողատարածություններից ստացվող հացահատկի 1/3 և անջրդի գաշտերից ստացվող բերքի 1/5 մասը: Բացի գրանցից, գյուղացիները վճարում էին նաև բազմաթիվ այլ հարկեր, ինչպես, օրինակ, բանջառանոցի համար՝ 8 դռան և մեկ բեռ բերքից, ձմեռվա ածուխ տեղափոխելու համար՝ 3 դռան կամ մեկ անասուն մեկ օրով, խաղողի այգիների համար՝ 100 որթատունկից 5 դռան, 2 տոպուկ կեր անասունի համար, 160 հատ աթար և մեկ բեռ ցախի: Տոնը շնորհավորելու համար նույնպես անհրաժեշտ էր գյուղարեն՝ 1 դռան, անկախ այն բանից գնում էին, թե ուշ: Գյուղացիները հատուկ հարկ էին վճարում նաև ջրատար ուղիները մաքրելու համար: Սուլթանաբաղ կամ Ղում ցորեն կամ գարի ուղակելու համար զույգ եղ ունեցողը պարտավոր էր վճարել 9 դռան կամ տալ երեք անասուն:

Կալվածատերերը բռնի կերպով բարձր գներով ցորեն էին վաճառում գյուղացիներին, ընդ որում դրամը վերցնում էին նախօրոք, իսկ ցորենը խոստանում էին տալ կալին²⁸: Ինչպես տեսնում ենք այս, ինչպես և բազմաթիվ այլ համանատիպ հարկերը գյուղացիների համար շատ ավելի ծանր էին, քան ուղղակի հարկերը:

Գյուղացիների սոցիալական ճնշման ամենածանր ձեզ կոռն էր ինչպես արդեն նշվել է, իրանում գյուղացիների ճորտական կախվածությունը ձևականորեն բացակայում էր, սակայն նրանք ստիպված էին աշխատել կալվածատիրոջ համար, քանի որ զրկված էին հողից և արտադրության մյուս միջոցներից, որի հետևանքով լիակատար կախման մեջ էին գտնվում կալվածատերերից: Օրինակ, Մակվի խանությունում հայ գյուղացիները ստիպված էին օրերով, երբեմն նույնիսկ շաբաթներով անվճար աշխատել խանի համար՝ վերանորոգել ճանապարհները և պարիսպները, աշխատել տիրոջ տպնը և բանջարանոցում²⁹: Հատկապես խոսուն է այն փաստը, որ խանի պահանջով գյուղացիները պարտավոր էին նման աշխատանքներ կատարել նաև հողագործական աշխատանքների ամենաեռուն պահին:

Տնտեսական ծանր կացության պատճառով շատ գյուղացիներ դիմում էին արտագնացության: Այն հատկապես մեծ չափեր էր ընդունել Սալմաստում: Ամեն տարի հազարավոր հայեր այս շրջանից մեկնում էին Ռուսաստան՝ գերազանցապես թիֆլիս, Բաքու, Բաթում, Աստրախան, Դոնի Ռոստով, Կիև, Օդեսա և նոր Նախիչևնա: Հայկական ազրյուներից մեկի տվյալներով, 10 հազար հայ բնակչություն ունեցող Սալմաստից արտագնաց աշխատանքի էր մեկնում 2,5 հազար մարդ³⁰, որը կազմում էր Սալմաստի աշխատունակ հայ բնակչության մոտ 70 տոկոսը:

Արտագնացների թիվը հատկապես մեծ էր զուտ հայաբնակ գյուղերում՝ Հավթվանում, Փայտաջուկում, Մահլամում, Ղալասարում, Սառնայում: Հավթվանից, որի բնակչությունը 2314 հոգի էր արտագնաց աշխատանքի էր մեկնել 597 մարդ: Դա կտղմում էր գյուղի ողջ բնակչության 1/4 մասը³¹:

543 բնակիչ ունեցող Սառնա գյուղից Ռուսաստան աշխատանքի էր մեկնել 187 հոգի՝ մոտ 35 տոկոս³²:

Ականատեսի վկայությամբ, որոշ գյուղերում, ինչպես օրինակ, Փայտաջուկում, Հավթվանում, Մահլամում, Հկար մի տուն, որ արտագնաց չունենար՝³³,

Համ հաճախ արտագնացները Ծուսաստանում մնում էին մի քանի տարի, ինչը շեր կարող շանդրադառնալ նրանց ընտանիքների տնտեսական դրության վրա: Տղամարդու աշխատող ձեռքերից զրկված ընտանիքների մեծ մասն ի վիճակի շեր նորմալ տնտեսություն վարել, իսկ արտագնացների վաստակը շեր բարեկավում նրանց դրությունը: Հարկ է նշել, որ հայերի շրջանում արտագնաց աշխատանքի մեկնողների թիվն ավելի մեծ տոկոս էր կազմում, քան մյուս ազգությունների շրջանում: Այսպես, 1904 թվականին իրանական Ազգահանդից Ծուսաստան արտագնաց աշխատանքի էր մեկնել 59.121 մարդ³⁴, եթե նկատի ունենանք, որ միայն Սալմաստից տարեկան Ծուսաստան էր մեկնում 2,5 հազար հայ, ապա պարզ կդառնա, որ տոկոսային առումով արտագնաց աշխատանքի մեկնող հայերի թիվը մի քանի անգամ ավելի էր, քան մյուս ազգություններինը: Իհարկե, նման վիճակը կարելի է բացատրել «արհեստավորական և առևտրական բնակչության հատուկ ձեռներեցությամբ»³⁵, որոնց շրջանում հայերը մեծ թիվ էին կազմում: Սակայն, մեր կարծիքով, պակաս կարևոր գործոն շեր նաև հայ գյուղացու տեսական ծանր վիճակը:

Գյուղական շատ վայրերում հայ բնակչությունը հողագործությանը և անասնապահությանը զուգահեռ զբաղվում էր նաև արհեստաներով: Օրինակ, Խոյի հայ բնակչությունը երկրագործական աշխատանքներից ազատ ժամանակ զբաղվում էր ջուկհակությամբ: Կանայք մանում էին, իսկ տղամարդիկ՝ կտավ գործում³⁶: Պատրաստի արտադրանքն օգտագործվում էր ինչպես սեփական կարիքների, այնպես էլ վաճառքի համար:

Մինչև XIX դարի վերջը Սալմաստի հայերի շրջանում ևս լայնորեն տարածված էր ջուկհակությունը: Հայ գյուղացիները բամբակաթելից կտավ էին գործում, ներկում և արտահանում ինչպես իրանի մյուս շրջաններ, այնպես էլ Ծուսաստան³⁷: Այդ արտադրության հիմնական կենտրոնները Փայտչուկը, Հավթվանը և Ղալասարն էին, որտեղ կային հատուկ արհեստանոցներ: Սակայն արհեստագործության այս

Ճյուղը Սալմաստում ծաղկում ապրեց մինչև դարի վերջը,
հեր սկզբեց ուստական էժան շթե գործվածքների ներմուծումն
իրան։ Դա տնտեսական ծանր հարված էր Սալմաստի հա-
յերին։ Նրանց արտադրանքը շէր կարող մրցել Ռուսաստանի
Փարբիկագործարանային արդյունաբերության հետ, ուստի
արհեստագործական արտադրության այս ճյուղն արագործն
անկում ապրեց։ Բոլոր արհեստանոցները փակվեցին, գոր-
ծավոր-արհեստավորները մնացին առանց աշխատանքի։

Համագանի և Սուլթանաբագի գյուղական հայ բնակչու-
թյան շրջանում լայնորեն տարածված էր գորգագործությու-
նը։ Հայերի գործած գորգերը, որոնք հայանի էին «արմանի-
բաֆ»³⁸ անունով մեծ հեղինակություն ունեին և ավելի բարձր
էին գնահատվում։

Կերո՞հիշյալ արհեստաներից բացի, գյուղական հայ բնակ-
չությունը զբաղվում էր նաև դարբնությամբ, հյուսնությամբ,
ուկերպությամբ և այլ արհեստաներով։

Ընդհանուր առմամբ, այս կամ այն արհեստով զբաղվելը
հայ գյուղացու համար օժանդակ նշանակություն ուներ և
հկամտի լրացուցիչ աղբյուր էր, չնայած լինում էին նաև
գեղքեր, երբ գյուղացին լիովին խզում էր կապերը հողա-
գործության հետ և զբաղվում էր արհեստաներով։

Քաղաքացին հայ բնակչությունը նույնպես պատկանում
էր սոցիալական տարբեր խմբերի։ Նրա հիմնական մասը
կազմում էին առևտրականները և արհեստավորները։ Սա-
կայն XIX դարի վերջից արտաքին առևտրի բուռն զարգաց-
ման և առևտրական խավի սոցիալական շերտավորման ուժե-
ղացման հետևանքով հանդես է գալիս մեծածախ վաճառա-
կանների մի խումբ, որի ձեռքում զգալի դրամական միջոց-
ներ են կենտրոնանում։ Հենց նրանք էլ հանդիսացան ձեւ-
վորվող հայ բուրժուազիայի հիմնական բաղկացուցիչ մասը,
ուստի կարեոր դեր էր խաղում իրանի տնտե-
սական կյանքում։

Քաղաքային հայ բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ մեր ունեցած կցկոտուր և աղքատիկ տվյալները, ցալոք, հնարավորություն շեն տալիս հստակ աստիճանակարգում անցկացնել: Այս առումով, թերևս, ամենաարժեքավոր տեղեկությունները հազորգում է Հարություն Տեր-Հովհանյանը: Նոր Զուղայի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ նա մանրակրկիտ և շափաղանց հետաքրքիր տվյալներ է բերում Նոր Զուղայի հայ բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ: Հեղինակի վկայությամբ, 1856 թվականին նոր Զուղայում բնակվում էր 371 տուն հայ, որոնք ստորաբաժանվում էին սոցիալական չորս խմբերի:

Բատ հեղինակի, առաջին դասին էին պատկանում հոգկորականները՝ 36 հոգի և վաճառականները՝ 6 հոգի, ինչպիս նաև 35—40 այլ ընտանիք, որուք նպաստ էին ստանում Հնդկաստանում և ծավայում ապրող իրենց մերձավորներց: Կարելի է ենթադրել, որ վերջիններս նույնպես զբաղվում էին առևտուով:

Երկրորդ դասը կազմում էին արհեստավորները և մանր առևտուականները. փերեզակները՝ 10 հոգի, գուլպայավաճառները՝ 36, ոսկերիչները՝ 10, հյուսները՝ 6, գարրինները՝ 4, նպարավաճառները՝ 5, մսավաճառները՝ 6, ցորենի առևտուով զբաղվողները՝ 8 և կտավագործ արհեստավորները՝ 130: Հեղինակը այս խմբին է դասում նաև 20 կալվածատերի, որոնց եկամուտը շատ սահմանափակ էր և նրանք կառող էին համեմատվել արհեստավորների հետ: Մեր կարծիքով, դրանք սովորական հողագործներ էին, որոնք խաղողի և մրգատու այգիներ ունեին:

Երրորդ դասին էին պատկանում որմնագիրները, քարհատ վարպետները, բաղնիքապանները, սակրիչները, գինեվաճառները, կոշկակարները և այլ արհեստավորներ՝ թվով 80 մարդ: Բատ հեղինակի, այս խմբին պատկանող արհեստավորների օրական վաստակը հազիվ էր բավարարում ընտանիքի կարիքները:

Զորբորդ դասը ներկայացնում էին շքավորները և տը-
նանկները, որոնք ապրում էին օրավարձու աշխատանքով:
Նրանց թիվը 50—60 հոգի էր³⁹:

Ի՞նչարկե, հեղինակի սոցիալական բաժանման հետ կա-
րելի է շհամաձայնվել կամ վիճարկել նրա տեսակետները,
սակայն պետք է նշել, որ հեղինակի բերած թվական տվյալ-
ները բավականին հստակ պատկերացում են տալիս նոր Զու-
զայի հայ բնակչության սոցիալական կազմի մասին։ Օրի-
նակ, վստահությամբ կարելի է ասել, որ արհեստավորնե-
րը՝ մոտ 200 տուն, կազմում էին նոր Հուղարքի բնակչության
հիմնական և ամենամեծաթիվ սոցիալական խումբը։ Հատ-
կապնս զարգացած էր ջուղակությունը, որտեղ զբազված էր
շուրջ 130 կտավագործ արհեստավոր։ Նոր Զուզայի ջուղա-
կագործ վարպետների արտադրանքն արտահանվում էր նաև
իրանի այլ շրջաններ։

Թվական առումով սոցիալական հաջորդ խումբը կազ-
մում էր առևտրական դասը՝ շուրջ 100 հոգի։ Այստեղ գերա-
կըշում էին մանր առևտրականները։ Քիչ թե շատ խոշոր
վաճառականներն ընդամենը 6 հոգի էին։

Զգալի թիվ էին կազմում օրավարձու աշխատողները,
որոնք հազիվ էին պահում իրենց ընտանիքները։

Զգալի թվով հոգեմորականների առկայությունը նոր Զու-
զայի պատմական զարգացման յուրահատկության արդյունք
էր. այստեղ գործում էր հայկական 12 եկեղեցի։

Նոր Զուղայի սոցիալական կառուցվածքն, անշուշտ,
արտահայտում էր քաղաքի սոցիալ-տնտեսական դրության
առանձնահատկությունները։ Երբեմնի ծաղկող քաղաքը, որի
վաճառականները XVII դարի ընթացքում և XVIII դարի
սկզբին վճռորոշ դեր էին խաղում իրանի արտաքին առև-
տրում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում տնտեսական
խորը ճգնաժամ էր ապրում։ Խոշոր հայ վաճառականները
հեռացել էին քաղաքից և այն կորցրել էր իր նախկին տնտե-
սական նշանակությունը։ Դրանով է բացատրվում խոշոր վա-
ճառականների սակավաթվությունը և մանր առևտրականնե-
րի ճնշող գերակշռությունը։

Առանձին քաղաքների մասնագիտացումը և սոցիալ-
տնտեսական վիճակն, անշուշտ, անխուսափելի ազդեցու-
թյուն էին թողնում հայ բնակչության սոցիալական կառուց-
վածքի վրա: Դրա հետ կապված քաղաքային հայ բնակչու-
թյան երկու հիմնական խմբերի՝ առևտրականների և արհես-
տավորների հարաբերակցությունը փոխվում էր: Վիճակա-
գրական ստույգ տվյալների բացակայության պատճառով
մենք ստիպված ենք բավարարվել ժամանակակիցների հա-
ղորդած ընդհանուր բնույթի տեղեկություններով: Օրինակ,
Վ. Մինորսկու վկայությամբ «նախկին հարուստ վաճառա-
կաններից ոչ ոք արդեն չկա, Մակվում մնացել են միայն ը-
րավորները և արհեստավորները՝ դարբիններ, կոշկարաններ,
դինեվաճառներ, զինագործներ և այլն»⁴⁰:

Ե. Ֆրանցյանը ևս նշում է, որ Մակվի հայ բնակչության
հիմնական մասը կազմում էին արհեստավորները⁴¹:

Պատկերը մոտավորապես նույնն էր նաև Խոյում, որտեղ
արհեստավորները կազմում էին ամենամեծաթիվ սոցիալա-
կան խավը⁴²: Նման վիճակը ոչ միայն Մակվի և Խոյի շրջ-
անների աղքատության, այլև այդ վայրերում առևտրական
գործունեության համար ստեղծված շահիազանց ժանր պայ-
մանների արդյունք էր: Վաճառականների անձի և գույքի ան-
ձեռնմխելիության լիակատար բացակայությունը բացասա-
րար էր անգրադառնում առևտրի և առևտրական դասի վրա:

Դրան հակառակ, այն քաղաքներում, որոնք աշխարհ-
արտաքին և ներքին առևտուր էին վարում և որտեղ գոյու-
թյուն ունեին առևտրի համար թիշ թիշ շատ նորմալ պայման-
ներ, հայ բնակչության հիմնական մասը պատկանում էր
առևտրական դասին: Այսպես, XIX դարի վերջին Զազվինում
ապրում էր 20 տուն հայ, որոնք համարյա առանց բացառու-
թյան զբաղվում էին առևտրով⁴³:

Առևտրական դասը գերազանցում էր նաև Ռաշտում և էն-
դեմում: Զնայած այս քաղաքներում հիմնավորվել էին հայ-
կական խոշոր առևտրական տների և ընկերությունների ներ-
կայացուցիչները, այնուամենայնիվ սոցիալական այս խա-

միում ճնշող մեծամասնություն էին կազմում մանր առևտրականները և կրպակատերերը:

Ուրմիայում նույնպես առևտրական դասր բավականին ուժեղ էր: Արգումանյանները, Մանասերյանները, Շահգելդյանները և մյուսները զգալի առևտրական շրջանառություն էին իրականացնում⁴⁴:

Արխիվային ավյալների համաձարն, Համադանի հայերի մի մասը զրադշում էր առևտրով, մյուս մասը ծառայում էր ևլորպական առևտրական և ֆինանսական հաստատություններում: Զքավոր մասսան զրադշում էր ալկոհոլային խմիչքների առևտրով⁴⁵:

Ինչպես արդեն նշվել է, քաղաքային բնակչության կենտրոնացման հիմնական վայրը Թավրիզն էր, որն իրանի խողորագույն առևտրաֆինանսական և արհեստավորական կենտրոնն էր: Պատահական չէ, որ հայկական բոլոր քիչ թե շատ հայտնի առևտրական տները և ընկերություններն իրենց բաժանմունքները կամ ներկայացուցիչներն ունեին Թավրիզում: Սակայն նրանց հետ միաժամանակ առևտրական ակտիվ գործունեություն էին ծավալել նաև բազմաթիվ մանր ու միջին վաճառականներ, առևտրական միջնորդներ: Մ. Երկարակեցյանի վկայությամբ, Թավրիզի հայերի մեծ մասը զրադշում էր առևտրով⁴⁶: Զգալի թիվ էին կազմում նրան արհեստավորներ՝ կոշկակարներ, գերձակներ, ոսկերիչներ, լուսանկարիչներ և այլն:

Այսպիսով, առևտրականները և արհեստավորները կազմում էին քաղաքային հայ բնակչության հիմնական սոցիալական խմբերը: Դրանց հարաբերակցությունը փոխվում էր կախված կոնկրետ քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակից և աշխարհագրական դիրքից: Թավրիզում, Ռաշտում, Էնդելիում, Ղազվինում և այլ քաղաքներում, որոնք առևտրական խոշոր կենտրոններ էին, հայ բնակչության ճնշող մեծամասնությունը պատկանում էր առևտրական դասին: Նոր Զուղայում, Խոյում, Մակվում և այլուր գերակշռում էին արհեստավորները: Ընդհանուր առմամբ, մեր դիտարկումները թույլ են տալիս եղրակացնել, որ այս երկու խավերը կազմում էին քա-

Դաքային հայ բնակչության 4/5 մասը՝ Մնացած մասը ներկայացնում էին զանազան աստիճանավորները, իրանական և հվոռպական հաստատությունների ժառայողները, հոգևորականները, օրավարձու աշխատողները և այլ կատեգորիաների ներկայացուցիչների:

Մինչև XX դարի սկիզբը, այսինքն՝ մինչև իրանում բուրժուական իրավունքի հաստատումը, քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի իրավական գրությունը, ինչպես նաև մահմեդականների վերաբերմունքը նրանց նկատմամբ, կարգավորվում էր Ղուրանի, շարիաթական իրավունքի և աստվածարանական գրականության իրավական նորմերով: Ինչ վերաբերում է հայերի նկատմամբ պետական իշխանության գիրքորշմանը, ապա պետք է նշել, որ Աբբաս 1-ին շահի ժամանակներից սկսած իրանական շահերը նրանց նկատմամբ վարում էին հովանավորական քաղաքականություն: Դա թեւաղովում էր այն կարևոր գերով, որ հայերը XVII—XX դարերի ընթացքում խաղում էին երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Բացառություն էր կազմում միայն XIX դարի 30—50-ական թվականների ժամանակահատվածը, երբ իրանական կառավարությունն՝ ի պատասխան ուսւերանական պատերազմում ուսւական բանակին հայերի ցուց տված օգնության, նրանց նկատմամբ իրականացնում էր բռնությունների և հալածանքների քաղաքականությունը: Սակայն դարի կեսերից սկսած իրանական շահերն սկսեցին կրկին հովանավորել հայերին: Նման շրջադարձը զգալի շափով պայմանավորված էր այն հանգամանքով, որ Իրանում հվոռպական երկրների և Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներն ըստ ամենայնի օժանդակում էին նրանց:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Իրանում հաստատված իրավական նորմերը ոչ միշտ էին համապատասխանում ունեալ իրականությանը: Ինչպես իրավացիորեն նշում է խորհրդագյին հետազոտող Ն. Կուզնեցովան «...ունեալ կյանքում կային շատ այնպիսի կողմեր, որոնք գերազույն իշխանության իրավասությունից դուրս էին մնում, բայց հենց նրանք

Էին վճռում այն կոնկրետ բնակավայրի միկրոկլիման, որտեղ բնակվում էր ոչ մահմեդական բնակչությունը»⁴⁷:

Իրոք, Հայ բնակչության դրությունն ամենուրեք միատեսակ չէր: Հայերի վիճակը հատկապես ծանր էր Խոյում, Մակվում, Թավրիզում, որտեղ մահմեդականների կրոնական անհանգուրժողականությունն առանձնապես սուր և ցայտուն բնույթ էր կրում: Անշուշտ, մահմեդականների հակահայկական տրամադրությունները որոշակի սոցիալական հիմք ունեին: Զգալի թվով հարուստ վաճառականների և արհեստավորների առկայությունը, մահմեդականների համեմատությամբ Հայ բնակչության բարեկեցության ավելի բարձր մակարդակը նախանձ էին Հարուցում և բորբոքում էին Հակահայկական տրամադրություններ: Շիա Հոգևորականությունն իր հերթին խրախուսում էր Հայերի նկատմամբ մահմեդականների կրոնական անհանգուրժողականությունը: Որպես արդյունք, իրանի տարրեր շրջաններում սիստեմատիկարար տեղի էին ունենում մահմեդական հոգևորականության կողմից հրահրված ջարդեր: Այսպես, 1897 թվականին Թավրիզում բռնկվեց հերթական Հակահայկական ելույթը, որի համար առիթ ծառայեց այն, որ Թավրիզի շոկայում մի Հայ խոսել էր մահմեդական կող հետ: Դա բավական էր, որպեսզի սեյիզների կոչով մահմեդական մոլեկունդ ամբոխը ներխուժիր Հայկական Լիլավա թաղամասը և սկսեր ավերել Հայկական տները: Ավելի քան Հաղար Հայ ապաստան գտավ ուստական գլխավոր Հյուպատոսությունում⁴⁸:

1904 թվականի մարտին անկարգություններ տեղի ունեցան Մաշհադում: Այստեղ Հակահայկական և Հակառուսական տրամադրությունները բորբոքում էր անդիմեատ մոշթեհիդը: Ռուսահպատակ Հայերի խանությունները թալանվեցին, նրանց զգալի նյութական վնաս հասցվեց: Մաշհադում Հայ վաճառականների խանությունները և պահստանները փակվեցին, Ղուշանի Հայերը դադարեցրին առևտրական գործարքները և հեռացան Աշխարադ: Նիշարուրի Հայերը նույնպես շփոթմունքի մեջ էին և ցանկանում էին թողնել քաղաքը⁴⁹:

Այս դեպքում բացասական գեր խաղացին նաև անզիացիները, որոնք աննկատելիորեն բորբոքում էին հակահայկական և հակառակական տրամադրություններ: Նրանք և նրանց համակիրները հայերին համարում էին Խորասանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերի գլխավոր ներկայացուցիչները և ամեն կերպ ձգտում էին վնասել հայ վաճառականներին՝ զրանով խսկ թուլացնելով Ռուսաստանի ազգիցությունն Իրանի Հյուսիս-արևելքում: Պատահական չէ, որ Իրանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներն ամեն կերպ խոշընդոտում էին Խորասանից հայերի հեռանալը: Իրանում ուստական գործերի հավատարմատար Ա. Սոմովի խոսքերով «...Հայերի հեռանալը (Խորասանից—Ս. Ս.) առեւրական գործարքների հոռոմ շրջանում անշափելի վնաս կհասցներ (Ռուսաստանի առեւրին—Ս. Ս.)»^{50:}

1892 թվականի օգոստոսին Աստրաբաղում մահմեդական մոլիուանդ ամբոխը հարձակում ձեռնարկեց ուստահպատակ վաճառականների խանութինների վրա: Նրանց իրավունքների և անվտանգության ապահովման համար, իրանական կառավարության համաձայնությամբ, Աստրաբադ ուղարկվեց ուստական կազակների մի վաշտ^{51:}

Երբեմն տեղական իշխանությունները, նախապես իմաւալով նախապատրաստվող հարձակման մասին, ստիպված էին միջամտել և սանձահարել մահմեդական մոլիուանդներին: Այսպես, 1875 թվականին, երբ Թավրիզում նախապատրաստվում էր Հերթական հարձակումը հայերի վրա, տեղական իշխանությունները միջոցներ ձեռք առան ջարդերը կանխելու համար: Բոլոր թաղապետերին հրամայված էր զսպել իրենց թաղերի մահմեդականներին, զինվորներին փամփուշներ էին բաժանվել հարձակման դեպքում հայերին պաշտպանելու համար^{52:}

Բնականաբար, հայ բնակչությունը, անվտանգության առցակայության և անապահովության պայմաններում, ձրգում էր ապրել հավաք խմբերով, ինչը հեշտացնում էր պաշտպանությունը հանկարծակի հարձակման դեպքում: Թավրիզում, Թեհրանում, Համադանում, Խոյում և այլ քա-

դաքներում հայերն ապրում էին առանձին թաղամասերում՝ Սպահանում զբաղեցնում էին առանձին արվարձան՝ նոր ջուղան:

Ի մի բերելով վերեսում ասվածը, կարելի է եզրակացնել, որ XIX դարի վերջին XX դարի սկզբին իրանում գոյություն ուներ բավականին խոշոր հայ համայնք: Հայ բնակչությունը՝ ավելի քան 80 հազար մարդ, տեղաբաշխված էր հիմնականում իրանի հյուսիս-արևմուտքում և Սպահանի շրջակայքում: Հայ համայնքի սոցիալական կառուցվածքը պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական գրությամբ: Սակայն հայ ժողովրդի զարգացման առանձնահատկություններն իրենց կնիքն էին թողել համայնքի սոցիալական տարաբաժանման վրա՝ նրանում առկա էր հարուստ վաճառականների, ձեռնարկատերերի և արհեստավորների բավականին մեծաթիվ շերտ: Դա ինքնին վկայում էր, ընդհանուր առմասիք, իրանական հասարակության հետ համեմատած հայ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի մասին:

**ՀԱՅ ԹՈՒՐՖՈՒՍ.ԶԻՍ.ՑԻ ՄԱՍՆԱԱՅՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎԱՏՐԻՆ**

Դեռևս վազ ժամանակներից հայերն առևտրական և տնտեսական հարաբերություններ էին հաստատել հարեան իրանի հետ: Աւզ միջնադարում գրանք սիստեմատիկ և կայուն բնույթ էն ստանում: XVI դարում հայ վաճառականները՝ հիմնականում ջուղայեցիները, առանցքային դիրքեր էին գրավում իրանի և Անդրկովկասի առևտրում¹:

XVII դարի սկզբից առևտրական ակտիվ գործունեություն ծավալեց նորջուղայեցի հայ վաճառականությունը, որն արդեն զարի կեսերին իր ձեռքում էր կենտրոնացրել իրանական մետաքսի արտահանումը: Ավելի քան մեկ դարի ընթացքում նորջուղայեցի հայ վաճառականները բացառիկ կարելոր դեր էին խաղում իրանի արտաքին առևտրում, ինչպես նաև ելքոպական երկրների և Ռուսաստանի հետ այդ երկրի դիվանագիտական հարաբերություններում:

Սակայն XVIII դարի սկզբին աֆղանական ներխուժման հետևանքով Սպահանը նվաճվեց և թալանվեց: Աֆղանները մեծ ուղղմատուգանք զրեցին նոր ջուղայի հայ գաղութի վրա: Այդ իրադարձությունների հետևանքով վերջինս կորցրեց իր նախկին առևտրատնտեսական նշանակությունը, իսկ խոշոր վաճառականների մեծ մասը հեռացավ հարկան երկրներ:

XVIII դարի վերջից իրանում հայ վաճառականության գործունեության կենտրոնը տեղափոխվեց իրանի հյուսիսա-

լին և հյուսիսարևմտյան շրջաններ: XIX դարի սկզբի ռուս-իրավունական պատերազմներից հետո իրանահպատակ հայ վաճառականների հետ միասին իրանի արտաքին առևտրում սկսեցին կարևոր դեր խաղալ նաև ռուսահպատակ հայերը: Դորժարար սերտ կապեր հաստատելով արևմտահելուպական և ռուսական արդյունաբերական շրջանների հետ, նրանք Իրան էին ներմուծում մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ: Ի տարբերություն պարսիկ վաճառականների, որոնք հիմնականում միջնորդի դեր էին խաղում, հայ վաճառականները, որպես կանոն, ապրանքը գնում էին անմիջականորեն Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում, չնայած նրանց մի մասը գործում էր նաև Կոստանդնուպոլիսի վրայով: Մասնավորապես Թիֆլիսի, Շոշու և Ազուլիսի հայ վաճառականներն ամեն տարի մասնակցում էին Լայպցիգի տոնավաճառին: Այսպես, 1836 թվականին հայ վաճառականները Լայպցիգից Իրան էին ներմուծել 2.959.892 ռուբլու արդյունաբերական ապրանք²: Հաջորդ տարի այդ դումարն ավելի պատկառելի էր՝ Լայպցիգից և մասամբ Համբուրգից ներմուծվել էր 4.312. 592 ռուբլու ապրանք³:

Հայ վաճառականները հաճախ լինում էին նաև Վիեննա-յում, Մանչեստրում, Լիոնում և Արևմտյան Եվրոպայի մյուս խոշոր առևտրարարդյունաբերական կենտրոններում, որտեղից ներմուծում էին գերազանցապես բարձրակյա գործվածքներ⁴:

XIX դարի 30-ական թվականների կեսերին իրադրությունը կտրուկ փոխվեց: 1836—37 թվականներին Իրանում առևտրական խորը ճգնաժամ սկսվեց: Դրա պատճառն այն էր, որ պարսիկ վաճառականները երկիրը հեղեղել էին եվրոպական ապրանքներով: Զկարողանալով վաճառել եվրոպական ընկերություններից դնված ապրանքները և ժամանակին վճարել պարտքերը, նրանք կորցրին իրենց առևտրական գործընկերների վստահությունը: Եվրոպական, և ամենից առաջ հոնական առևտրական տները հրաժարվեցին պար-

սիկ միջնորդների ժառայությունից և իրենց բաժանմունքները բացեցին Իրանում։ Դա բացասաբար անդրադարձավ նաև Հայ վաճառականների առևտրական շրջանառության վրա։ Սակայն վերջիններս արագործն զուրս եկան ճգնաժամային վիճակից և շարունակեցին նշանակալի առևտուր վարել։ Ն. Կուղնեցովայի տվյալներով, XIX դարի կեսերին Հայ վաճառականների բաժինն Իրանի արտահանման մեջ կազմում էր 30—50 տոկոս, իսկ նկարուծման մեջ՝ 30—60 տոկոս⁵։

XIX դարի կեսերից Հայ վաճառականության ավանդական ակտիվ գործունեության շրջաններում զգալիորեն ուժի գանում էր հվորպական և Իրանի մաշնեղական վաճառականության մրցակցությունը։ Դա Հայ վաճառականներին ստիպում էր փնտրել մրցակցությունից զերծ շուկաներ։ Այդպիսի շուկա հանդիսացավ Հարավարելլյան Իրանը՝ Աստրաբադ, Շահրուդ-Բաստամ, Խորասան։ Հայ վաճառականության ներթափանցումն այդ շրջան այնքան արագործն էր ընթանում, որ «...XIX դարի կեսերին Հայ վաճառականները սկսեցին իրենց մենաշնորհը գարձնել Իրանի Հյուսիս-արևելքի՝ օրինակ Շահրուդ-Բաստամի, մեծածախ առևտուրը, որտեղ հընդկական, արևմտահվորպական և ոռոսական ապրանքների առևտուրը գտնվում էր նրանց ձեռքում»⁶։

Միևնույն ժամանակ XIX դարի կեսերից Հայ վաճառականությունն աստիճանաբար վերակողմնորոշվում է դեպի Ռուսաստանի արդյունաբերություն։ Դեռևս XVII դարում ոռոսական պետությունը ձգուում էր Արևմտյան հվորպա արտահանվող իրանական մետաքսն ուղղել Ռուսաստանի վրայով։ Զնայած այդ փորձերը Հաչողությամբ շավարտվեցին, հետագայում ոռոս-իրանական առևտրական Հարաբերությունները բավականին ակտիվ բնույթ ստացան։ Անցյալ դարի 60—70-ական թվականներից Հայ վաճառականներն արդեն ոռոս-իրանական առևտրի գծով զգալի շրջանառություն էին իրականացնում։ Օրինակ, 1869 թվականին ոռոսականական Հայ վաճառական Հայ վաճառական շակոր Արունովը Բելյասուշիրի մաքսատան վրայով իրանից Ռուսաստան էր արտահանել 73.376 ոռություն ապրանք⁷։

1872 թվականին մեկ ուրիշ ռուսահպատակ հայ՝ Հովհաննես Միրզա Ավագովը Բաքվի վրայով Ռուսաստան էր ներմուծել 94.754 ռուբլու ապրանք և իրան արտահանել 5.125 ռուբլու ռուսական ապրանք⁸:

Զգալի առևտրական շրջանառություն էին իրականացնում նաև իրանահպատակ հայ վաճառականները, որոնք գործում էին հիմնականում Աստարայի վրայով:

1874 թվականին իրանահպատակ Խաչատուր Տեր-Զաքարյանը Աստարայի վրայով Ռուսաստան էր արտահանել 70.262 ռուբլու իրանական ապրանք⁹: 1876 թվականին նա նույն ճանապարհով արտահանել էր 106.075 ռուբլու և ներմուծել 24.470 ռուբլու ապրանք¹⁰:

70-ական թվականներից ակտիվ գործունեություն ծավալեց հետագայում Իրանում քաջ հայտնի Թումանյանց եղբայրների առևտրական տունը: Նրանց շրջանառության մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ 1876 թվականին եղբայրներից մեկը՝ Սիմոն Թումանյանցը Ռուսաստան էր արտահանել 90.098 ռուբլու և իրան ներմուծել 12.450 ռուբլու ապրանք¹¹: Հաջորդ տարի նրա առևտրական շրջանառությունը կազմում էր 88.901 ռուբլի արտահանման և 19.427 ռուբլի ներմուծման գծով¹²:

Ռուս-իրանական առևտրում հայ վաճառականների տեսակարար կշիռը պարզելու համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն Ռուսաստանի մաքսատների տեղեկագրերը: Մեր ձեռքի տակ են Անդրկովկասի մաքսատների 1869—77 թվականների տեղեկագրերը (տե՛ս աղյուսակ № 2, էջ 74):

Մաքսատների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ վաճառականներին բաժին էր ընկնում Անդրկովկասի վրայով Իրանի արտահանման մոտ 1/3 և նույն ճանապարհով ներմուծման 1/4 մասը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ մինչև անդրկովկասյան և անդրկասպյան երկաթուղիների շինարարությունը, Ռուսաստանի հետ առևտրի հիմնական մայրուղին Կասպից ծովն էր: Այս ճանապարհով իրանական ապրանքներն արտահանվում էին Աստրախան և

ապա առաքվում նիժնի նովգորոդ և այլ համառուսաստանյան տոնավաճառներ: Դրանցում գնված ոռուսական ապրանքները նույն ճանապարհով առաքվում էին Իրան: Հատկանշական է, որ հայ վաճառականներն ավելի շատ ապրանք էին արտահանում Ռուսաստան, քան թե ներմուծում էին Իրան: Արտահանման և ներմուծման նման հարաբերակցությունը ոռուսական արդյունաբերության թուլության արդյունք էր: Ռուսական արդյունաբերական ապրանքները դժվարությամբ էին իրենց համար ուղի հարթում իրանում, մինչդեռ ոռուսական զարգացող արդյունաբերությունը զյուղատնտեսական հումքի խիստ կարիք էր զգում: Պատահական չէ, որ բոլոր հայ վաճառականներն այս կամ այն շափով մասնակցում էին իրանական հումքի արտահանմանը: Աստրախանի նահանգապետի վկայությամբ, Իրանի հյուսիսային շրջաններից արտահանված զյուղատնտեսական հումքի 2/3 մասը տեղերում գնում էին Անդրկովկասի հայկական առևտրական տների, գործակալները և արտահանում Ռուսաստան¹³:

Վելլուստության ենթարկելով՝ ուստումնասիրվող Խամանակաշրջանում ոռուս-իրանական առևտրի վիճակը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ 1864 թվականից մինչև 1883 թվականը գործում էր Անդրկովկասի վրայով Արևմտյան Եվրոպայի հետ տարանցիկ առևտրական ուղին, որն էական վնաս էր հասցնում Ռուսաստանի առևտրական շահերին: Հիմնականում հենց այս ճանապարհով էին արևմտակելքուական արդյունաբերական ապրանքները ներթափանցում իրանի հյուսիսային շրջանները, իսկ Ռուսաստան արտահանվող իրանական զյուղատնտեսական հումքի մի մասը վերառուաքվում էր Արևմտյան Եվրոպա: Հայ վաճառականները և Անդրկովկասի վրայով տարանցիկ աշխույժ առևտուր էին վարում: Նրանք իրանի հյուսիսային շրջաններ էին ներմուծում հիմնականում Մարսելի շաքար, որը գնում էին Փոթիում և Թիֆլիսում, իսկ այնտեղից արտահանում էին մետաքսաբոժով, բուրդ, մետաքս և այլ ապրանքներ: Օրինակ, 1873 թվականին նրանք Բաքվի վրայով Արևմտյան Եվրոպա

| $\Phi h^2 L$ | $\Omega_{\text{m}} h$ | σ_8 | βh | γh | $R_{\text{eff}} h$ | $H_{\text{eff}} h$ |
|--------------|-----------------------|------------|--------------------|------------|--------------------|--------------------|
| 1869 | 162.736 | 3.390 | 99.928 | 668 | 133.141 | — |
| 1870 | 137.851 | 1.974 | 108.654 | 192 | 20.543 | — |
| 1871 | 155.765 | 5.008 | $m f_{JW} h^2 h^2$ | 16.439 | — | 168.723 |
| 1872 | 109.804 | 667 | 133.103 | 9'4 | 46.201 | — |
| 1873 | $m f_{JW} h^2 h^2$ | z_{JW}^2 | 134.95 | 1.005 | 15.230 | — |
| 1874 | 61.376 | 250 | 95.356 | 345 | 30.056 | — |
| 1875 | 72.5.0 | 1.113 | 138.080 | — | 81.480 | — |
| 1876 | 85.633 | 610 | 82.651 | 714 | 17.575 | — |
| 1877 | 35.335 | 7.741 | $m f_{JW} h^2 h^2$ | z_{JW}^2 | 21.708 | — |

С. Г. Соловьев. Академик Н. Н. Павлов. ССР, ф. 378, оп. 1, д. 1061, 11383, 11531.

11813, 19151, 12084, 12257.

էին առաքել 308 բեռնակտոր (յուրաքանչյուրը 5 փութ քաշով) բուրդ և 721 բեռնակտոր ցածրորակ մետաքս¹⁴:

Ժամանակակիցների վկայությամբ համարյա ամբողջ հյուսիսային իրանում տարանցիկ շաքարի առևտուրը գտնվում էր հայ վաճառականների ձեռքում: Նրանք, որպես կանոն, շաքարը կամ վաճառում էին ժամկետով, կամ փոխանակում էին տեղական առյանցների բամբակի, բրդի, մետաքսի հետ, ընդ որում բամբակն արտահանում էին Ռուսաստան, իսկ մետաքսը և բուրդը՝ Արևմտյան Եվրոպա: Մասնավորապես Բանդար Դյավում, Շահըրուզում և Սարդեարում այդպես էին վարվում Աղամովների առևտրական տան ներկայացուցիչները, որոնք բուրդը, մետաքսարոֆուրը և ցածրորակ մետաքսն ուղարկում էին Մարսել, մետաքսը՝ Թաւրիդ և Կոստանդնուպոլիս, բամբակը՝ Ռուսաստան¹⁵:

XIX դարի 80-ական թվականներից ոռու-իրանական առևտրում սկսվում է նոր շրջան: Ռուսաստանի արզյունաբերությունը, ճորտատիբական իրավունքի վերացմանը հաջորդած կարճատև լճացումից հետո, սկսում է արագորեն զարգանալ: Սակայն այն հովանավորության կարիք էր զգում: Դա համբնկավ ցարական կառավարության արտաքին քաղաքականության էական փոփոխության հետ: Ցարիզմը տարածվացին նվաճումների քաղաքականությունից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականության, որն ուղեկցվում էր Հովանավորական միջոցառումներով: Ուստի 1883 թվականին անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղին փակվեց: Դա ծանր հարված էր Իրանում արևմտակավորական առևտրին: Զնայած վերոհիշյալ տարանցիկ ուղու փակումից հետո էլ արևմտակավորական արդյունաբերական ապրանքները թափանցում էին Իրանի հյուսիսային շրջանները (Հիմնականում Տրավիդոն-Թավրիզ առևտրական ուղին), սակայն դա չէր կարող փոխհատուցել անդրկովկասյան տարանցիկ ուղու կորուստը: Այսպես, եթե 1882 թվականին Տրավիդոնի վրայով Իրանի տարանցիկ առևտուրը կազմում էր 7.457.075 ռուբլի ոսկով, ապա 1884 թվականին անդրկովկասյան տարանցիկ ուղու փակումից հետո այն ավելացավ

ընդամենը 765.523 ոռութով և կազմեց 8.222.598 ոռութի^{16:}
Ընդ որում ներմուծման ընդհանուր գումարից 3.939.653
ոռութին կազմում էր Տրապիզոնի վրայով իրանական ներ-
մուծման ավանդական ճյուղը՝ անդիմական մանուֆակտու-
րան, մինչդեռ Մարսելի շաքարը որը Անդրկովկասի վրայով
արևմտահվոռպական ներմուծման հիմնական հոդվածն էր,
կազմում էր չնշին գումար՝ 384.242 ոռութի^{17:}

Անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղղու փա-
կումից հետո հայ վաճառականությունը վերակողմնորոշվեց
գեպի ոռուսական արդյունաբերություն, հետագայում դառնա-
լով իրանում Ռուսաստանի առևտրական շահերի զիսավոր
ներկայացուցիչը: Ռուսաստանի արդյունաբերության արագ
զարգացումը, ճանապարհային հաղորդակցության բարելա-
վումը՝ մասնավորապես անդրկովկասյան և անդրկասապյան
երկաթուղիների կառուցումը, նպաստեցին իրանում ոռուսա-
կան արդյունաբերական ապրանքների մրցունակության
բարձրացմանը:

Մյուս կողմից անցյալ դարի վերջից ցարական կառա-
վարությունն սկսեց ամեն կերպ խրախուսել ոռուսական ար-
դյունաբերական ապրանքների արտահանումը: Օրինակ, կա-
ռավարությունը զգալի խրախուսադրամ էր վճարում շաքա-
րի և մանուֆակտուրայի արտահանման համար:

Ռուսական և իրանական շուկաների իրավիճակին քա-
շածանոթ հայ վաճառականներն արագորեն արձագանքեցին
այդ փոփոխություններին և անդրկովկասյան տարանցիկ
առևտրական ուղղու փակումից հետո սկսեցին իրան ներմու-
ծել ոռուսական արդյունաբերական ապրանքներ: Այդ առումով
շաքազանց բնորոշ է Թավրիզ ոռուսական շաքարի ներմուծ-
ման փաստը: Մինչև 1883 թվականը ինչպես այստեղ, այն-
պես էլ ողջ հյուսիսային Իրանում անբաժան կերպով գերիշ-
խում էր Մարսելի շաքարը, որը ներմուծում էին հիմնակա-
նում հայ վաճառականները: Սակայն տարանցիկ ուղղու փա-
կումից հետո՝ 1885 թվականին, Թիֆլիսեցի մի խումբ հայ
վաճառականներ Նախիջևանի վրայով Թավրիզ ներմուծեցին
3.196 փութ 36 ֆունտ շաքար և շաքարավագ՝ 20.634 ոռուր.

ընդհանուր գումարով¹⁸: Խարկովի շաքարի գործարանի արտադրանքի այդպիսի աննշան ներմուծումն, անշուշտ, չէր կարող սասանել Մարսելի շաքարի դիրքերը Թավրիզի շուկայում: Սակայն այն ցույց տվեց Իրանի Հյուսիսային շրջաններ ռուսական շաքարի ներմուծման հեռանկարայնությունը՝ իրանական շուկայի մոտիկությունը և փոխադրման հարմարությունը պայմանավորեցին Մարսելի շաքարի համեմատությամբ ռուսական շաքարի ցածր գները¹⁹:

XIX դարի 80-ական թվականների կեսերից հայ վաճառականները հիմնավորապես հաստատվեցին Իրանի հյուսիսային շրջաններում և իրենց ձեռքը վերցրին ռուսական արտահանման և ներմուծման հիմնական ճյուղերը: Հայ վաճառականների դիրքերն ավանդաբար ուժեղ էին իրանական Աղրեջանում, Գլանում, Մազանդարանում, ինչպես նաև Աստրաբագում և Շահրուդ-Բաստամում:

«Ամբողջ Աղրեջանում արտահանվող (Ռուսաստան) ապրանքների առևտուրը գտնվում է բացառապես հայկական խոշոր ընկերությունների ձեռքում», — նշում էր Հաշվավարկային բանկի թափրիզի բաժանմունքի կառավարից²⁰:

Շահրուդում առևտրական խոշոր շրջանառությունը էին իրականացնում 7 հայ վաճառականներ, որոնք Ռուսաստանից ներմուծում էին երկաթ, շուգուն, պողպատ, շաքար, չթից կտորեղեն, որդաններկ, իսկ Շահրուդից Ռուսաստան էին արտահանում բամբակ, բուրդ, շոր միրդ և ցածրօրակ մետաքս: 1884 թվականին նրանց առևտրական շրջանառության ընդհանուր գումարը կազմում էր 1.590.550 ռուբլի²¹:

Հայ վաճառականներն առանցքային դիրքեր էին գրավում Խորասանի երկրորդ խոշոր քաղաքի՝ Մարզկարի առևտրում: Ֆ. Բառմհարտենի վկայությամբ, Մարզկարում գործում էին հայկական 11 առևտրական ընկերությունների ներկայացուցիչներ, որոնցից 4-ը խոշոր էին²²:

Արխիվային տվյալների համաձայն, 1892 թվականին հայ վաճառականները Մարզկարից Ռուսաստան էին արտահանել 147.000 փութ ապրանք՝ բամբակ, բուրդ, շոր միրդ, Մոռի ընդհանուր գումարը կազմում էր 2.360.000 դռան:

տավորապես նույնքան գումարի էլ ռուսական ապրանքներ՝ էին ներմուծել²³:

Եթե նկատի ունենամք, որ 1892 թվականին Սարդեարից հուսաստան ամբողջ արտահանումը կազմում էր ընդամենը 4.250.000 դրան, իսկ ներմուծմը՝ 5.387.000 դրան գումար²⁴, ապա Հայ վաճառականների բաժինը Սարդեարի արտահանման մեջ կազմում էր 55, իսկ ներմուծման մեջ՝ 45 տոկոս:

Վերլուծելով Իրանում Հայ վաճառականների առևտրական գործունեաթյունը կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն ուրիշ ազգություններին պատկանող վաճառականների, նրանք իրականացնում էին ավելի խոշոր առևտրական շրջանառություն: Զնայած իրենց սակավաթվությանը, Հայ վաճառականները վճռորոշ դիրքեր էին գրավել Ռուսաստանի հետ իրանի հյուսիսային շրջանների առևտրում և Հաջողությամբ մրցում էին ռուսահպատակ և իրանահպատակ մահմեդական վաճառականների հետ:

Աստրաբադի ռուսական հյուսպատոսության տվյալներով, Բարֆոռուշում լայն գործունեությունն էին ծավալել Սարդիս Բոգդյանցը, Ազամովը, Մկրտիչ Ասատորովը, Խաչի Օհանյանցը, Հարություն Հախնազարովը, Թումանյանցը և Մովսես Յուղբաշը: 1884 թվականին նրանց առևտրական ընդհանուր շրջանառությունը հանդում էր 800.000 ռուբլու, մինչդեռ 27 ռուսահպատակ մահմեդական վաճառականների առևտրական շրջանառությունը կազմում էր ընդամենը 400.000 ռուբլի: Մոտավորապես նույնքան էր նաև 10 իրանահպատակ մահմեդական վաճառականների առևտրական շրջանառությունը²⁵:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ռուսաստանի հետ Բարֆոռուշի առևտրի կեսը գտնվում էր Հայ վաճառականների ձեռքում: Տեղին է նշել, որ 1883 թվականին անդրկովվասյան տարանցիկ առևտրական ուղու փակումը բացասաբար անդրադավ այս շրջանում Հայ վաճառականների գործունեության վրա: 1871—72 թվականներին Բարֆոռուշում առևտուր էին վարում Անդրկովվասից եկած մոտ 50 Հայ վաճառականներ, որոնցից 10—15-ը մշտապես լինում էին Մազանդարա-

նում: Նրանք բոլորն էլ վաճառում էին գերազանցապես Մարտկի շաբար և գնում էին տեղական բամբակ: Հայ վաճառմականների առևտրական շրջանառությունը հասնում էր 750.000 թումանի (ավելի քան 2 մլն. ոռորդի արծաթով), այն դեպքում, երբ ոռուահպատակ 50 մահմեղական վաճառականների առևտրական շրջանառությունը չէր անցնում 250.000 թումանից²⁵:

Անցյալ դարի 70—80-ական թվականներից նկատվում է առևտրական կապիտալի համախմբման միտում: Խոշոր վաճառականների ձեռքում զգալի դրամական միջոցներ էին կուտակվում: Մինչույն ժամանակ իրանական բազմազգ վաճառականությունն ավելի սերտորեն էր շաղկապվում ինչպես իրանի, այնպես էլ ևլրոպական երկրների կապիտալիստական արտադրության հետ: Տեղի էր ունենում առևտրական բուրժուազիայի ձեսվորման և հզորացման գործընթաց: Հատկապես արագ էր ընթանում հայ բուրժուազիայի կազմավորումը, որը տնտեսական լայն կապեր ուներ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արևմտահվրոպական երկրներում: XIX դարի վերջից հայ առևտրական բուրժուազիայի ազդեցիկ մի շերտ սերտ կապեր էր հաստատել նաև Իրանում կապիտալիստական արտադրության հետ:

Հայ բուրժուազիայի արտաքին առևտրական գործունեությունն իրանում ևլրոպական երկրների և Ռուսաստանի առևտրատնտեսական մրցակցության կարևոր գործոն էր: Արտաքին առևտրում կողմնորոշվելով հիմնականում դեպի Ռուսաստան հայ բուրժուազիան մեծ շափով նպաստում էր իրանի հյուսիսում Ռուսաստանի առևտրատնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդմանը: Ռուս-իրանական առևտրի զարգացմանը զուգընթաց նա ներթափանցում էր իրանի նորանոր շրջաններ, ընդլայնելով Ռուսաստանի տնտեսական ազդեցության ոլորտները: Մասնավորապես, հայ վաճառականներն ակտիվ գործունեություն էին ծավալել Խորասանի ամենահեռավոր շրջաններում: Անդրկասալյան մարզի Ռուսաստանին միանալուց հետո հայկական խոշոր առևտրական տների և ընկերությունների ներկայացուցիչները հաստատվեցին այստեղ

և սկսեցին վճռորոշ դեր խաղալ Խորասանի առևտում: Օրինակ, Բոշնուրդում լայն գործունեություն էին ծավալել Տեր-Մկրտչեների և Արունովների առևտրական տները, որոնք այնահետեւ Ռուսաստան էին արտահանում բուրդ, բամբակ, մորթի և ներմուծում էին ոստական շաքար, մանուֆակտուրա և թորած նավթ: Նրանց առևտրական շրջանառությունը կազմում էր համապատասխանաբար 150.000 և 200.000 ռուբլի²⁷:

Հայ վաճառականներն ուղղակի առևտրական կալեր էին հաստատել Աֆղանստանի հետ, որտեղից Ռուսաստան էին արտահանում մեծ քանակությամբ խոշոր և մատներ և զղերավոր անասուններ, ընդ որում աֆղանների հետ բոլոր գործարքները կատարվում էին կանխիկ գրամով, որի շնորհիվ նրանք գերազանցում էին առևտուր անել հենց Հայ վաճառականների հետ²⁸:

Հայ բուրժուազիան թափանցում էր Իրանի նույնիսկ այն շրջանները, որտեղ մինչև XIX դարի վերջն անբաժանելիութեն զերիշխում էր Անդիխան: 1901 թվականին Սիսթանում ուստական փոխհյուպատոս Ա. Միլլերը հայտնում էր, որ առաջին ուստահպատակ վաճառականը՝ մերկցի Միքայել Ասատրովը Սիսթանից Ռուսաստան էր ուղարկել տեղական հումքի առաջին քարավանը՝ բաղկացած 14 ուղտաքեռից²⁹:

Նույն Միլլերը 1900 թվականին արքունական խորհրդական Յեցղերի միջոցով Աշխարագի գլխավոր արտահանող ընկերություններին՝ այդ թվում Մնացականով և Տեր-Մկրտչեկ եղբայրներ առևտրական տներին, տեղեկություններ էր հայտնում Սիսթանի առևտորի մասին, նպատակ ունենալով նրանց շահագրգուել այդ շրջանով³⁰: Վերոհիշյալ երկու ընկերություններն էլ լայն կապեր ունեին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Իրանում և կարևոր դեր էին խաղում Խորասանի առևտրում: Պատահական չէ, որ Բիրջանդի գլխավոր վաճառական Հաշի Մոլլա Մուհամեդ Հուսեին Խանը ցանկություն էր հայտնել անմիջական հարաբերություններ հաստատել Տեր-Մկրտչեկ եղբայրների հետ, նպատակ ունենալով նրանց միջոցով ստանալ ուստական մանուֆակտուրա, շաքար, թորած նավթ և թուշե իրեր: Բիրջանդի մեկ այլ վաճառականների հետ³¹:

ռական՝ Աղա Սելիդ Հուսեինն արդեն առևտրական կապերը ուներ Մաշհաղում վերոհիշյալ առևտրական տան ներկայացուցիչ Մէլքումովի հետ և նրա միջոցով ստացվող ոռուական ապրանքների մի մասն այնուհետև առաքում էր Հերթ և Սիբան^{31:}

Ոռուական առևտրի ընդլայնումը հրկոի հարավ-արևելքում և կենտրոնական շրջաններում շոշափելի վնաս էր հասցնում Անգլիայի առևտրատնտեսական շահերին: Ավելին, հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների հայտընվելն իրանի վերոհիշյալ շրջանների տարբեր քաղաքներում, անգլիացիների կողմից գիտվում էր որպես Ոռուաստանի տնտեսական ու քաղաքական ազդեցության ուժեղացման նախանշան: Իրավացիորեն հայ վաւառականներին համարելով իրանում ոռուական շահերի գլխավոր ներկայացուցիչներ, անգլիացիներն ամեն կերպ խոլբենդում էին նրանց առևտրական գործունեության հետագա ընդլայնումը՝ հատկեա իրենց անտեսական ազդեցության ոլորտում:

Միանգամայն բնորոշ է հետեւյալ փաստը: Սկսած 1887 թվականից Թիրմանի նահանգից բուսախեծ էին արտահանում: Սկզբնական շրջանում այն Բանդար Արբասի վրայով արտահանվում էր Հնդկաստան: Հետագայում լավագույն տեսակներն ուղարկվում էին Շիրազ, որտեղից արտահանվում էին Անգլիա, իսկ մնացած մասն առաքվում էր նախկինուղիով: 1898 թվականին «Արգումանով եղբայրներ» հայկական առևտրական ընկերությունն իր քաֆանմունքը բացեց Քիրմանի նահանգի Ռաֆսանջանի օկրուզի Բահրամարադ քաղաքում և սկսեց բուսախեծ արտահանել Ոռուաստան, ընդորում տարեկան արտահանում էր 20 հազար փթից ոչ պակաս^{32:}: Օրինակ, 1904 թվականին Արգումանովների լիազորների միջոցով գնվել և Ոռուաստան էր արտահանվել 150.100 թավրիզի մասն բուսախեծ, որի ընդհանուր արժեքը կազմել էր 120.000 թուման (27.272 փութ՝ մոտ 180.000 ուրբլի)^{33:}.

Վերոհիշյալ առևտրական տունը բացի բուսախեծից Ոռուաստան էր արտահանում նաև բամբակի: Օրինակ, Սպահանում, որտեղից Ոռուաստան էր արտահանվում տարեկան

140.000 փութ բամբակ, հիմնական արտահանող ընկերություններ՝ Արգումանովները, Աղամ Օսերը և Պրոխորովյան Մանուֆակտորան էին, ընդ որում նրանցից միայն Արգումանովներն ունեին հիդրավլիկ մամլիչ³⁴:

Օրինաչափ է, որ բրիտանական հյուպատոսությունը թշնամարար ընդունեց Արգումանովների առևտրական տան բաժանմունքի բացումը Քիրմանում և սկսեց բոլոր միջոցներով խոշընդոտել նրանց առևտրական գործունեության ընդլայնումը: Առևտրական տան դրությունը ծանրանում էր նաև նրանով, որ մինչև 1904 թվականը Քիրմանում չկար ուստական հյուպատոսություն և նրանք որեւէ մեկից օժանդակություն շէին ստանում: Ինժեներ Մատիսենի խոսքերով «...Նրանք (Արգումանովները—Ս. Ս.) անզիական հյուպատոսի աշքի փուշն էին, չէ որ այդ երկու հայերն արգեն ներկայացնում են ուստական ազգեցությունը...»³⁵:

Ինչպես հայ, այնպես էլ ընդհանուր առմամբ, իրանական բուրժուազիայի արտաքին առևտրական գործունեության բնորոշ առանձնահատկությունը մասնագիտացման բացակայությունն էր, ինչը պայմանավորված էր իրանի սոցիալ-տնտեսական զարգացման յուրահատկությամբ: Իրանական շուկայի սահմանափակ հնարավորությունը, բնակչության հիմնական մասի ցածր գնողունակությունը, դրամական հիմնական միավորի՝ դռանի անկայումնությունը, թելազրում էին միաժամանակ և արտահանմամբ, և ներմուծմամբ զբաղվելու անհրաժեշտությունը: Առևտրական խոշոր տները և ընկերությունները, որպես կանոն, արտահանում և ներմուծում էին ոչ թե մեկ, այլ մի քանի տեսակ ապրանք:

«Ընդհանրապես Պարսկաստանում շենք նկատում մասնագիտացում նույն ապրանքի առևտրում: Ընդհակառակը, նկատվում է ինչպես արտահանվող, այնպես էլ ներմուծվող ապրանքների առևտրի ունիվերսալիզմ», — նշում է Մ. Սենցարին³⁶:

Նման ունիվերսալիզմն, ինչպես նշվեց, բնորոշ էր նաև հայ բուրժուազիային: Ռուսական և իրանական շուկաների առանձնահատկությունների, տեղական բնակչության պա-

Հանջմունքների հիանալի իմացության շնորհիվ, հայ վաճառականներն արագորին արձագանքում էին տեղական շուկաներում պահանջարկի փոփոխություններին և կազմակերպում էին այս կամ այն ապրանքի արտահանումը կամ ներմուծումը: Միևնույն ժամանակ, ներկա աշխատության մեջ կատարված վերլուծությունը թույլ է տալիս եղբակացնել, որ իրկար տարիների ընթացքում հայկական խոշոր առևտրական տները և ընկերությունները մասնագիտացել էին որոշակի տեսակի ապրանքների արտահանման և ներմուծման մեջ: Ուշադրավ է նաև այն, որ նրանց առևտրական շրջանառության մեջ սովորաբար գերակշռում էր իրանական գյուղատնտեսական հումքի արտահանումը:

XIX դարի վերջից իրանի արտահանման հիմնական հյուղը դառնում է քամբակը, որի ավելի քան 95 տոկոսն առաքվում էր Ռուսաստան: Հայ առևտրական բուրժուազիան վճռորոշ զիրքեր էր դրավում արտահանման այս բնագավառում: Թվական տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ճշգրտությամբ որոշել նրա տեսակարար կշիռն այդ ապրանքի արտահանման դործում, սակայն ժամանակակիցների միահամուռ վկայությամբ իրանական քամբակի արտահանումը գտնվում էր գերազանցապես հայերի ձեռքում: Մեր տրամադրության տակ եղած աղքատիկ թվական տվյալները ևս այդ են վկայում: Օրինակ, 1892 թվականին Սարգսարից Ռուսաստան էր արտահանվել 105.000 փութ քամբակ՝ 1.679.000 զուան ընդհանուր արժեքով, որից 67.500 փութը կամ արժնքային առումով 1.080.000 զուանը բաժին էր ընկնում հայ վաճառականներին³⁷:

Բննդերեկի տվյալներով հայ վաճառականները Շահրութից Ռուսաստան էին արտահանում տարեկան 92 հազար փութ քամբակ՝ 460.000 ոռորմի ընդհանուր գումարով: Եթե նկատի ունենանք, որ այդ քաղաքից Ռուսաստան էր արտահանվական տարեկան 597.500 ոռորմու քամբակ՝³⁸, ապա հայ վաճառականների տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ կազմում էր ավելի քան 75 տոկոս:

Բամբակի արտադրության մյուս կարևոր կենտրոնը Նիշարուրն էր, որտեղից Ռուսաստան էր արտահանվում տարեկան 120.000 փութ բամբակ 4,2 մլն. դուան ընդհանուր գումարով³⁹: Նիշարուրի բամբակի հիմնական արտահանողներն էին «Տեր-Մկրտիչև եղբայրներ», «Հախնազարյանց, Արիջանց և Քնկ.», «Խալափյանց և Քնկ.» առևտրական տները և Պողնանսկու բաժնետիրական ընկերությունը, որոնք Նիշարուրում ունեին բամբակագոտի գործարաններ: Բացի նրանցից, բամբակի արտահանմամբ զբաղվում էին նաև ուրիշ հայ վաճառականներ, ինչպես, օրինակ, «Ղաջրամանյանց, Մեհրաբյանց և Քնկ.» ընկերությունը, Դանիելյանցը, Աղամյանցը և ուրիշներ:

Բանդար Գյաղում բամբակի ողջ առևտուրը կենտրոնացած էր «Բեղլարյանց և Կարապետյանց» և «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» առևտրական ընկերությունների ձեռքում⁴⁰: Նշված վայրում բամբակի առևտրին մասնակցում էր նաև Թումանյանց եղբայրների առևտրական տունը:

Ամփոփելով վերոհիշյալ փաստերը, կարելի է եղբակացնել, որ իրանական բամբակի արտահանման շուրջ 70 տոկոսը գտնվում էր հայ վաճառականների ձեռքում:

Երկար տարիների ընթացքում Իրանում գործում էր բամբակի հետ կապված առևտրական գործարքների լավ մշակված կայուն ձև: Սովորաբար այդ գործարքները կընքում էին հումքը հավաքելուց դեռ շատ առաջ: Խոշոր վաճառականներն ունեին իրենց միջնորդներ՝ հիմնականում պարսիկներ, որոնք շրջում էին գյուղերում և որպես կանխավճար խոշոր գումարներ էին բաժանում արտադրողներին: Կանխավճարը տրամադրվում էր ոչ միայն դրամով, այլև ներմուծված ապրանքներով՝ շաքարով, թեյով, ալյուրով, լուցկիով և այլ ապրանքներով⁴¹:

Խորասանում բամբակի դիմաց կնքվող գործարքներից, որոնք հայտնի էին «սալֆ» անունով, առանձնապես տարածված էին երկուաը. 1. տրամադրված վարկի դիմաց վերցնում էին 12—15 տոկոս, իսկ բամբակը հաշվում էին այն գնով, ինչով այն գնանշվել էր պայմանագրի ժամանակ, 2. կանչը:

Խավճարի գիմաց տոկոս շէին վերցնում, սակայն բամբակը հաշվում էին 1 խարվար շգտված կամ 30 ման դտված բամբակի գնանշված արժեքից 5—10 դռան էժան⁴²:

Խոշոր վաճառականները բամբակը գնում էին կամ կալվածատերերից խոշոր խմբաքանակով՝ 2000—4000 բաթման, կամ գյուղացիներից՝ փոքր քանակությամբ: Որոշ շրջաններում գոյություն ունեին բամբակի առևտորի յուրահատուկ պայմաններ: Սարգեարում, օրինակ, գոյություն ունեցող սովորության համաձայն բոլոր արտադրողները պարտավոր էին բամբակը հավաքել հատուկ նշանակված օրը: Ոչ ոք իրավունք չուներ խախտել այդ կարգը և բամբակը հավաքել շուրջ կամ ուշ⁴³: Հոգենորականությունը պաշտպանում էր վերոհիշյալ սովորությունը: Սարգեարում բամբակի առևտորվ զրադակած վաճառականները զգալի վնասներ էին կրում այդ սովորության պատճառով, քանի որ տարրեր վայրերում բամբակը հասունանում էր տարրեր ժամանակ, մինչդեռ բամբակի միաժամանակյա հավաքը մեծ շափով որակազրկում էր աղջում արժեքի վրա: Արտահանողների կորուստներն այն և աղջում արժեքի էին, որ նրանցից շատերը, ինչպես օրինակ, Պողոսակին, Ստուկենը, Տեր-Մկրտիչեները, պատրաստ էին տեղի հոգենորականությանը մեծ զումար առաջարկել, միայն թե փերոհիշյալ սովորությունը շեղյալ հայտարարվեր⁴⁴:

Ռուսաստան էր արտահանվում միայն դտված բամբակ: Մինչև անցյալ դարի վերջը այն դտվում էր պարզունակ եղանակով ձեռքով: Միայն դարի վերջին իրանում հանդես եկան առաջին բամբակագոտիշ գործարանները, որոնց մեծ մասը պատկանում էր հայ վաճառականներին:

Իրանական արտահանման մեջ զգալի էր շոր մրգերի՝ շամիչի, չոփ, պիստակի, ընկույզի տեսակարար կշիռը: Դրանց արտադրության հիմնական կենտրոններն էին իրանական Ադրբեյջանը, Ղազվինի շրջակայքը և Խորասանը: Զոր մրգի արտահանումը ևս գտնվում էր զերազանցակես հայ մրգի արտահանումը: Օրինակ, Ուրմիայի շրջանում, որպայմառականների ձեռքով: Օրինակ, Ուրմիայի շրջանում, որպայմառականների շամիչ, հիմնական արտեղից մրգերը սովորաբար պարագաներ էին առաքվում տարեկան 600.000—1.000.000 փութ սարգա (անկորիդ շամիչ), հիմնական ար-

տահանողները Ավետիք և Կարապետ Արզումանյանցները՝ Հասրաթյանցները, Զհանգիր Գուլոյանցը, Զհանգիր Հարությունյանցը, Բուղաղյանց եղբայրները, Զարդարյանցը, Մանասերյանցը, Մշշաղի Ալի Բեկ Երևանցին և «Զոհրաբյանց և Սուլխանյան» ընկերությունն էին⁴⁵:

Մարաղայի, Բինարի, Միանդուրի շրջաններից Ռուսաստան էր արտահանվում տարեկան 500.000 փութ չոր միրգ, ինչպես նաև 120.000 փութ նուշ և ընկույզ: Ամբողջ առևտուրը կենորոնացած էր հայ վաճառականների ձեռքում, որոնցից հատկապես զգալի շրջանառություն էին իրականացնում Թումանյանց և Բուղաղյանց եղբայրները, Աֆթանդիլյանները, Զանյանը, Մանասերյանը, Տեր-Հակոբյանը, Արդումանյանը, ինչպես նաև «Զոհրաբյանց և Սուլխանյան» և «Արտարատ» ընկերությունները⁴⁶:

Խորասանում ևս չոր մրգի հիմնական արտահանողները հայ վաճառականներն էին: Որպես ապացույց բավական է քերել մի քանի փաստ: 1892 թվականին Սարդևարից Ռուսաստան էր արտահանվել 246.000 զռանի՝ 22.000 փութ, չոր միրգ, որից հայ վաճառականներին բաժին էր ընկնում 240.000 զռանը⁴⁷:

Նրանք չոր միրգ էին արտահանում ոչ միայն Շահրուդից, Սարդևարից, Ղուշանից, այլև այնպիսի հեռավոր շրջաններից, ինչպիսին էր Թուրքիա: 1895 թվականին հայ վաճառականներն այդ շրջանից Ռուսաստան էին արտահանել 10 հազար թումանի քիշմիշ և 15 հազար թումանի այլ տեսակների չոր միրգ⁴⁸: Սակայն հետագայում, տեղում չոր մրգի զնի բարձրացման հետևանքով Թուրքիից այդ ապրանքի արտահանումն այլևս շահավետ չէր:

Հայկական որոշ առևտրական ընկերություններ մասնագիտացել էին չոր մրգի արտահանման մեջ: Օրինակ, Թումանյանց եղբայրների առևտրական տունը XIX դարի վերջերին Ռուսաստան էր արտահանում տարեկան ավելի քան 1 մլն. ոուրլու ապրանք⁴⁹, որից շուրջ 300.000 ոուրլին կազմում էր չոր մրգի արտահանումը⁵⁰:

Վաղուց ի վեր հայ վաճառականները կարեսր դեր էին խաղում իրանական մետաքսի արտահանման գործում: XVII դարի կեսերից Արևելա-Հնդկական ընկերության հետ սուր մրցակցության հետևանքով մետաքսի արտահանումն ամբողջովին կենտրոնացավ նոր ջուղայեցի հայ վաճառականների ձեռքում⁵¹: Այս շրջանում մետաքսը Եվրոպա էր արտահանվում Հիմնականում Օսմանյան կայսրության վրա-լով: XVIII դարի երկրորդ կեսին ոռոսական պետությունը զգալի շանքեր գործադրեց իրանական մետաքսի արտահանումը վելքա-կապաց տարանցիկ ուղի փոխադրելու համար: Այդ փորձերը մեծ արդյունք չտվեցին, սակայն հատկանշական է այն, որ XVII դարի վերջին և XVIII դարի ընթացքում այդ ճանապարհով իրանական մետաքսի տարանցիկ առևտուրն ամբողջությամբ կապված էր հայ վաճառականների գործունեության հետ:

Մինչև XIX դարի կեսերը մետաքսը իրանական արտա-
հանման հիմնական ճյուղն էր: Սակայն ինչպես արդեն նշվել
է, 1864 թվականին շերամաբուծության մեջ սկսվեց երկա-
ռատե ճգնաժամ, որը հաղթահարվեց միայն 90-ական թվա-
կանների սկզբին: Ռւշագրավ է այն հանդամանքը, որ XIX դա-
րի վերջից Իրանից արտահանվում էր ու թե պատրաստի մե-
տաքսը, առավել ևս մետաքսյա գործվածքները, այլ մետաք-
սաբոժութը: Դա Իրանի արտաքին առևտում տեղի ունեցած
զգալի կառուցվածքային փոփոխությունների վառ ապացույցն
էր:

90-ական թվականների սկզբից Գիլանում հաստատվել էր կայուն սկզբունք՝ «ումից շերամասերմբ—նրան էլ մետաքսարոժութեա»։ Ֆրանսիական, Հունական և Հայկական առևտրական տները շերամի սերմ էին մատակարարում մետաքսարոժութեա բանառի բացառապես նրանց, որ վերջիններս բոժոքը վաճառեն բացառապես նրանց, ումից ստացել էին սերմը։ Մետաքսի խոշոր գնորդների շարքում զգալի թվով հայեր կային։ Օրինակ, 1905 թվականին Թումանյանց եղայքեր կային։ Օրինակ, 1905 թվականին Թումանյանց եղայքեր առևտրական տունը հույն Խալիկառսի հետ միաբարձրաց առևտրական տունը հույն Խալիկառսի հետ

սին Գիլանում գնել էր 27.000 բաթման մետաքսաբոժոժ, որն այդ տարվա խոշորագույն գործարքներից էր⁵²:

«Հայերը և պարսիկները (շատերը ոռւսահպատակ) ավելի ու ավելի են ներթափանցում մետաքսաբոժոժի գնման բնագավառ և աստիճանաբար դուրս են մղում Գիլանում այդ գործի նախկին հիմնադիրներին՝ հույներին և հվոպացիներին», — նշում է Գիլանում ոռւսական հյուպատոս Ա. Շտրիտերը⁵³:

1906 թվականին Հայ վաճառականները Գիլանում գնել էին ընդհանուր առմամբ 95 հազար բաթման մետաքսաբոժոժ (աղ. 3):

Ա. Պ. Յ Ա Ս Ա Կ 3

Հայ վաճառականների կողմից մետաքսաբոժոժի գնումները Գիլանում
1906 թ. 54

| | Ընկերությունը | Գնման վայրը | Բանակը բաթմաններում |
|----|--------------------------|-------------|---------------------|
| 1 | Պապադուպոլս և Թումանյանց | Իաջտ | 24.000 |
| 2 | Պինատի և Գալստյան | » | 5.000 |
| 3 | Ամէանյանց եղբայրներ | » | 9.000 |
| 4 | Զարաֆյանց | » | 7.000 |
| 5 | Խորտանյանց | » | 8.000 |
| 6 | Տեր-Սարգսյանց | » | 11.000 |
| 7 | Պարոնյանց | » | 4.000 |
| 8 | Տեր-Օհանով | » | 4.000 |
| 9 | Պապադուպոլս և Թումանյանց | Լազիջան | 10.000 |
| 10 | Թումանյանց եղբայրներ | Էնդիլի | 7.000 |
| 11 | Ավագ Ալավերդով | » | 6.500 |

Հայ վաճառականները մետաքսաբոժոժ էին գնում նաև իրանի այլ շրջաններում: Բանգար Գյազում, օրինակ, «Բեդրայանց և Կարապետյանց», «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» առևտրական ընկերություններն, ինչպես նաև Թումանյանց եղբայրները տարեկան գնում էին 1000—2000 փութ մետաքսաբոժոժ⁵⁵:

Իրանական մետաքսի արտահանմանը մասնակցում էին ոչ միայն իրանահպատակ և ռուսահպատակ հայ վաճառականները, այլև Մարսելի հայկական առևտրական ընկերությունները, ինչպես օրինակ, Սիմոն Միրզայանցը, Թուրքիանը և ուրիշներ⁵⁶:

Իրանում գնված մետաքսարոժությը Ռուսաստանի վրայով արտահանվում էր Արևմտյան Եվրոպա՝ Հիմնականում Ֆրանսիա: Դա բացատրվում էր նրանով, որ Ռուսաստանի մետաքսի արդյունաբերությունն աշխատում էր բացառապես տեղական հումքի հիման վրա:

Արտահանման կարեոր ճյուղերից էր բուրզը, որի առևտուրը կենտրոնացած էր Հիմնականում Սարգսարում: Այստեղ հայ վաճառականները գնում էին ոչ միայն Խորասանի, այլև աֆղանական բուրզ: 1892 թվականին Սարգսարից Ռուսաստան էր արտահանվել 114.000 փութ բուրզ, որի կեսից ավելին բաժին էր ընկնում հայ վաճառականներին⁵⁷:

Անհրաժեշտ է նշել, որ Իրանից արտահանվող բուրզն ամբողջությամբ չէր մնում Ռուսաստանում: Որոշ քանակությունն այնուհետև վերաարտահանվում էր Արևմտյան Եվրոպա: Զ. Քերդոնի տվյալներով, հայ վաճառականները Սարգսարից Ռուսաստան էին արտահանում տարեկան $10-12$ հազար հակ բուրզ, որի զգալի մասը վերաառաքվում էր Անգլիա⁵⁸:

Հյուսիսարևելյան Իրանից արտահանվում էր նաև մորթեղն: Այն գնվում էր Հիմնականում Աֆղանստանում և չնշին թագիւր: Այնուհետև, Մեհրաբյանցը, Պահապահանցը, Խալափյանցը և ուրիշներ նիշարութից Ռուսաստան էին արտահանում տարեկան մոտ 162.000 դռանի այծի և ոչխարի կաշի և մոտ 100.000 դռանի աղվեսի և կղաքիսի մորթի⁵⁹:

1909 թվականին իրանական կառավարությունը պայմանագիր կնքեց Աղա Սեթ Ներսեսովի հետ, որով վերջինիս տրվում էր Իրանից գառան մորթու արտահանման մենաշնորհ: Իրավունք, Ներսեսովն իր հերթին այդ իրավունքը զիջեց Արևելի եղբայրներ» առևտրական տանը⁶⁰: Սակայն նրանք եր-

կար շօգտվեցին այդ իրավունքից, քանի որ Ծովասատանի առևտրական շրջանների դժգոհության պատճառով պայմանագիրը չեղյալ հայտարարվեց:

Հայ առևտրական բուրժուազիան լավատեղյակ էր ոռուսական շուկայի պահանջմանըներին և Ծովասատան էր արտահանում ոչ միայն իրանական, այլև ուրիշ երկրների արտադրության ապրանքներ: Լ. Արտամոնովի վկայությամբ, Հայ վաճառականները 1891 թվականին Դուչանի վրայով Աշխարադ էին արտահանել 400 բեռնակառը (յուրաքանչյուրը 5,5 փութ քաշով)⁵¹ 16 հազար թուման ընդհանուր արժողությամբ, անգլիական մանուֆակտուրա և 130 հազար թուման արժողությամբ⁵² 2000 հակ (յուրաքանչյուրը 8 փութ), Հնդկական թէց⁵³: Աշխարադից այդ ապրանքն առաքվում էր Բուխարա և Սամարդանդ, իսկ տեղում մնում էր շնչին մասը: Ծովասատիճանավորների վկայությամբ, Հայ վաճառականները զբաղվում էին նաև այդ ապրանքների մաքսանինգ առևտրով⁵⁴:

Իրանական արտահանման ևս մեկ բնագավառ՝ ձկնամթերքների արտահանումը գտնվում էր Հայերի ձիռքում: Կասպից ծովի հարավային ափին ձկնորսության մենաշնորհ իրավունքը պատկանում էր Լիանոզովներին, ինչի մասին կիսովի ավելի ուշ:

Հայ բուրժուազիան կարուր գեր էր խաղում ոչ միայն իրանական գյուղատնտեսական հումքի արտահանման բնագավառում: Նա բավականին ակտիվ գործունեություն էր ծավալել նաև արտասահմանյան, Հատկապես ոռուսական արդյունաբերական ապրանքների ներմուծման ուղղությամբ: Վերևում արդեն հիշատակվեց Թավլիդ ոռուսական շաքարի ներմուծման առաջին փորձի մասին: Հետագայում Հայ, ինչպես նաև մահմեդական վաճառականների ջանքերով ոռուսական շաքարն աստիճանաբար նվաճեց Իրանի Հյուսիսային շրջանների շուկան: 1909/10 տնտեսական տարում իրանական Աղբբեջան ներմուծված 16.775.761 դրան արժողությամբ շաքարից Ծովասատանին բաժին էր ընկնում 16.771.336 դրանը⁵⁵:

Զնայած XIX դարի վերջից ոռւսական շաքարի ներմուծման գործում ուժեղանում էր մահմեդական վաճառականների մրցակցությունը, այնուամենայնիվ Հայ բուրժուազիան ներմուծման այդ բնագավառում պահպանում էր որոշակի դիրքեր: Օրինակ, Ուրմիայում, որտեղ ոռւսական շաքարի ներմուծումը կազմում էր մոտ 1 մլն. ռուբի, այդ ապրանքի մեծաքանակ վաճառքը գտնվում էր Հիմնականում պարսիկ և Հայ վաճառականների ձեռքում^{64:}

Եսաւ Հաճախ Հայ վաճառականները համաձայնության մեջ էին մտնում ոռւսական այս կամ այն գործարանատիրոջ հետ և միջնորդի գեր խաղում ոռւսական արդյունաբերության և իրանական շուկայի միջև: Օրինակ, Գնիվենի շաքարի գործարանի լիազոր անձը թիֆլիսեցի առաջին գիւղայի վաճառական Կարապետ Մութափովն էր: 1897 թվականին նա ջուղայի վրայով իրան էր արտահանել վերոհիշյալ գործարանին պատկանող 13.879 ֆութ 32 ֆունտ շաքար^{65:}

Հայ վաճառականներից շատերը հատուկ պահեստներ ունեին շաքարը պահելու համար: Թումանյանց եղբայրների էնզելիում գտնվող պահեստը տեղափորում էր 100 վագոն շաքար, Սարուխանով և զբայրներինը՝ 50 վագոն: Այստեղ պահպատմ էր ինչպես վերոհիշյալ ընկերություններին, այնպես էլ մյուս ներմուծողներին պատկանող շաքարը, որի համար համապատասխան վարձ էր գանձվում մեկ կոպեկ փիլիմաց^{66:}

Եթե իրանական Ազգբեջանում, Գիլանում և Մազանդարանում Մարսելի շաքարը երկար ժամանակ մրցում էր ոռւսականի հետ, ապա Հյուսիսարևելյան Իրանի շուկայում անդրկովկասյան տարանցիկ ուղու փակումից անմիջապես հետո անբաժանելիորեն տիրապետում էր վերջինս: Հայ վաճառականները, որոնք մինչև 1883 թվականը ներմուծում էին բացառապես Մարսելի շաքար, վերակողմնորոշվեցին գեպի ոռւսական արդյունաբերություն և գարձան ոռւսական շաքարի գիւղավոր ներմուծողները: 1891 թվականին Բանգար Գյաղի վրայով Շահրուդ ներմուծված 35 հազար ֆութ ոռւսական շաքարից 20 հազարը բաժին էր ընկնում Դավիթ Գրիգորյան-

ցի, Ալեքսանդր Օսիպովի, Խազար թամրիզովի և Փանչանցիր առևտրական գրասենյակներին⁶⁷:

Նույն թվականին Սարգսարի առևտրական գրասենյակները (11-ից 9-ը հայկական էին) Սշխաբագի վրայով ներմուծել էին 16 հազար փութ շաքար: Բացի այդ, Տեր-Պետրոսովը, Յուղաշենք և Աղամովը Բանդար Գյաղի վրայով ներմուծել էին ևս 10 հազար փութ⁶⁸:

Բնեղերի տվյալներով, Շահրուդի 7 հայ վաճառական-ների առևտրական 2րջանառությունն այս ապրանքի գծով կազմում էր 130.000 փութ կամ մոտ 390.000 ռուբլի⁶⁹:

Սակայն հետագայում մահմեդական վաճառականության ուժեղացող մրցակցության հետևանքով հայ բուրժուազիայի տեսակարար կշիռը ուստական շաքարի ներմուծման մեջ աստիճանաբար նվազում է: Օրինակ, 1909/10 տնտեսական տարում Մաշհադ ներմուծված 937.250 ռուբ. շաքարից հայ վաճառականներին բաժին էր ընկնում ընդամենը 120.000 ռուբլին⁷⁰:

XIX դարի վերջից արագորեն ավելանում է ուստական մանուֆակտուրայի ներմուծումը, որը պայմանավորված էր Ռուսաստանում տեքստիլ արդյունաբերության բուռն զարգացմամբ: Այս բնագավառում նկատվում էր ավելի որոշակի մասնագիտացում: Խորասանում գործող հայկական առևտրական տներից և ընկերություններից շատ քշերն էին ըդրապղում ուստական մանուֆակտուրայի ներմուծմամբ, բայց որպես կանոն, նրանք զգալի առևտրական շրջանառություն ունեին: Սարգսարի յոթ ուստահպատակ հայ վաճառականներից միայն «Ղուլյանց և ընկ.» առևտրական տունն էր զբաղվում ուստական կտորեղենի առևտրով: Վերոհիշյալ ընկերության ներկայացուցիչները Սարգսար էին ներմուծում տարեկան 100.000 ռուբլի արժողությամբ ուստական մանուֆակտուրակտուրա⁷¹:

Նույն Ղուլյանցը և վաճառական Եղիազարյանցը Շահրուդ էին ներմուծում տարեկան համապատասխանաբար 3300 փութ (մոտ 100.000 ռուբլու) և 4.400 փութ (մոտ 130.000 ռուբլու) ուստական մանուֆակտուրա⁷²:

Անցյալ դարի վերջից հյուսիսարևելյան հրանում հանդես էն գալիս հայկական առաջին խոշոր առևտրական ընկերությունները, որոնք հաստատվելով Աշխաբադում սկսում են կարենոր դեր խաղալ Խորասանի առևտրում։ Օրինակ, 1908/09 տասեսական տարում Մաշհադ Ներմուծված 9000 հակ ուստական բամբակյա մանուֆակտուրայի ավելի քան 1/3-ը՝ 3.500 փութը, բաժին էր ընկնում «Տեր-Մկրտչիկ եղբայրներ» և «Տեր-Սարգսյանց, Արուտչե և Գևորգյանց» առևտրական տներին⁷³։

Դրանցից առաջինը խոշոր վարկեր էր ստանում Մոսկվայի և Աշխաբադի բանկերից և համաձայնության մեջ էր մտնում ոռուսական արդյունաբերողների հետ։ Զգալի խրա- խուսադրամ ստանալով՝ մաքսատուրքերի վերադարձան ձևով, առևտուրական տունը հնարավորություն ուներ կտորե- ղենը վաճառել ցածր գներով և հաջողությամբ մրցել տեղա- կան վաճառականների հետ (մաքսատուրքերը վերադարձվում էին միայն ոռուսահպատակ վաճառականներին)։ Աշխաբա- դում աշխատելու 30 տարիների ընթացքում Տեր-Մկրտչեա- նը բայց բները ոռուսական կտորեղենի արտահանումից շուրջ 2 մլն. ռուբրու շահութ էին ստացել⁷⁴։

Եթե հյուսիսարևելլան իրանի շուկայում ոռուական մասութակտուրան հաջողությամբ մրցում էր անդիմականի հետ, ապա նույնը չի կարելի ասել իրանի հյուսիսարևմտյան շքը-չանների մասին։ Այստեղ երկար տարիներ կատաղի պայ-քար էր զնում ոռուական, անգլիական, գերմանական և ավ-ստրիական արտադրության գործվածքների միջև։ Այն հատ-կապիս սրվեց միջազգային փոստային համաձայնությանը Ռուսաստանի միացումից հետո։ Դրա հետևանքով Գերմա-նիայից, Ավստրիայից և այլ երկրներից Ռուսաստանի վրա-ւով մեծ թվով փոքրածավալ փոստային ծանրոցներ՝ հիմնա-կանում կտորեցն և անձնապիտո առարկաներ էին ուղարկ-վում իրան։ Այն վաճառականները, որոնք ոռուական կտորե-ղեն էին ներմուծում իրանի հյուսիսարևմուտք՝ ստիպած էին ցուցաբերել ձեռներեցություն, տեղական շուկայի գերա-զանց իմացությունն և նրա պահանջներին արագործն հարմար-

միելու կարողություն։ Հենց այդ հատկանիշների շնորհիվ էլ հայ վաճառականները նշանակալի առևտրական շրջանառություն էին իրականացնում։ Ռուսական մանուֆակտուրայի խոշորագույն ներմուծողները՝ Ավագյանցները, Նազարբեկովները, Բուգազյանցները, Ժամհարովը և յոյւսները գործում էին այն նույն եղանակներով, ինչ Տեր-Մկրտիչները հյուսիսարևելլում։ Հատկանշական է, որ բոլոր հայ վաճառականները դրանքում էին հիմնականում մեծածախ առևտրով, սովորաբար կտորեղենը բաց լողնելով ապահիկ։ Օրինակ, Ավագյանց եղանակները թափրիզում, Սալմաստում, Ուրմիայում և Մարալայում վաճառում էին տարեկան շուրջ 400.000 ռուբլու ռուսական մանուֆակտուրա⁷⁵։ Չբավարարվելով դրանով, նրանք պատրաստակամություն էին հայտնել ընդլայնել իրենց առևտրական գործունեությունը և գործարար կապեր հաստատել Ահարի, Սերաբի, Արգարիլի, Միանդոաբի, Բինարի, Սուլդուլի, Սոուչըրուկաղի, Բանի, Սակիզի, Զենչանի, Համապանի, Թերմանշաշի և Մակիլի մեծածախ վաճառականների հետ, նպատակ ունենալով այդ շրջաններում վաճառել 200.000—250.000 ռուբլու կտորեղեններ⁷⁶։

Հայ վաճառականները մշտափես ընդլայնում էին իրենց առևտրական գործառնության շրջանակները։ Օրինակ, Ս. Ժամհարովը, որը ռուսական կտորեղենի նշանակալի առևտուր էր վարում թափրիզում, նոր բաժանմունք էր բացել Սոուչըրուլաղում, «...որն անմիջապես իր վրա հրավիրեց Սոուչըրուլաղի շրջանի վաճառականների ուշադրությունը»⁷⁷։

Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ շնայած վաճառքի շրջանն արդեն անցել էր, Ժամհարովը մեկ շարաթում վաճառեց մոտ 70 հակ (մոտավորապես 400 փութ) տարբեր տեսակի գործվածք⁷⁸։

Հայ վաճառականները ռուսական մանուֆակտուրայի սոսկական ներմուծողներ չեին։ Հիանալի իմանալով տեղական շուկայի պահանջմունքները, նրանք ձգտում էին հասնել այն բանին, որ դրանք համապատասխանեն տեղական բնակչության ճաշակին և զնողունակությանը։ Միանգամայն օրինաշափ է, որ նրանք դիմում էին Մոսկվայի և Լոձի ֆաբրի-

կատերերին, խնդրելով արտադրել հվորոպական օրինակներին մոտ և իրանական շուկայում լայն պահանջարկ վայելող գործվածքները Միայն այս ձևով կարելի էր դիմանալ արեմտահվորպական արտադրության մանուֆակտուրային իրենի մրցակցությանը:

«Այդ համարքի շնորհիվ, — գրում է Ա. Միլլերը, — այստասահմանյան մանուֆակտուրայի որոշ տեսակներ՝ գերազանցապես գերմանական և ավստրիական, լիովին անհետացել են վաճառքից»⁷⁹:

Երկար տարիների ընթացքում իրանական շուկայում անբաժանելիորեն գերիշխում էին ավստրիական և գերմանական բրդյա գործվածքները: Ըստաստանի ֆինանսների նախարարության գործակալ է. Գրուրիի վկայությամբ, ավստրիական բրդյա գործվածքները իրանում տարածվում էին բացառապես հայ վաճառականների միջոցով⁸⁰: Նրանք, որպես կանոն, ուղղակի կատեր ունեին Վիեննայի հետ և նախապես պատվիրում էին իրենց անհրաժեշտ ապրանքը: Տեղին է նշել, որ բրդյա գործվածքների ներմուծմամբ Ավստրիան առաջին տեղն էր գրավում իրանի արտաքին առեւտրում և գերազանցում էր մյուս բոլոր երկրների ներմուծումը միասին վերսրած:

Բացի ավստրիականից, հայ վաճառականները ներմուծում էին նաև գերմանական բրդյա գործվածքները Թեհրանում այդ ապրանքի անմիջական զնորդները Գասպար Տեր-Մելքոնովը, Յաղղասար Ավագյանցը և Հովսեփ Բաբայանցն էին, որոնցից առաջին երկուսը կտորեղինը ստանում էին Տրապիզոնի ավագիդ ճանապարհով, իսկ վերջինը՝ Մուհամերայի վրայով⁸¹:

XIX դարի վերջին հայ վաճառականների կողմից ուղարկան բրդյա գործվածքների ներմուծման մի քանի անհաջող փորձերից հետո այն կարծիքը հաստատվեց, որ գրանք իրանական շուկայում չեն կարող մրցել ավստրիական և գերմանական նույնատիպ ապրանքների հետ: Սակայն այստեղ հայ վաճառականները ցուցաբերեցին նախանձելի գործնականություն և տեղական շուկայի պահանջմունքների իմաստականություն:

ցություն: 1903 թվականին կոձի ֆաբրիկաների արտադրած բրդյա գործվածքների ներմուծման բավականին հաջող փորձ կատարեց Ռաֆայել Թագեռոսյանը, որը մինչ այդ երկար տարիներ զբաղվում էր ավտորիական գործվածքների ներմուծմամբ: Նա համաձայնության մեջ մտավ ոռուական Հաշվավարկային բանկի հետ և 60 հազար ռուբլու վարկ ստացավ: Այնուհետև, նախապես եղավ Վիեննայում և այնտեղից Իրանում մեծ պահանջարկ վայելող բրդյա իրերի նմուշներով մեկնեց կոձ: Տեղի ֆաբրիկատերերը դրանց հիման վրա պատրաստեցին համապատասխան գործվածքներ, որոնք ուղարկվեցին Իրան: 1903 թվականին Ռ. Թագեռոսյանը լոձից Իրան ներմուծեց շուրջ 85 հակ՝ մոտ 40 հազար ռուբլու բրդյա իրեր⁸²:

Հաշվավարկային բանկի ժառայող Ռ. Առամանովի վկայությամբ, Ռ. Թագեռոսյանը ժամանումը Թէհրան ցնցող տպավորություն թողեց տեղի շուկայում: Դեռևս շստացված ապրանքի կեսից ավելին վաճառվեց ըստ նմուշների: Սակայն տեղի վաճառականներին ամենից շատ զարմացրեց այն, որ կոձի բրդյա գործվածքները զգալիորեն ավելի էժան էին, քան Վիեննայինը⁸³: Այդ հանգամանքը խիստ անհանգստացրեց հայ վաճառականներին, որոնք մեծ շափերով ավստրիական բրդյա գործվածք էին ներմուծում և վախենում էին նմանատիպ ոռուական ապրանքների մրցակցության ուժեղացումից: Միենայն ժամանակ Թագեռոսյանը փորձը ցույց տվեց, որ առևտրի հմուտ կազմակերպման դեպքում ոռուական բրդյա իրերը կարող են նվաճել իրանական շուկան: Պատահական չե, որ հետագայում ներմուծման այս բնագավառում Ռուսաստանը սկսեց հաջողությամբ մրցել Ավտորիայի, Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Բարեվում նավթարդյունաբերության զարգացմանը զուգընթաց հայկական առևտրական ընկերությունները և առանձին վաճառականներ սկսեցին Իրան ներմուծել թորած նավթ և այլ նավթամթերքներ, որոնք անհրաժեշտ էին ինչպես տեղական բնակչության պահանջարկը բավարարելու, այնպես էլ XIX դարի վերջից Իրանում հանդես եկած առաջին բամբակազտիւ

գործարանների կարիքները հոգալու համար: Օրինակ, 1915 թվականին վաճառական Հակոբյանցը իրան էր ներմուծել 40 հազար փութ թորած նավթ: Ժամհարովը, որը ջուղայում նավթամթերքների մեծ պահեստարան ուներ, ներմուծել էր 50 հազար փութ թորած նավթ և 5 հազար փութ այլ նավթամթերքներ: Սուլխանյանց ընկերության լիազոր Հովհաննես Սուլխանյանցը Թավրիզ էր ներմուծում ամսական 3 հազար փութ, իսկ Բուդապեշտանցի լիազոր Միխայլովը՝ 4 հազար փութ թորած նավթ⁸⁴:

Սովորաբար հայ վաճառականները նավթամթերքներ էին ներմուծում իրանի սահմանամերձ շրջանները: Նրանցից ոմանք նույնիսկ համաձայնության մեջ էին մտնում Բաքվի խոշոր նավթարդյունաբերողների հետ, նպատակ ունենալով իրենց մնանաշնորհը դարձնել նավթի ներմուծումն իրանի այս կամ այն շրջան: Օրինակ, ոռոսահպատակ հայ վաճառական Օսիովյանցը պայմանագիր էր կնքել «Նորել» ընկերության հետ, որի համաձայն վերջինս Աշխարագից Խորասան արտահանվող նավթը վաճառում էր միայն վերոհիշյալ վաճառականին⁸⁵: Ռնականաբար, այդ գործարքի հետևանքով Խորասանում նավթի զինք պալիորեն բարձրացավ, իսկ ներմուծումը կրճատվեց: Այն խիստ գգոռհություն առաջացրեց Սարգսեարի վաճառականնության շրջանում, որը մինչև պայմանագրի կնքումը բավականին շահավետ գնով ոռոսական նավթը վաճառում էր Խորասանում, ինչպես նաև Եղբում, Քիրմանում և Քաշանում⁸⁶:

Վերջին հաշվով «Նորել» ընկերությունը ստիպված էր վիշտան գնալ և հայտարարել, որ համաձայնագրի ժամկետը լրանալուց հետո (պայմանագրիրը կնքվել էր 1 տարով) այն շի վերանորոգվի:

Էնդելում և Ռաշտում ոռոսական նավթի խոշորագույն ներմուծողներից մեկը Մ. Սարուխանովն էր: Նա մի քանի պահեստարաններ ուներ էնդելում և նավթը ներմուծում էր հատուկ այդ նպատակի համար պատվիրված նավերով: 1904 թվականին Սարուխանովը համաձայնության մեջ մտավ վաճառականներ Ալիսի և Ռամազանովի հետ, որի հետևան-

քով ստեղծվեց սինդիկատ: Վերջինս էնգելի էր ներմուծում տարեկան 800 հազար փութ թորած նավթ⁸⁷:

Սակայն շուտով հանգես եկավ նոր ներմուծող՝ Ֆախրացին և պայքարը սրվեց: Սարուխանովը ստիպված էր նավթի էժանացման նոր ուղիներ փնտրել: Այդ նպատակով նրա լիազոր Աթարեկովը դիմեց Ռուսաստանի ֆինանսների նախարար Վիտտեին, խնդրելով թույլ տալ Բաթումի վրայով առանց մաքսի իրան ներմուծել 20 հազար փութ արտասահմանցան թերթավոր երկաթ, որն անբարժեշտ էր նավթի համար թիթեղամաններ պատրաստելու համար⁸⁸:

Ռէշագրավ է այն փաստը, որ 1905 թվականին նույնպիսի խնդրանքով Ռուսաստանի ֆինանսների նախարարին էր դիմել իրանում լավ հայտնի Թումանյանց եղբայրների առևտրական տան ներկայացուցիչ Սարգսի Թումանյանցը⁸⁹: Դա առավել ևս հետաքրքիր է, որովհետև Թումանյանցները մինչ այդ շեխն զրազվել նավթի ներմուծմամբ: Կարելի է ենթադրել, որ Ֆախրացիի կողմից անընդհատ ուժեղացող մրցակցությունը Սարուխանովին ստիպում էր գանել նոր գործընկեր ի դեմս Թումանյանցի, մրցակիցներին շեղորացնելու և թորած նավթի ներմուծումն ամբողջովին իր ձեռքում կենտրոնացնելու համար:

XIX դարի վերջին XX դարի սկզբին իրանում գերիշխում էր մանր և միջին առևտրական կապիտալը: Վաճառականների ճնշող մեծամասնությունը սահմանափակ կապիտալ ուներ: Առևտրական խոշոր շրջանառություն իրականացնող վաճառականների մի քանի տասնյակ էին: Տեղի վաճառականների ձեռքում զգալի դրամական միջոցների կենտրոնացմանը խոշընդոտում էին իշխանությունների մըշտական շարաշա՞ռումները, վաճառականների անձի և դուքի անձեռնմխելիության բացակայությունը, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի հակազդեցությունը: Հայ վաճառականության շրջանում ևս գերակշռում էին մանր ու միջին առևտրականները: Սակայն անցյալ դարի վերջից հանգես են գալիս հայկական առաջին խոշոր առևտրական ընկերությունները, որոնք արդեն նշանակալի առևտուր էին վարում և կարենու

դեր էին խաղում իրանի արտաքին առևտրում։ Այսպես-
«Տեր-Մկրտչև հղայրներ» առևտրական տունն իր բաժան-
մունքներն ուներ հյուսիսարևելյան իրանի շատ շրջաննե-
րում՝ Մաշհաղում, Շահրուղում, Սարգսարում, Ղուշանում,
Թուրքաթե-Հայդարիում և այլուր։ Նրա առևտրական գործառ-
նությունները ներառնում էին նաև Սիսթանը և Աֆղանս-
տանը։ Ընկերությունը զբաղվում էր հիմնականում ոռուա-
կան մանուֆակտորայի, շաքարի ներմուծմամբ և իրանա-
կան բամբակի ու բրդի արտահանմամբ։ Արդեն անցյալ դա-
րի վերջին ընկերության տարեկան առևտրական շրջանառու-
թյունը հասնում էր 800.000 ռուբլով⁹⁰։

Մոտավորապես նույնպիսին էր վաճառականն Ասլան-
յանցի առևտրական շրջանառությունը, որը ներմուծում էր
ոռուական շաքար և Ռուսաստան էր արտահանում զառան
մորթի և շոր միրգ⁹¹։

Արագորեն աճում էր Արդումանով եղբայրների առև-
տրական շրջանառությունը, չնայած նրանք իրանում սկսել
էին գործել միայն XIX դարի վերջից։ Այս առևտրական տու-
նը ներկայացուցիչներ ուներ Սպահանում, Թեհրանում, Ռաֆ-
սանջանում, Զամաղանում և Ռուսաստան էու արտահանում
ավելի քան 600.000 ռուբլու բուսախեժ, շոր միրգ, բամբակ և
կաշի⁹²։

Իրանի հյուսիս-արևելյան գործող խոշորագույն առև-
տրական տներից մեկը «Նասիրյանց և Տեր-Պետրոսյանց»
ընկերությունն էր, որն Իրանից արտահանում էր շոր միրգ և
բամբակ ու ներմուծում էր ոռուական շաքար և երկաթ⁹³։

Իրանի հյուսիս-արևելյան գործող խոշորագույն առևտրու-
թյան մեջ մեջ մասնակի առևտրականության դրծու-
ման մասին առաջարկ էր կատարել Հանգամանորեն անդրիշտ և
ուղարկել առաջարկ Հայկական առևտրական շրջանառությունն անց-
նում էր մի քանի հարյուր հազար ռուբլուց։

Վերլուծելով Իրանում հայ վաճառականության դրծու-
ման դաշտը, հարկ ենք համարում ավելի հանգամանորեն
անդրագառնալ հայկական առևտրական ընկերություններից
խոշորագույնի՝ «Թումանյանց եղբայրներ» առևտրական
առան գործունեությանը, որը բացառիկ կարեոր էր խա-

դրւմ Իրանի անտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Սսպարեզ իշխելով անցյալ դարի 70-ական թվականներին, այն արագորեն ծաղկում ապրեց և կարճ ժամանակում դարձավ Իրանի խոշորագույն առևտրաֆինանսական հաստատություններից մեկը: Թումանյանցները բաժանմունքներ ունեն հյուսիսային Իրանի բոլոր խոշոր կենտրոններում՝ Թավրիզում, Ռումիայում, Ղազվինում, Թէհրանում, Ռաշտում, Էնդելիում, Բարֆուչչում, Շահրուդում, Սարգսարում, Մաշհադում և արդեն XIX դարի վերջին միլիոնանոց առևտուր էին վարում Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ: Առևտրական տունը մասնագիտացել էր չոր մրգի, բամբակի, մետաքսարօսոմի արտահանման բնագավառում: Այդ ապրանքների մի մասը Մոսկվայի, Բաքվի, Աստրախանի բաժանմունքների միջոցով արտահանվում էր Արևմտյան Եվրոպա:

«Նրա առևտրական շրջանառությունն այնքան է աճելու որ Իրանի այսպես կոչված «ռուսական ազգեցության գոտում», առանց նրա գրասենյակի համաձայնության առևտրական ոչ մի գործարք չի կարող կնքվել...»—նշում էր գրիգորյանը Ցիսը 1916 թվականին⁹⁴:

Ռուսաստանի հետ առևտրական գործարքները հեշտացնելու և տեղական իշխանությունների կամացականություններից իրենց ապահովագրելու համար Թումանյանց շորս եղբայրներից երկուսը ռուսական հպատակություն ընդունեցին և հաստատվեցին Բաքվում: Առևտրական տան հետագա ողջ գործունեությունը սերտորեն կապված էր ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի հետ: Այստեղ նրանք դարձան նորեկի, կիանողովների բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև «Գինամո»-ի և Բաքվի նավթային ընկերության փայտերերի:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին առևտրական տան կանխիկ կապիտալն Իրանում կազմում էր 3 մլն. թուման և ևս 1,5 մլն թուման պարտքի հանձնառության ձևով⁹⁵:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո Ռուսաստանում առևտրական տան ողջ ոճեցվածքը՝ շուրջ 17 մլն. ռուբլի, բռնագրավվեց⁹⁶:

Հայ վաճառականների առևտրական շրջանառության զգալի մասն իրականացվում էր կասարից ծովով, որտեղ հիմնական տրանսպորտային ընկերությունները «Կովկաս և Մերկուրիա»-ն, «Նադեժդա»-ն և Արեւլյան ընկերությունն էին: Սակայն Հայ վաճառականներից շատերը սեփական նավեր ունեին և իրենք էին իրականացնում ապրանքների տեղափոխությունը: Օրինակ, Թումանյանց եղբայրների առևտրական տունն ուներ 2 նավ՝ 1.269,5 տոննա տարրողությամբ⁹⁷, Սեփական նավեր ունեին նաև Սարուխանովները, Լիանովովները և ուրիշներ, որոնցից մի քանիսը զգալի ապրանքաշրջանը և առևտրական ներքին աղյուսակը:

Աղյուսակ 4

1901 և 1902 թվականներին Բանդար Գյաղ այցելած Հայ վաճառականներին պատեհանգ նավերի ապրանքաշրջանառությունը⁹⁸:

| Հայկական թ. ան անդամութեան | Հայկական թ. ան անդամութեան | 1901 թ. | | 1902 թ. | |
|----------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|----------------------------|
| | | Հայկական թ. ան անդամութեան |
| Թումանյան ներքեր | 2 | 9.419 | — | 69.339 | 42.910 |
| Սարուխանովներ | 2 | — | — | 47.338 | — |
| Լիանովովներ | 2 | 22.283 | 5.213 | 23.926 | 3.947 |
| Ազետով | 1 | — | — | — | — |
| Բեղլուրյանց և ընկ. | 1 | 34.842 | — | 4.120 | 2.937 |
| Վարդապարով | 1 | 234 | — | — | 2.017 |
| Աղամով | 1 | — | 1.200 | — | — |

Համեմատության համար կարելի է նշել, որ 1902 թվականին ամենամեծ ապրանքաշրջանառությունն ուներ «Կովկաս» և «Մերկուրի» ընկերությունը (15 նավ՝ 284.014 ֆութ,

այնուհետև Հուսեինովը՝ 122.105 փութ, «Նադեժդա»-ն՝ 112. 943 փութ և Արևելյան ընկերությունը՝ 66.210 փութ⁹⁹:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանում գործում էին բազմաթիվ բաժնետիրական առևտրական ընկերություններ։ Դրանց ստեղծումը թելադրվում էր օտարերկրյակապիտալի հետ հաջողությամբ մրցելու նպատակով ազգային առևտրական կապիտալի միավորման անհրաժեշտությամբ։ Որպես կանոն, այդ ընկերությունները միավորում էին մահմեղական վաճառականներին, սակայն հիմնազդրվում էին նաև հայ վաճառականների բաժնետիրական ընկերություններ։

1899 թվականի հունիսի 22-ին մի խումբ հայ վաճառականներ իրանում և Ռուսաստանում առևտրաարդյունաբերական գործունեություն ծավալելու նորատակով հիմնադրեցին «Արաքս» առևտրական տունը։ Այն բաղկացած էր հիմնադիր, իսկական և ավանդատու անդամներից։ Առևտրական տան հիմնադիր անդամներն էին Շուշի քաղաքի բնակիչ, ոռուսահայատակ Ալեքսան Տեր-Հարությունի Տեր-Օհանովը (նախագահ), Թավրիզի բնակիչներ, իրանահայատակներ Արքատակես Գասողարի Հակոբյանցը (կարգադրիչ անդամ), Ռաֆայել Մինայի Գրիգորյանցը և Սարգս Արքահամի Վարդանյանցը։ Շրջանառու կապիտալը բաղկացած էր 3600 ռուբլի արժողությամբ 30 բաժնետոմսերից¹⁰⁰։ Ցուրաքանչյուր հիմնադիր կամ իսկական անդամ իրավունք ուներ ձեռք բերել 1 կամ 2 բաժնետոմս, սակայն ցանկացողները կարող էին ձեռք բերել ևս 3 բաժնետոմս, լրացուցիչ ձեռք բերված յուրաքանչյուր բաժնետոմսի համար վճարելով տարեկան 270 ռուբլի։ Պայմանագրի համաձայն առևտրական տան կապիտալը չափեաք է գերազանցեր 150.000 ռուբլուց¹⁰¹։

Պայմանագրի յոթերորդ հոդվածի համաձայն «...նրա (առևտրական տան—Ս. Ս.) անդամներից ոչ մեկն իրավունք չուներ դառնալ այլ ընկերության մասնակից կամ գործընկեր, ինչպես նաև վարել սեփական առևտրական կամ միջնորդական գործեր, հակառակ դեպքում զրկվում էր իր կապիտալի 20 տոկոսից հօգուտ առևտրական տան»¹⁰²։

Հնկերությունը՝ զբաղվում էր հիմնականում նավթաշմբերների, չոր մրգի, մետաքսի և մուշտակեղենի առևտությունների առևտությունների տան գլխավոր զբասենյակը գտնվում էր Բաքվում, բաժանմունքները՝ Աստրախանում, Օգեսայում, Աշխարադում, Սամարդանդում, Նիմնի Նովգորոդում, ինչպես նաև Թիֆրանում, Թավրիզում, Ռաշտում, Ղազինում, Շահրուդում և այլ քաղաքներում¹⁰³:

Յավոք, մեր տրամադրության տակ շկան հանդամանաւից ավագաներ առևտության տան գործարքների վերաբերյան սակայն առկա նույնիսկ կցկատուր տեղեկությունները վկայում են, որ այն լայն գործունեաւթյուն էր ծավալել Իրանի հյուսիսային շրջաններում։ Առևտության տան Ղազինի գործակալ Ա. Սարգսյանցը 1899 թվականին գեկուցում էր «... մինչև այժմ... առարգված է շուրջ 30 հազար փութ սարգա և 500 բնունակտոր նույշ»¹⁰⁴:

Առևտության տան ներկայացուցիչները մեծ քանակությամբ բամբակ էին գնում Ղազինում, Գումում, Զերենգում, 1901 թվականի հունվարին նույն գործակալը հայտնում էր, որ Ղազինում գնել է 35.390 բաթման բամբակ, Զերենգում՝ 12.000, Գումում՝ 47.390 բաթման, որից Ռուսաստան էր առաքել 1176 հակ¹⁰⁵:

Սակայն առևտության տան գործունեաւթյունը երկար շաբաթունակվեց։ Արգեն 1901 թվականի նոյեմբերին այն դադարեցրեց իր առևտության գործարքները։ Պատճառները երկուսն էին՝ 1900 թվականին Ռուսաստանում սկսված առևտությունների միջև ծագած տարածայնությունները։

1900 թվականի փետրվարի 1-ին իրանահպատակ վաճառականներ Եղիազար Օհանի Օհանովը, Ստեփան Սերգոյի Սարգսյանը և ուստահպատակ Հակոբ Մելքոնի Էլիքեկովը հիմնեցին «Արարատ» առևտության ընկերությունը¹⁰⁶։ Հնկերության կենտրոնը գտնվում էր Թավրիզում, բաժանմունքները՝ Մարազայում, Ռումբայում, Ղուշանում։ Հիմնագիր անդամներից յուրաքանչյուրն ընկերության հիմնական կապիտալը

տալի հաշվին մուծել էր 10 հազար թուման (1900 թվականի կուբոսով 18 հազար ռուբլի): Այսպիսով հիմնական կապիտալը կազմում էր 54 հազար ռուբլի¹⁰⁷:

Ընկերության գործունեության ժամկետը որոշված չէր, սակայն նրա անդամներից ոչ մեկն իրավունք չուներ երեք տարվա ընթացքում գորս գալ ընկերության կազմից: Պայմանագրի 5-րդ կետի համաձայն առևտրաարդյունաբերական բոլոր գործարքները պետք է կնքվիին ընկերության անունից, որի անդամներն իրավունք չունեին սեփական առևտրական գործեր վարել: Եթե ընկերության անդամներից որևէ մեկն իր բաժնից ավելի էր մուծում գրամարկով, ապա կարող էր լրացնել մուծված գումարի դիմաց ստանալ տարեկան 12 տոկոս, իսկ եթե պարտք էր մնում, պարտավոր էր վճարել 12 տոկոս: Ընկերությունն արտահանում էր գերազանցապես շոր միրգ և մուշտակեղեն և ներմուծում էր սուսական շաքար, կտորեղեն, ալյուր, թուզի: Այն իր ներկայացնելի ուներ Մոսկվայում և մասնակցում էր Բաքվի և Նիժնի Նովգորոդի ամենամյա տոնավաճառներին¹⁰⁸:

Չնայած սահմանափակ կապիտալին, ընկերությունը բավականին ակտիվ գործունեություն էր ծավալել իրանում և այն շարունակեց նաև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո:

Սուաշին համաշխարհային պատերազմի նախօրյակին թափրիզում գործում էր «Զինիֆրուշան» առևտրական ընկերությունը, որի անդամներն էին Բաղդասարյանց եղբայրները, Վարդանյանցը և Տեր-Կարապետյանցը: Ընկերությունը Ռուսաստանից ներմուծում էր անային գործածության պղնձյա և այլ մետաղյա իրեն և վաճառում թափրիզում, Դիլմանում, Ուրմիայում և Սոուչժրուլաղում: Ցավոք, մենք տըլյալներ շունենք ընկերության հիմնական կապիտալի և առևտրական շրջանառության ծավալի մասին: Այդ մասին կարելի է դատել միայն անուղղակի տվյալներով: Օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց մի քանի ամիս առաջ ընկերությունը Ռուսաստանում գնել էր 20 հազար ռուբլու տնային գործածության պղնձյա իրեր¹⁰⁹:

Հնկերության անդամ Մ. Բաղդասարյանի՝ Ազգային պատմական գլխավոր հյուպատոսին հղած դիմումից պարզ փայլ է, որ 1914 թվականի դեկտեմբերին թուրքերը և քրդերը կողապահել եին ընկերության Դիմանում, Արմիայում և Սոսուշը լաղում դատվող պահստաները և խանութները և տարեկան 50 հասար ռազմի առջևողությամբ ապրանք¹¹⁰:

Բնորոշ է այն փաստը, որ սովորաբար այդ ընկերություններում ընդորևկվում էին ինչպես իրանահպատակ, այնպես էլ ուսանակատակ Հայ վաճառականներու Դա թելադրվում էր երկու երկրներում էլ ազգայ առևտուր վարելու ձըգտամբը: Մյուս կողմից զրա շնորհիկ վերտիշալ ընկերությունները գտնվում էին ուսական Հյուսպատունների հովանավորության ներքո, որը Իրանում սովորական երեսութ հանդիսացն կամացականությունների և շարաշահումների պայմաններում շահառանու եառելու հանգամանք էր:

ասսերում շափականց կարևոր հասկառակաք է միջնական գամաձայնության մեջ երեսն հայ վաճառականները համաձայնության մեջ էին մտնում նաև պարսիկ վաճառականների հետ Օրինակ, 1899 թվականին Թումանյանց եղբայրները համաձայնության նական ժամանակակիցների հետ Օրինակ, Աղա Մրուլ Բաղի Արքարիի, Հաջի Արքուլ Ռաշապ Օսկովիի և Հաջի Մուհամեդ Ալի Քաշիի հետ Նրանք պայմանագիր կը նշեցին Հաշվավարկային բանկի հետ, որի համաձայն վերջինս ֆեցին Հաշվավարկային բանկի հետ, որի համաձայն վերջինս պարտավորվում էր վերջինից առ վաճառականների համար բարեվում զնել և թեհերան ուղարկել 100.000 փութ ցորեն: Ապրանքու ժամանակակիցն ունենալ և առարկել էր¹¹¹.

Սակայն մամականները եղանակություն ունեն առաջարկ սպառագիտ վաճառականների հետ:

բարեգոր վաճառականները չեն: Քննչանիւնը վերևում ասվածը, կարելի է եպա-
կացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ բուր-
ժուազիան կարեռ գեր էր խաղում իրանի արտաքին առե-
տրում: Հիմնականում նրա ձեռքում էին գտնվում իրանական
արտաքանաման այնպիսի կարեռ ճյուղեր, ինչպիսիք էին
բամբակը, շոռ միրգը, բուրդը, ձկնամթերքները և այլն: Ներ-
105.

մուժման բնագավառում հայ բուրժուազիան կողմնորոշվելով գերազանցապես դեպի ոռւսական արդյունաբերություն մեծ շափով նպաստում էր Իրանում Ռուսաստանի առևտրատնտեսական զիրքերի ամրապնդմանը և արևմտահվրոպական երկրների հետ նրա հաջող մրցակցությանը։ Հիմնականում նրա գործունեության շնորհիվ էր, որ հյուսիսային Իրանում գերիշուում էր ոռւսական ազգեցցությունը։ Ավելին, հայ վաճառականների կողմից առևտրի հմուտ կազմակերպման շնորհիվ ոռւսական արդյունաբերական ապրանքները ներթափանցում էին Իրանի նորանոր շրջաններ, այնտեղից դուրս մղելով արևմտահվրոպական առառարկաներ։

Մինույն ժամանակ հայ բուրժուազիայի առևտրական գործունեությունը կարեոր նշանակություն ուներ նաև իրանի համար: Այն ոչ միայն նպաստում էր երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, այլև պահպանում արտահանման և ներմուծման մոտավոր հավասարակշռությունը ոռու-իրանական ընդհանուր առևտրական հաշվեկշռում:

ՀԱՅ ԲՈՒՐՃՈՒՍ.ԶԻԱՅԻ ԶԵՂՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ԴՈՐԾՈՒՆԵՌՅՈՒՆԸ Ա.ԲԴՅՈՒՆՆԱ.ԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անցյալ դարի վերջին Իրանում օբյեկտիվ նախադրյալ-ներ էին ստեղծվել ֆարբիկագործարանային արդյունաբերության զարգացման համար։ Սակայն Իրանի ռեալ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները չեին նպաստում դրան։ Առևտրական կապիտալի փոխարկումը արդյունաբերականի և կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկատիրության զարգացումը շափականց դանդաղ էին ընթառնում,

Իրանում ֆարբիկագործարանային արդյունաբերության ստեղծման առաջին լուրջ փորձերը ձեռնաբերկեցին XIX դարի կեսերին և կապված էին շահի առաջին նախարար Միրզա Թաղի խանի գործոներթյան հետ։ Լինելով հեռատես քաղաքական գործիչ, նա հասկանում էր ազգային արդյունաբերության զարգացման և այդ նպատակով կազրերի պատրաստման անհրաժեշտությունը։ 1849 թվականին Միրզա Թաղի խանի նախաձեռնությամբ, մի խումբ իրանցի երիտարարություններ մեկնեցին Մոսկվա և Պետերբուրգ ուստական ձեռնաբերություններում ժամանակակից արդյունաբերական արշարկություններում ժամանակակից արդյունաբերական արշարկությունն ուսումնասիրելու համար։ Որոշ ժամանակ տապրությունն ուսումնասիրելու համար գործարացիցին առաջ մասնագետները վերադարձան Իրան և այսոեղ բանց այդ մասնագետները վերադարձան Իրան և այսուհետ բարեկանում, առաջին գործարանները՝ բյուրեղապակու գործարացիցին առաջ մասնագետները վերադարձանները՝ Սարիում և Բարփնը՝ մոռականում, շաբարի գործարանները՝ Սարիում և Բարփնը՝ մոռականում։

1857 թվականին իրանական կառավարությունը ֆրանսիա ուղարկեց 17 մարդուց բազկացած ևս մեկ խումբ՝ մահուգի, ճենապակու և թղթի արտադրությունն ուսումնասիրելու համար²:

Սակայն Միրզա Թաղի խանի այս ձեռնարկումներն անհրաժեշտ աջակցություն չստացան: Ավելին, նրա մահից հետո բոլոր այդ ձեռնարկությունները դադարեցրին իրենց գործունեությունը: Ճիշտ է, մինչև 60-ական թվականների կեսերն իրանում կառուցվեցին թելերի արտադրության, փամփուշտի և գազի մի շարք ձեռնարկություններ: Սակայն 90-ական թվականների սկզբին իրանի ամենանշանավոր արդյունաբերական ձեռնարկությունը Հաջի Մուհամեդ Շասան Ամին էս-Զարբի կողմից 1885—86 թվականներին Ռաշտում կառուցված մետաքսաթելի գործարանն էր, որի սարքավորումներն ամբողջությամբ ստացվել էին Լիոնից: Գիշանում ուստական հյուպատոս Շարիտերը նշում էր, որ վերոհիշշալ գործարանում տեղադրված էին ամենավերջին արտադրության մեքենաներ³: Այն մշակում էր տարեկան 10—20 հազար բաթման մետաքսարոժություն: Արտադրանքը բարձր որակի էր և արտահանվում էր բացառապես Արևմտյան Եվրոպա՝ Լիոն, Մարսել, Միլան⁴:

Ռաշտում գործում էր մետաքսաթելի ստացման ևս մեկ գործարան, որը պատկանում էր Ազա Մուհամեդ Շասան Ռաշտիին: Սակայն այն երկար գոյություն չունեցավ և շուտով փակվեց:

XIX դարի վերջից իրանում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու փորձեր էին ձեռնարկում ու միայն աղքային, այլև օտարերկրյա կապիտալի ներկայացուցիչները: 1888 թվականին բելգիական մի ընկերություն լուցկու Փարոիկա կառուցելու իրավունք ստացավ, սակայն գործարանն այդպես էլ չկառուցվեց: 1890 թվականին և Պոլյակովի ստեղծած «Փարուկաստանում առևտորի և արդյունաբերության ընկերություն»-ը թե՛րանից ոչ ճեռու գտնվող հերազին վայրում կառուցեց լուցկու գործարան, որի շինարարության համար ծախսվել էր 20 հազար ֆունտ ստեն-

ժինք⁵: Սակայն շուտով այն փակվեց, որովհետև գործարանի տեղը չափաղանց անհաջող էր ընտրված: Թեհրանի շրջակայքում, որտեղ կառուցված էր գործարանը, անտառներ չկայիին և ընկերությունը ստիպված էր հումքը տեղ հասցնել բավականին հեռվից, որի պատճառով արտադրանքը զգալիորեն թանձ էր և շեր կարող մրցել շվեդական և ուստական էժան լուցկիների հետ:

Համանման ճակատագիր ունեցավ թելգիական ընկերության կառուցած շաբարի գործարանը: 1893—95 թվականներին թեհրանի մոտ գտնվող Կեհրիզաք վայրում կառուցվեց շաբարի գործարան, որտեղ տեղադրված էին նորագույն տիպի 50 շարժիչները: Ընկերությունը վարձակալել էր նաև զգալի հողատարածություն՝ շաբարի ճակնդեղ աճեցնելու համար: Նախատեսված էր կառուցել նաև մերձատար երկաթուղագիծ ածխահանքիրից վառելիք մատակարարելու համար⁶:

Սակայն գործարանն աշխատեց ընդամենը 3 տարի: Արտադրանքի ցածր որակի պատճառով այն շղիմացավ ուսական շաբարի մրցակցությանը և 1898/99 թթ. փակվեց:

XIX դարի վերջից Իրանի հյուսիսային շրջաններում նշանակալի ձեռնարկատիրական գործունեություն էին ծավալել հայ վաճառականները: Կարևոր դեր խաղալով Իրանի արտաքին առևտում և ֆինանսների ոլորտում, նրանք զգալի միջոցներ էին ներդնում նաև արդյունաբերական շինարարության բնագավառում: Այսուղ առանձնահատուկ ակտիվություն էին ցուցաբերում ոստահպատակ հայ ձեռնարկատիրերը: Ունենալով ազատ դրամական միջոցներ և զբոնվելով ոստական հյուպատոսների հովանավորության ներքո, նրանք կարող էին ավելի համարձակ գործել: Այս բնագավառում հայ բուրժուազիայի գործունեության ընորոշականացատկության այն էր, որ զարկ էր արվում արդյունանական առևտության այն ճյուղերին, որոնք կապված էին իրանական հումքի վերամշակման հետ և շերին զգում արտասահմանյան արդյունաբերական ապրանքների կործանարար մրցակցությունը:

Մինչև 1909 թվականին Անգլո-պարսկական նավթային բնկերության հիմնադրումը, իրանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունը կիանողովների ձկնորսարամներն էին: Կասպից ծովի հարավային ափի ձկնային հարստությունները վազուց ի վեր գրավել էին Ռուսաստանի առետրարդյունաբերական շրջանների, այդ թվում նաև Հայ վաճառականների ուշագրությունը: XIX դարի կեսերին Կասպից ծովի հարավային ափի ձկնորսարանները վարձակալում էին աստրախանցի ձեռնարկատերեր Միւ Բաղիրովը, Կալվաննիկովը, Սուջակը⁹:

Անգլիական հյուպատոս Արքուաց 1848 թվականին զեկուցում էր. «Թեզենի գետաբերանի թառափի ձկնորսարանները... մինչև այժմ տնօրինում է ռուսական (ռուսահայակական—Ս. Ա.) հայր... շնայած նրա վարձակալության ժամկետը լրացել է»¹⁰:

Հյու հյուպատոսի, վարձակալը շնչին վարձ էր մուծում, իսկ ձկնորսարանների արտադրանքը՝ տարեկան շուրջ 8 հազար թուման արժողությամբ, արտահանվում էր Աստրախան¹¹:

Հետագայում ևս աստրախանցի ձկնարդյունաբերողները ամեն կերպ ձգտում էին վարձակալել այդ ձկնորսարանները: 1862—63 թվականներին իրանական կառավարությունը բանակցություններ էր վարում նրանց հետ: Վերջիններս պատրաստ էին վճարել տարեկան 30 հազար ռուբլի ռոկով: Սակայն վերջին պահին կառավարությունը դադարեցրեց բանակցությունները և բռնի կերպով ձկնորսարանները հանձնեց Գիլանի նահանգապետին՝ 42 հազար ռոկովամի զիշմաց¹²:

1864 թվականին պատմությունը կրկնվեց և կրկին աստրախանցի ձկնարդյունաբերողները նպատակին շհասան: Սակայն նրանց համառ ջանքերն ի վերջո դրական արդյունք տվեցին: 1873 թվականին աստրախանցի առաջին գիլդիայի վաճառական Ստեփան Մարտինի կիանողովը շահական կառավարությունից կոնցեսիա ստացավ, որը նրան Կասպից

Դաս ՀՅ հաղար ոռուական զրբարութեաւ տարածքու
Վարձակալն իրավունք ուներ վերոհիշյալ տարածքու
կառուցել ձկնորսարանների համար անհրաժեշտ շինություն-
ներ։ Դրանք կազմում էին վարձակալի սեփականությունը և
վերջինս պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո կա-
ռող էր դրանք զիչել իրանական կառավարության լիազորին
կամ բանել և իրանից դուրս բերել 6 ամսվա ընթացքում։
Պայմանագրի 6-րդ կետի համաձայն, այն խախտող
կողմը պարտավոր էր մյուս կողմին տուգանք վճարել 600.
000 ֆրանկ ոռուարի շափով¹³։

Հետագայում պայմանագիրը կրկին նորոգվեց, և վարչական ժամանակաշրջանում առաջին առաջարկը կատարվեց ևս 10 տարով:

Չբավարարվելով շահական կառավարությունից ստացած կողմէ մասնակից կառավարությունից ստացած կողմէ մասնակից կառավարությունը (Ս. Մ. Լիազուղովի մահից հետո ընկերության գլուխ կանգնեց նրա որդին՝ Գեորգի Ստեփանի Լիանովովը) դիմեց ցարական կառավարությանը, խնդրելով վարձակալության տալ կասմից պաշտությանը, խնդրելով վարձակալության պաշտությանը, պատճենաչափ հաշտության պայմանովի առաջինյա ջրերը: Թուրքմենչայի հաշտության պայմանովի համաձայն, Կասպից ծովը պատկանում էր Ռուսաստանին և իրենց դիմումով Լիանովովները կարծես թէ Հիւանին և իրենց դիմումով

շեցրին այդ մասին: Լիանողովների առաջարկությունը քըն-նարկելու համար հրավիրվեց Հատուկ խորհրդակցությունը՝ որը համակողմանիորեն քննեց հարցը և վճռեց, որ նման պայմանագիրը կարող էր նուսաստանին Կասպից ծովի պատկանելիության լրացուցիչ ապացուցյալ հանդիսանալ:

1900 թվականի մարտի 22-ին նուսաստանի Հողագործության և պետական ունեցվածքի նախարարությունը Լիանողովների ընկերության ներկայացուցիչ Մ. Սահայրեկովի նշու պայմանագիրը կնքեց Հետևյալ պայմաններով:

Ընկերությանը Կասպից ծովի առափնյա ջրերում անվճար ձկնորսության իրավունք էր տրվում Հետևյալ սահմաններում՝ Աստարա գետից մինչև Գյուրգեն գետը 6 վերոտ լայնությամբ և Գյուրգենից մինչև Աստրեկ գետը՝ 3 վերոտ լայնությամբ: Աստրարագի ծոցը լիովին մտնում էր Հատկացված գոտու մեջ: Պայմանագիրը կնքվել էր 26 տարի ժամկետով¹⁴:

Ազատ ձկնորսներն իրավունք շունեին այդ գոտում ձուկ որսալ: Վերօհիշյալ գոտուց դուրս ձկնորսությամբ կարող էին զբաղվել ինչպես ազատ ձկնորսները, այնպես էլ ընկերության ներկայացուցիչները: Լիանողովները պարտավորվում էին վարձակալության տրված տարածքում ձուկ որսալ միայն այն հարմարանքներով, որոնք թուլատրված էին Անդրկովկասյան վարչության ենթակայության տակ գտնվող ձկնորսարաններում: Վարձակալի կողմից պայմանագրի որևէ կետի խախտման դեպքում այն կորցնում էր ուժը¹⁵:

Սակայն 1907 թվականի ապրիլի 17-ին պայմանագրի տեքստում ուղղում կատարվեց, որի համաձայն պայմանագիրն ուժը կորցնում էր միայն այն դեպքում, եթե Լիանողովներն առանց Հողագործության և պետական ունեցվածքի նախարարության թույլտվության կնքեին ենթավարձակական պայմանագրեր կամ ուրիշին դիշեին իրենց իրավունքները: Պայմանագրի մյուս կետերի խախտման դեպքում Լիանողովները ենթակա էին տույժի համաձայն գործող օրենսդրության¹⁶:

Կոնցեսիան ստանալուց հետո կիանովովներն անմիջապես լայն գործունեություն ծավալեցին: Արդեն 1875 թվականին Գիլանում անգլիական հյուպատոսը զեկուցում էր, «որ ձկնորսարանների արտադրանքն անցնում էր 200.000 թումանից, իսկ ընկերության ծախսերը որսի, աղ դնելու, փաթեթավորման և տեղափոխման ուղղությամբ կազմում էին տարեկան մոտավորապես 100.000 թուման¹⁷:

Ինչպես տեսնում ենք, ըստ անգլիական աղբյուրների, պայմանագիրը կնքելուց ընդամենը երկու տարի հետո վարձակալի տարեկան շահույթը կազմում էր մոտ 60.000 թուման, չաշված նաև վարձավճարը: Ձկնորսարանների արտադրանքը տարեցտարի ավելանում էր: Եթե անցյալ դարից 90-ական թվականներին ձկնորսարանների համախառն արտադրանքն արժեքային առումով կազմում էր տարեկան միջին հաշվով 600.000 ռուբլի, ապա դարի վերջից մինչև 1906 թվականն ընկած ժամանակաշրջանում այն համար էր 900.000 ռուբլու, իսկ 1907—1915 թվականներին արդեն 2,25 մլն. ռուբլու¹⁸:

Համապատասխանաբար աճում էր նաև վարձավճարը: Սկզբնական շրջանում կիանովովներն իրանական կառավառությանը վճարում էին տարեկան 41 հազար թուման: Հետագայում վարձավճարն աճել էր հետեւյալ կերպ. 1879—87 թվականներին՝ տարեկան 45 հազար թուման, 1888—94 թվականներին՝ 60 հազար թուման, 1895—1900 թվականներին՝ 400.000 ֆրանկ¹⁹, 1901—10 թվականներին՝ 460.000 ֆրանկ և 1911—19 թվականներին՝ 480.000 ֆրանկ²⁰:

Կիանովովների ձկնորսարանների շահութաբերության արագ աճն անմիջապես գրավեց ուրիշ ձեռնարկաւորերի ուշագրությունը: Արդեն XIX դարի վերջին ուստի և օտարերկուագիտական նախանձով էին հետևում կիանովովների կապիտալիստները նախանձով էին համար կոնցեսիան կամ ների հաշողություններին և ձգտում էին դնել կոնցեսիան կամ նրանցից խելել ձկնորսության մենաշնորհ իրավունքը: Օրինանցից խելել ձկնորսության մենաշնորհ իրավունքը: Օրինակ, 1898 թվականին անգլիական կապիտալիստները ձրկենորսարանների դիմաց կիանովովներին առաջարկում էին 2 մլն. ռուբլի²¹:

Ուստաստանի արդյունաբերական շրջաններում ևս գաղտնի պայքար էր զնում Կասպից ծովի հարավային ափի ձեկնորսարաններին տիրանալու համար: 1905 թվականին բաքվեցի հայտնի արդյունաբերող Հաջի Զեյնալարդին թաղինն իրանական կառավարությանն առաջարկեց չեղյալ հայտարել կիանողովների հետ կնքված պայմանագիրը, խոստանալով ոչ միայն վճարել պայմանագրով նախատեսված տուժանքը՝ 600.000 ֆրանկ, այլև տարեկան 50 հազար թուման ավելի վճարել, քան նախկին վարձակալը²²:

Սակայն բոլոր այդ փորձերը հաջողություն չունեցան և կիանողովների ձեռնայրկությունը շարունակում էր ծաղկում ապրել:

Դարի սկզբին ձկնորսարանները բաժանվում էին հինգ ինքնուրուցն շրջանների՝ Աստարայի, Էնդիլիի, Սեֆիդրուդի, Մաշադիստերի և Աստրաբադի: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր կառավարիչը և մասնագիտանում էր որոշակի տեսակի ձկնամթերքի արտադրության մեջ: Առանձին շրջանները միմյանցից տարեկում էին ոչ միայն մասնագիտացմամբ, այլև ձկնորսության եղանակներով: Աստրաբադի շրջանում որսը կատարվում էր տեղի թուրքմենների ուժերով, որոնք ունեին սեփական ձկնորսական հարմարանքներ և նավակներ: Նրանք պարտավոր էին ամբողջ որսը հանձնել կիանողովներին, դրա դիմաց ստանալով համապատասխան վարձատրություն: Այդպիսի ձկնորսները մոտավորագես 1000 հոգի էին²³:

Աստարայի շրջանում ընկերությունն ինքն էր կազմակերպում որսը, դրա համար ձկնորսներին հանդերձավորելով որսի համար անհրաժեշտ բոլոր հարմարանքներով: Այս դեպքում ձկնորսները ստանում էին աշխատավարձ:

Երբեմն ընկերությունն առանձին շրջաններ ենթավարձակալության էր տալիս: Օրինակ, XIX դարի վերջին Աստարայի շրջանը ենթավարձակալության էր տրված հայտնի վաճառական նազարեկովին, իսկ Սեֆիդրուդից Զիկիշլար հատվածը՝ մեկ ուրիշ հայի՝ Գուլամովին²⁴:

Սակայն 1909 թվականից սկսած ընկերությունն ինքն էր՝ կազմակերպում որսը բոլոր շրջաններում, և թափարձական լության տալով միայն փոքր դեմքը և առանձին ու մեծ հատվածներ^{25:}

Ամենախողորը և լավ սարքավորվածը էնզելիի 2րշանն էր, որի համախառն արտադրանքը 1913/14 տնտեսական տարում կազմել էր 914.687 ռուբլի^{26:}

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կանոնվովի ձկնորսարանները ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություն էին, կահավորված ձկնորսական տեխնիկայի վերջին խոսքով։ Ընկերությունն ուներ էլեկտրակայաններ, սառնարաններ, մեխանիկական և այլ արշեստանոցներ, ինչպես նաև 20 միավորից բաղկացած նավատորմ, այդ թվում 2 խոշոր շոգենավ՝ «Պիրոգով»-ը և «Մարտին»-ը։

Միայն էնզելիի 2րշանում հեռախոսային ցանցի երկարությունը կազմում էր 250 վերստ^{27:}։ 1910 թվականին այս տեղ գործում էր սառուց պատրաստող գործարան, որը կառող էր սառեցնել օրական 750—1000 փութ ձռվ^{28:}

1913 թվականին նույնատիպ գործարան էր կառուցվել նաև շասաննկադեռում^{29:}, Այդ գործարանները հնարավորություն էին տալիս ձկնեղենը Ռուսաստան արտահանել սառցրած վիճակում։

Կարասուում և էնֆելիում գործում էին էլեկտրակայաններ, և երեկոյան ու գիշերային ժամերին բոլոր աշխատանքները կատարվում էին էլեկտրական լուսավորության ներքո^{30:},

Հնկերությունը որոշակի աշխատանք էր տանում ձկնորսարանների աշխատողներին բնակելի տարածությամբ ապահովելու ուղղությամբ։ Կառուցվում էին հիմնականում բարաքների տիպի շինություններ։ Աշխատողների թիվն անընդհատ աճում էր։ Արդեն 1876 թվականին ձկնորսարաններում աշխատում էր մոտ 1100 մարդ, որոնց մեծ մասը բարեվի և էնքորանի ոռուսահպատակ բնակիչներ էին^{31:}

Թլֆերկի տվյալներով միայն Գիլանում 1908 թվականին
աշխատում էր մոտ 3.700 մարդ, որոնցից 700-ը Ռուսաս-
տանից³²:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին
ձկնորսարանների աշխատողների ընդհանուր թիվը համում
էր 5.900 մարդու³³; Նրանց մեծ մասն արգեն տեղի բնակիչ-
ներ էին, որոնց բաժին էին ընկնում հիմնականում ծանր ֆի-
զիկական աշխատանքները: Ռուսակապատակները, որպես
կանոն, կատարում էին որոշակի որակավորում պահանջող
աշխատանք:

Ամեն տարի, ձկնորսության թեժ շրջանում, Ռուսաստա-
նի տարեր շրջաններից հարյուրավոր աշխատողներ էին
վարձվում ձկնորսարաններում աշխատելու համար: «Մշակ»
թերթը 1912 թվականին գրում էր. «Ռուսաստանի ներքին
նահանգներից Բաքու են եկել ավելի քան 300 աղջիկ, որոնք
վարձված են կիանողովի պարսկական ձկնարանների մեջ աշ-
խատելու ամսական 8 ռուբլով»³⁴:

Ռուսակապատակ աշխատողների համար կառուցվում էին
հատուկ բարաքներ, ինչպես նաև սննդի կետ, փուռ, բաղնիք:
Էնզելիում և ձկնորսարանների մյուս պլիսավոր կենտրոննե-
րում գործում էին հիվանդանոցներ, որոնցում աշխատում
էին ռուս բժիշկներ և սանիտարներ³⁵: Բժշկական օգնություն
էր ցույց տրվում ոչ միայն ձկնորսարանների աշխատողնե-
րին, այլև տեղական բնակչությանը: Ասվածը վկայում է,
որ այնքան էլ ճիշտ չեն որոշ հեղինակներ, որոնք կիանողով-
ներին մեղադրում են իրանի ձկնային հարստությունները գի-
շատշաբար օգտագործելու մեջ և գտնում են, որ վարձակալ-
ները ուինչ չեին անում աշխատողների կինցաղային և աշ-
խատանքային պայմանները բարելավելու համար³⁶: Ան-
շուշտ, կիանողովներն ինտենսիվ ձկնորսություն էին վարում,
հաճախ նաև տարածայնություններ և բախումներ էին լինում
տեղի աղատ ձկնորսների հետ, սակայն, որպես կանոն, նման
գեղքերում կոնցեսիոնները հետևողականորեն պաշտպա-
նում էին պայմանագրով իրենց տրված իրավունքները: Ինչ
վերաբերում է ձկնորսարանների աշխատողների աշխատան-

Քայլին և կենցաղային պայմաններին, ապա դա ոչ այնքան ձկնորսարաններում գոյություն ունեցող շահագործման բարձր աստիճանի և կանողովների ազատության արդյունք էր, ինչ-պես ձգտում են ներկայացնել այդ հեղինակները, այլ ցանկացած երկրում կապիտալիզմի արշալույսին բնորոշ երեխույթը, որն իրանում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական յուրահատուկ պայմանների հետևանքով առավել ծանր ձևեց էր ստանում:

Ճեկը էր ստանում։
Ռուր ժամանակակիցների և ուսումնասիրողների վկա-
յությամբ, ձկնորսարանների ողջ տարածքում լիակատար
կարգ ու կանոն էր տիրում։ Ընկերությունը բարեկարգում էր
ձեռնարկության տարածքը, կարգի էր զցում ճանապարհնե-
րը, կառուցում հասարակ կամուրջներ և այլն։ Բնականաբար
այս բոլորը կապված էր նշանակալի ծախսերի հետ և պատա-
հական չէ, որ ընկերության կապիտալ ներդրումները տարեց-
տարի աճում էին։ Առաջին համաշխարհային պատերազմի
նախօրյակին նրա կապիտալ ներդրումները կազմում էին
շուրջ 3.380.000 ֆրանկ³⁷։

Մեկ տրիլիոն Հեղինակ՝ Ե. Եղանեգին, նշում է, որ 1916 թվականին ընկերության կապիտալ ներդրումներն իրանում հասնում էին 9 մլն.ռուբլու³⁸:

գամանքից, որ ընկերությունը ժամանակին չի մուծել վարձակալության վճարը, 1918 թվականին ընկերությանն արգելեց զբաղվել ձկնորսությամբ և արտահանել պատրաստի արտադրանքը, ինչպես նաև արգելակալանք դրեց ընկերության ունեցվածքի վրա: 1919 թվականին իրանական կառավարությունը նոր պայմանագիր կնքեց Վանեցովի և Թումանյանցի հետ, որով Կասպից ծովի հարավային ափի ձկնորսաւանները 20 տարով վարձակալության էին տրվում այդ նոր ընկերությանը: Վարձակալության վճարը կազմում էր տարեկան 100.000 թուման³⁹:

Սակայն վերոհիշյալ ընկերությունը գոյություն ունեցավ մեկ տարուց էլ պակաս և շուտով դադարեցրեց իր գործունեությունը:

Լիանողովների ընկերությունը օրինական շամարեց իրանական կառավարության զործողությունները և բողոքարկեց արբիտրաժ, որը բավարարեց նրանց հայցը և վերականգնեց ընկերության իրավունքները: Ավելին, որպես արգելակալանքի հետևանքով ընկերությանը հասցված վնասի փոխհատուցում կոնցեսիայի ժամկետը երկարացվեց մինչև 1937 թվականը: Ուշագրավ է, որ արբիտրաժի որոշումից անժիշտապես հետո ամերիկյան ընկերությունների ներկայացուցիչները բանակցություններ սկսեցին Մարտին Լիանողովի հետ, որին պատկանում էր ընկերության 100 փայտաժնից 51-ը, ձգտելով համաձայնության մեջ մտնել նրա հետ և նոր ընկերություն ստեղծել: Սակայն նրանց պլանները ձախողվեցին: 1923 թվականին Մարտին Լիանողովը տեղափոխվեց ԽՍՀՄ և համաձայնություն կնքեց խորհրդային կառավարության հանձնեց իրեն պատկանող գույքը՝ մոտ 2,5 մլն. ռուբլի սոկով և իրավունքները⁴⁰:

Ձկնորսարանների մնացած մասն անցավ իրանական կառավարության հսկողության ներքո, որը մյուս փայտերերին՝ կուն Գրիգորի Լիանողովին և Ս. Գ. Լիանողովի ընտանիքին որպես փոխհատուցում վճարեց 20 հաւաքական թուման⁴¹:

Լիանողովների արդյունաբերական գործունեությունն իրանում չէր սահմանափակվում ձկնորսարաններով: Նրանք զգալի կապիտալներ էին ներդրել նաև Հյուսիսային իրանի անտառաբույնարերության մեջ և տրանսպորտային գործում:

1911 թվականին ոռուսահպատակ մենքը Ա. Խոշտարիան Գիլանում վարձակալեց 7 հազար դեսյատին անտառ⁴²: Լինելով ճարպիկ ձեռնարկատեր, բայց շոմենալով անհրաժեշտ միջոցներ նա գործի մեջ ընդգրկեց իշխան Թումանովին, Գ. Գվազավային, Գ. Զուլքադարովին և 1912 թվականին կազմակերպեց «Ռուս-պարսկական անտառաբույնարերական Ընկերություն»: Սակայն այն մեկ տարի հետո քայլքայվեց և ստեղծվեց նոր ընկերություն, որի կազմում էին Ա. Խոշտարիան, Պ. Թումանովը, Գ. Գվազավան և Ա. Լիանողովը: Հերթական մաշխարհային պատերազմի նախօրյակին ընկերությունն Առաջարկեց լուսական պատերազմի նախարարությունը ընկերությունը էր 215 հազար Սուտարայից էնդելի հասավածում վարձակալում էր 215 հազար դեսյատին ընդհանուր տարածքով՝ անտառներ⁴³: Ընկերությանն էին պատկանում էլեկտրակայան, օրական 100 գերան հզորությամբ սղոցարան, մեխանիկական արհեստանոցներ և այլն:

Առաջին իսկ օրից ընկերությունը լայն գործունեություն ծավալեց: Ա. Խոշտարիայի խոսքերով՝ Փինանսական կողմի կազմակերպումը և վարումը ստանձնել էր Ս. Լիանողովը: Նա և Մանթաշելը զգալի կապիտալներ էին ներդրել գործի մեջ: Սկզբնապես ընկերության հիմնական կապիտալը կազմում էր 600.000 ռուբլի⁴⁴, սակայն արդեն 1913 թվականին ընկերության կապիտալ ներդրումները հասնում էին 2,5 մլն. ռուբլի: Բացի այդ, Լիանողովը և Մանթաշը գործի մեջ ներդնում էին ևս 4 մլն. ռուբլի⁴⁵:

Հետագայում նախատեսվում էր ստեղծել բաժնետիրական ընկերություն, ընդգրկելով 30—40 մլն. ռուբլի գումար⁴⁶: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ընկերությունը հիմնականում շահագործում էր Կերպենրուդի կիրճում գտնվող անտառները: 1913 թվականին այստեղ աշխատանք էր մինչև 800 բանվոր՝ հիմնականում ռուսներ:

վրացիներ: Նույն թվականին ընկերությունն առաջին պայմանագիրը կնքեց «Գորլինի և ղայլիներ» ընկերության հետ, որի համաձայն նրանց պետք է մատակարարեր 16 մլն ռուբլ կազմն փայտակռներ և այլ իրեր⁴⁷:

Ընկերությունը սկսել էր նաև ծովափից մինչև Կերպեն-րուդի կիրճը մերձատար երկաթուղու շինարարությունը: 1913 թվականին արդեն տեղ էին հասցվել Յ զոգեքարշ և անհրաժեշտ ռելսեր 200,000 ռուբլի ընդհանուր արժողությամբ: Սկզբունքորեն լուծվել էր նաև անտառանցութիւն տեղափոխման համար անհրաժեշտ 10—15 շոգենավերի կառուցման հարցը⁴⁸:

«Ռուս-պարսկական անտառարդյունաբերական ընկերությունը» զբաղվում էր ոչ միայն անտառների հատմամբ և վերամշակմամբ, այլև ձեռք էր բերել վարձակալած հողերում բոլոր տեսակի լեռնային հարստությունների հետախուզման և շահագործման բացառիկ իրավունքը⁴⁹:

Ընկերության անդամներ թումանովը, կիանողովը և Խոշտարիան համաձայնության մեջ էին մտել էնզելի-Թեհրան-Ճանապարհային ընկերության հետ և նրանից ստացել էին էնզելիի և Թեհրանի, Ղազվինի և Համադանի միջև բեռնատար և մարդատար ալտոմորիլային հաղորդակցություն կազմակերպելու բացառիկ իրավունք: Նրանց ընկերությունը պարտավոր էր երկամյա ժամկետում ձեռք բերել մինչև 200 բեռնատար ավտոմեքենա՝ մոտ 2 մլն ռուբլու ընդհանուր արժողությամբ, որոնք ապահովելու էին վերոհիշյալ ճանապարհի բեռնաշրջանառության կեսը⁵⁰:

1913 թվականին ընկերությունն արդեն ուներ 19 բեռնատար, 4 կառք, 2 ավտոմեքենա-հանրակառք և 1 մարդատար ավտոմեքենա⁵¹:

Բոլոր այդ կոնցեսիաներն անվանակես պատկանում էին Խոշտարիային, սակայն նրանց փաստական տերը կիանողովն էր: Դա բացատրվում էր նրանով, ինչպես նշում էր զնդապետ Յիսր, որ «...Խոշտարիան նուանդուն ձեռնարկատեր և ճարպիկ գործարար էր, սակայն բացարձակապես զուրկ էր միշուշներից»⁵²: Այդ իսկ պատճառով Խոշտարիան իր բոլոր

գործարքները կատարում էր ուրիշների միջոցների հաշվին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Խոշտարիայի ամբողջ գործունեությունը ֆինանսավորվում էր գերազանցապես կիանողովի կողմից: Եվ պատահական չեւ որ Խոշտարիայի կողմից էնզելիի էլեկտրական լուսավորության, Թեհրանի և էնզելիի միջև ավտոմոբիլային հաղորդակցության և մյուս կոնցեսիաները ստանալուց շատ շանցած դրանց փաստական տերը դարձավ Լիանողովը:

Լիանողովներից բացի, հյուսիսային Իրանի անտառային հարսությունների շահագործմանը մասնակցում էին նաև ուրիշ հայ ձեռնարկատերներ, ինչպես օրինակ, Թումանյանցները, Սատուրովը, Մայլիլովը և ուրիշներ:

Օրինակ, Թումանյանցը զգայի անտառային տարածքներ էր վարձակալել Մազանդարանում: Դրանց արժեքի մասին է խոսում այն փաստը, որ Գրանսիական մասնագետի կողմից անցկացված ուսումնասիրության շնորհիվ պարզվել էր, որ այդ տարածքում կար 285—300 հազար կաղնեկոճ⁵³:

Զնայած Թումանյանցները դեռևս չեին սկսել այդ անտառների շահագործումը, զրանք արդեն գրավել էին օտարերկրյա ընկերությունների ուշագրությունը: Ֆրանսիական սինդիկատներից մեկը Թումանյանցներին առաջարկում էր սուրաֆանցուր քառակուսի մետր կաղնեփայտի համար վճարել 10 ռուբլի, ընդ որում հատումը և առաջարկումը սինդիկատի հաշվին: Նախատեսվում էր վարձակալական պայմանագիրը կնքել 24 տարով⁵⁴:

Բարվեցի վաճառական Սատուրովը ևս անտառներ էր վարձակալել Մազանդարանում, սակայն ոչ նա, ոչ Թումանյանցը չեին կարող համեմատվել կուսիսի առետրական տան «Ռուս-պարսկական» անտառարդյունաբերական ընկերության» հետ:

Ինչպես նշվել է վերեռում, XIX դարի երկրորդ կեսից նկատվում է գյուղատնտեսական արտագրանքի ապրանքայնացման ուժգին միտում, որի հետևանքով դրա արտահանումն անընդհատ ավելանուց էր: Հատկապես արագ էր աճում միաժին իկանական կուտուրաների՝ բամբակի, ծինախոտի, ափինուի կականիկան կուտուրաների՝ բամբակի,

նի արտադրությունը: *XIX* դարի վերջից իրանի արտահանման գլխավոր ճյուղը դառնում է բամբակը, որի հիմնական սպառողը Ռուսաստանն էր:

Իրանում բամբակի արտադրության և արտահանման շեշտակի աճը նոր խնդիրներ էր առաջադրում նրա գլխավոր արտահանողներին: Ընդհուպ մինչև անցյալ դարի վերջը բամբակը զտվում և մամլվում էր ձեռքի աշխատանքով: Օրինակ, *XIX* դարի վերջին Սարդևարում կար բուրդ և բամբակի մամլող 11 ձեռքի մամլիչ⁵⁵, Թուրքաթե-Հեյդարիում՝ ընդամենը ⁵⁶:

Սպահանում միայն Արզումանով եղբայրների առևտրական տունն ուներ հիգրավլիկ մամլիչ, մյուսները բամբակը մամլում էին ձեռքի մամլիչներով⁵⁷:

Որոշ շրջաններում շկային նույնիսկ ամենահասարակ ձեռքի մամլիչներ: Օրինակ, Թուրքիզում արտադրվող բամբակը մամլվում էր Սարդևարում, Նիշաբուրում կամ Թուրքաթե-Հեյդարիում⁵⁸:

Բամբակի արտահանության արագ աճը սպահանջում էր կատարելագործել բամբակի զտման և մամլման տեխնիկան, քանի որ չգոտված բամբակի արտահանումը տնտեսապես ձեռնտու չէր, իսկ հին եղանակներն արդեն չեին կարող բավարարել: Այդ պատճառով արդեն *XIX* դարի վերջին իրանի հյուսիսային շրջաններում հանդես եկան առաջին բամբակադրիչ գործարանները: 1896—97 թվականներին Բարֆուրշում գործում էր այդպիսի երկու գործարան⁵⁹: Հետագայում բամբակագոտի գործարաններ կառուցվեցին Նիշաբուրում, Սարդևարում, Սարիկում, Մաշագիսերում, Բանդար Գյաղում, Մամեդաբադում, Բոշնուրդում և այլ վայրերում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իրանի հյուսիսային շրջաններում հաշվվում էր ավելի քան 20 բամբակագոտի գործարան: Դրանց գերակշիռ մեծամասնությունը պատկանում էր հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներին: Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ հենց նրանք էին իրանական բամբակի հիմնական արտահանողներ: Պրակես կանոն, այդ գործարաններն աշխատում էին տե-

Մերին պատկանող բամբակահումքի հաշվին: Նման պայման-ներում ինքնուրուց նշանակություն ունեցող բամբակագտիչ գործարանները չեին կարող երկար գոյություն ունենալ: Հեռանկարային էին միայն այն ձեռնարկությունները, որոնց տերերը միաժամանակ զբաղվում էին նաև բամբակի արտա-հանմամբ: Մյուս կողմից, իրանի պայմաններում, որտեղ բացակայում էր ձեռնարկատիրոջ անձի և գույքի անձեռն-մխելիությունը և ոչ ոք ապահովագրված չեր տեղական կա-ռավարիչների կամայականություններից, իրանահպատակ վաճառականները չեին համարձակվում կապիտալ ներդնել արդյունաբերական շինարարության մեջ: Նրանք գերագա-սում էին իրենց դրամական միջոցները շրջանառության մեջ, կամ դնել առևտրի բնագավառում և հողագործության մեջ, կամ թաքցնել դրամը, ինչը շափականց բնորոշ է ընդհանրապես Արևելքի երկրների և մասնավորապես իրանի համար: Պա-տահական չէ, որ իրանում արդյունաբերական շինարարու-թյունը գտնվում էր հիմնականում օտարահպատակների ձեռ-քում: Մեր ունեցած տվյալներով իրանահպատակներին էր պատկանում ընդամենը 3 բամբակագտիչ գործարան:

Վերոհիշյալ գործարանների մեծ մասը գտնվում էր Խո-րասանում և Մազանդարանում:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին իրանական բամբակի արտադրության գլխավոր կենտրոննե-րից մեկում՝ Սաբզկարում, գործում էին բամբակագտիչ 4 գործարաններ, որոնք պատկանում էին Պոզնանսկու բաժնե-տիրական ընկերությանը, «Տեր-Մկրտիչև եղբայրներ» և «Հախնազարյանց և Ընկ.» առևտրական տներին, ինչպես «Համբական բարեկամություն» և «Ընկ.» առևտրական տներին: Այդ գոր-իակ պարսիկ ձեռնարկատեր Խ. Ա. Խսֆահանիին: Այդ գոր-ծարաններից յուրաքանչյուրի կառուցումը սարքավորումնե-րի հետ միասին նստել էր 40—50 հազար ռուբլի⁶⁰:

Նիշշաբուրում գործում էին Պոզնանսկու, Տեր-Մկրտիչև-ների, Հախնազարյանցի և «Խալափիյանց և Ընկ.» ընկերու-թյուններին պատկանող գործարանները: Նրանցից յուրաքան-չյուրն ուներ մի քանի բամբակագտիչ մեքենա, մեկական շամլիչ և 40—60 ձիառութ հզորությամբ շարժիչ: Նիշշաբուրի

և Սարգսկարի գործարանների տեխնիկական հազեցվածությունը համարյա նույնն էր⁶¹:

Վերոհիշյալ երկու բաղաքներում էլ լավագույնը համարվում էին Տեր-Մկրտչեաների գործարանները, որոնցում տեղադրված էին ժամանակակից սարքավորումներ: Ե՛վ Սարգսկարում, և՛ Նիշարուրում նրանց գործարանները գնահատվում էին 80—90 հազար ռուբլի⁶²:

Այս բնագավառում խոշորագույն ձեռնարկատերը «Աթայանց և Ընկ.» առևտրական տունն էր: 1909 թվականից նա բամբակաղտիչ գործարան ուներ Մամեդարագում: Գործարանի սարքավորումների վրա ծախսվել էր 7 հազար թուման: Հիմնական կապիտալը շրջանառուի հետ միասին կազմում էր 15 հազար թուման: Գործարանի արտադրողականությունը օրական 400 փութ բամբակահումք էր, գործաշրջանի ընթացքում՝ 35 հազար փութ⁶³:

Առևտրական տունը բամբակաղտիչ գործարաններ ուներ նաև Միանաբաղում, Գերեզեղում, Ջովեյնում, Բոչնուրգում: 1916 թվականին Աթայանցները նոր, խոշոր գործարան կառուցեցին Բոջնուրդում, իսկ նախկին գործարանը, որը նրանք տիրում էին տեղի խանի հետ համատեղ, 16 հազար թումանով վաճառեցին վերջինիս⁶⁴:

Առևտրական տունը լայն գործունեություն էր ծավալել Սարգսկարի շրջանում: Զգուելով ընդլայնել առևտրական գործառնությունների շրջանակները և ավելացնել զտված բամբակի արտահանումը Ռուսաստան, Աթայանցը 1915 թվականին նոր գործարան կառուցեց Ջովեյնում՝ Սարգսկարի մոտ, որը նրա կարծիքով հնարավորություն կտար այդ շրջանից մաքուր բամբակաթելի արտահանումն ավելացնել մինչև 50 հազար փութ⁶⁵:

Գործարանը զինված էր ժամանակակից սարքավորումներով և լավագույններից մեկն էր Իրանում: Հաշվավարկային բանկի ծառայողների գնահատմամբ գործարանն արժեց մոտ 75 հազար ռուբլի⁶⁶:

Իրանում բամբակի արտադրության զինավոր կենտրոններից մեկն Աստրաբագն էր, որտեղ ևս բամբակի առևտրությունը

ամբողջովին գտնվում էր Հայ վաճառականների ձեռքում։ XX-
դարի սկզբին Բանդար Գյաղում գործում էին բամբակագոտին
գործարաններ, որոնք պատկանում էին «Նասիբյանց և Տեր-
Պետրոսյանց», «Բեղլարյանց և Կարապետյանց» ընկերու-
թյուններին, վաճառական «Միրզայանցին և «Թումանյանց եղ-
բայրներ» առևտրական տանը⁶⁷։

Բամբակի խոչոր արտահանողներ Փանյանցը և Բողդան-
յանցը բամբակագոտին գործարաններ ունեին Բարֆոուշում⁶⁸։

Վերոհիշյալ բոլոր գործարանները փոքր ձեռնարկու-
թյուններ էին, որոնց արտադրողականությունը կազմում էր
տարիկան 30—50 հազար փութ բամբակ։ Դրանք գործար-
շանացին ընույթ էին կրում՝ աշխատում էին 2—3 ամիս, եր-
բեմն նուև ավելի, կախված գործարանների տերերի ձեռք բ-
ռած բամբակահումքի քանակից։ Նրանք երբեմն զտման և
մամլման նպատակով բամբակահումք էին ընդունում նաև
այլ արտահանողներից։ Վերջիններս պարտավոր էին վճարել
գուան 1 փութ բամբակի զտման⁶⁹ և 1 զուան՝ 1 հակ բամ-
բակի մամլման համար⁷⁰։ Սակայն մասնավոր անձանցից
զտման նպատակով ստացված բամբակահումքը՝ 1500—
2000 փութ, կազմում էր գործարանների ընդհանուր արտադ-
րանքի աննշան մասը⁷¹։

Դ. Կայեմը պնդում է, որ Բանդար Գյաղում բամբակա-
գոտին գործարաններ ունեցող «Նասիբյանց և Տեր-Պետրոս-
յանց» և «Բեղլարյանց և Կարապետյանց» ընկերություններից
շահութից, տարեկան ստանում էր ևս 7—12 հազար փութ
շահութից, տարեկան ստանում դա գույքի գնված բամբա-
կահումքի թերակիշուման արդյունք էր⁷²։

Մեր կարծիքով, գործարանների սահմանափակ այստադ-
րողականության պայմաններում դա բիշ հավանական էր։

Գործարանները, սովորաբար, մշտական աշխատողներ
չունեին, բացառությամբ մեխանիկի և նրա օգնականի։ Գոր-
ծարչանի ընթացքում յուրաքանչյուր գործարանի բանվոր-
ների ընդհանուր թիվը հասնում էր 25—30 հոգու, որոնք
ստանում էին օրական 2—3 զուան⁷³։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանում բամբակագտիչ գործարանների առաջացումը այդ երկրի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցման ուղղակի արդյունք էր: Չնայած դրանք հիմնականում փոքր ձեռնարկություններ էին, սակայն իրենց գործունեությունը շարունակեցին ընդհուպ մինչև Առաջին Համաշխարհային պատերազմը, իսկ մի մասը նաև դրանից հետո: Դա բացատըրվում էր նրանով, որ բամբակագտիչ արդյունաբերությունն Իրանի արդյունաբերության այն առանձնահատուկ ճյուղերից էր, որի արտադրանքը չէր զգում իրանի սահմաններից դուրս գործող օտարերկրյա կապիտալի կործանարար մրցակցությունը:

Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս եղանակացնել, որ ինչպես այս դեպքում, այնպես էլ ընդհանուր առմամբ, հայ բուրժուազիայի արդյունաբերական ձեռնարկատիրությունը սերտորեն կապված էր նրա առևտրական գործունեության հետ: Հայ վաճառականներին պատկանող արդյունաբերական ձեռնարկությունները, որպես կանոն, ինքնուրույն տնտեսական նշանակություն չունեն՝ թերևս բացառություն էին կազմում կրանոզովների ձկնորսարանները, այլ կոչված էին նպաստել հայ բուրժուազիայի առևտրական շրջանառության հետագա աճին: Մասնավորապես խոշոր արտահանողների կողմից բամբակագտիչ գործարանների շինարարությունը նրանց հնարավորություն էր տալիս զգալիութեն կատարելագործել բամբակի գտման և մամլման գործընթացը, զրանով իսկ նկատելի առավելություն ստանալով մյուս արտահանողների նկատմամբ: Վերջիններս, հնարավորություն չունենալով կիրառել բամբակի գտման և մամլման նորագույն եղանակները, ստիպված էին կամ կրճատել բամբակի արտահանումը և կամ համաձայնության մեջ մտնել բամբակագտիչ գործարանների տերերի հետ՝ իրենց պատկանող բամբակը նրանց գործարաններում զտելու և մամլելու համար, ինչը, անշուշտ, ձեռնտու էր գործարանատերերին:

Առևտրական գործառնությունների հետ արդյունաբերական ձեռնարկատիրության սերտ կապը բնորոշ է նաև ար-

Դպունաքերության մյուս ճյուղերին: Այսպես, ռուսական նավթի խոշորագույն ներմուծողներից մեկը՝ Մ. Սարուխանովը, 1902 թվականին էնդելիում ձեռնամուխ եղավ նավթի տեղափոխման համար անհրաժեշտ թիթեղամանների պատրաստման գործարանի շինարարությանը: Գործարանի համար անհրաժեշտ սարքավորումները՝ շուրջ 30 հազար ռուբլու, ներմուծվել էին արտասահմանից⁷⁴:

«Թումանյանց եղբայրներ» առևտրական տունը կառուցել էր մրգի չորացման և մետաքսաբոֆի մշակման մի քանի ձեռնարկություններ, ինչը հնարավորություն տվեց զգալիուրեն ավելացնել այդ ապրանքների արտահանումը Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա⁷⁵:

Հայ բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներ փորձեր կատարեցին իրանում կազմակերպել այնպիսի ապրանքների արտադրությունը, որոնք միաժամանակ ներմուծվում էին արտասահմանից: Սակայն դրանք հաշողություն շունեցան, Տեղական արդյունաբերության զարգացման վրա օտարերկրյա կապիտալի թողած բացասական ազդեցության ցայտուն օրինակ է էնդելիում նավթաթոր գործարանների առաջցումն ու գործունեությունը: Իրանում նավթի թորման գործարան կառուցելու առաջին փորձն արվել էր գեռևս անցյալ դարան կասիմովը Բարֆոռուշում կառուցեց ոչ մեծ գործարան: Հաջի Կասիմովը Բարֆոռուշում կառուցեց ոչ մեծ գործարան: Անհրաժեշտ սարքավորումները գնվել էին Բաբվում: Սակայն նավթի ցածրացնելու աշխատեց շուրջ մեկ տարի և փակվեց թորած նավթի ցածր գնի պատճառով⁷⁶:

Որոշ ժամանակ անց այդ գործարանը վարձակալեցին բաքվեցի Հաջի Աղա Բեկը և շամախեցի Աղա Արդուլ Բաղին, որից հետո այն սկսեց արտադրել օրական 100 փութ թորած նավթ:

90-ական թվականների կեսերին ռուսահպատակ և իրանահպատակ ձեռնարկատերերը էնդելիում կառուցեցին նավթի թորման հինգ գործարան, որոնց արտադրական կարողությունը օրական 2400 փութ էր⁷⁷:

Դրանցից խոշորագույնը բաքվեցի Հայ վաճառականներ՝ 127

Մատուրովին և Գրիգորյանցին պատկանող գործարանն էր: Այն ուներ կատարելազործված՝ սարքավորումներ և նավթը թորում էր առաջավոր եղանակով, ուստի այն վաճառվում էր ավելի թանկ գնով: Գործարանն արտադրում էր օրական 1200 փութ նավթ⁷⁸:

Կարճ ժամանակում էնդելիում նավթի արտադրությունն այնքան աճեց, որ այդ նավահանգիստ ժամանող նավերն արգեն տեղում էին վառելիք վերցնում, դրանով իսկ զգալի տեղ շահելով ընդունվող բեռան համար: Վերոհիշյալ գործարանների գործունեության հետևանքով Բաքվից նավթի ներմուծումը խիստ կրճատվեց: Գործարանների արտադրանքը ոչ միայն բավարարում էր տեղական պահանջարկը, այլև արտահանվում էր Իրանի այլ շրջաններ: 1895 թվականի հունիսից նոյեմբեր ժամանակահատվածում միայն Շատուրովի և Գրիգորյանցի գործարանն Արգարիլ և Ղազվին էր առաքել 27 հազար փութ թորած նավթ⁷⁹: Ինչպես 1895 թվականին նշում էր Գիլանում ոռոսական հյուպատոսը, «...ոռոսական նավթը, տեղականի ցածր գնի պատճառով... լիովին դուրս է մղվել Գիլանի շուկայից»⁸⁰:

Էնդելիում նավթաթոր գործարանների առաջացումը և ոռոսական նավթի ներմուծման աստիճանական կրճատումն այնքան անհանգստացրեց ոռոսական կառավարությանը, որ վերջինս XX դարի սկզբին հանեց Ռուսաստանից Իրան արտահանվող զտված նավթի վրա դրված մաքսատուրքը⁸¹: Դա բացասաբար անդրադարձավ Իրանում նավթաթոր արտադրության վրա, քանի որ տեղական արտադրանքը չէր կարող դիմանալ ոռոսական էժան նավթի մրցակցությանը: Գիլանում նավթի արտադրությունն արագորեն անկում ապրեց և վերահիշյալ ձեռնարկություններն անգործության մատնվեցին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայ բորժուազիային էին պատկանում նաև մի քանի այլ փոքր արդյունաբերական ձեռնարկություններ: Օրինակ, ոռոսահպատակ վաճառական Տեր-Գրիգորյանցը 1913 թվականին Ղազվինում բացել էր ժամում 8 փութ հզորությամբ շուկաղաց⁸²:

Հյուսիսարևմտյան իրանից գյուղատնտեսական հումքի պիսավոր արտահանողներից Հովսեփ Աֆթանդիլովը մտադիր էր Ուրմիայում կառուցել շոգեաղաց, սղոցարան և պուսի գործարան։ 1914 թվականին բոլոր անհրաժեշտ սարքավորումներն արդեն տեղ էին հասցվել⁸³։

Դեռևս XX դարի սկզբին ոգելից խմբիչի առևտրով զբաղվող հայ վաճառականներն իրանում ոգելից խմբիչների արտադրության ձեռնարկություններ ստեղծելու փորձեր էին անում։ Օրինակ, «Ֆարս» ընկերության կարգադրիչ—անդամ անում Բարեյանը ցանկություն էր հայտնել Բանդար Գյաղում կառուցել օղեգործարան⁸⁴։

Այսպիսով, խնդրո առարկա շրջանում, հայ բուրժուական որոշակի գեր էր խաղում Հյուսիսային իրանի արդյունաբերության զարգացման գործում։ Խոշոր կապիտալներ էին ներդրված արդյունաբերության այն ճյուղերում՝ անտառարդյունաբերություն, ձեռնարդյունաբերություն, բամբակագուման գործ, որոնք հեռանկարային էին և կարող էին հաջողությամբ զարգանալ կիսագաղութային իրանի պայմաններում։ Ինչպես արդեն նշել ենք, արդյունաբերական ձեռնաբարկատիրության բնագավառում ավելի ակտիվ գործունեություն էին ծավալել ուսահպատակ հայ ձեռնարկատերքուրք։ Իրանահպատակ հայերից միայն Թումանյանց եղբայրներն էին որոշակի հետաքրքրություն ցուցաբերում իրենց առևտրական գործարքների հետ սերտորեն կապված վերամշակող ձեռնարկությունների շինարարության նկատմամբ։

Ուստահպատակ հայ ձեռնարկատերերի գործունեությունն այս բնագավառում, լինելով օտարերկրյա կապիտալի իրան ներթափանցման անմիջական արդյունք, օրյեկտիվորեն նպաստում էր իրանում արդյունաբերության զարգացմանը և իրանական պրոլետարիատի ձեավորմանը։

ԽԹԱՆԻ ՆԵՐՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՀԱՅ ԹՈՒՐՃՈՒԱԶԻԱՆ

Իրանում հայ բուրժուազիայի գործունեությունը չէր սահմանափակվում արտաքին առևտորդ և արդյունաբերական ձեռնարկատիրությամբ: Նրա հետաքրքրության շրջանակները զգալիորեն ավելի լայն էին և ընդգրկում էին իրանական տնտեսության նաև այլ բնագավառներ՝ ֆինանսները, ներքին առևտուրը, տրանսպորտը և այլն: Ուշագրավ է, որ չի նկատվում մասնագիտացում տնտեսության առանձին ճյուղերում: Ընդհակառակը, վստահությամբ կարելի է նշել, որ, որպիս կանոն, միննույն ձեռնարկատիրերն ակտիվորեն գործում էին երկրի տնտեսության տարրեր բնագավառներում:

Մինչև XIX դարի վերջը, պետական և ժամանակակից ժամանակոր բանկերի բացակայության պայմաններում, դրամական և բանկային բոլոր գործարքները կենտրոնացած էին դրամափոխների՝ սարաֆների, ձեռքում: Սարաֆների ինստիտուտի գերը զգալիորեն աճում էր այն բանի հետևանքով, որ տեղական վաճառականության շրջանում գերիշխում էին մանր ու միջին առևտրականները, որոնք, սովորաբար, սահմանափակ կապիտալ ունեին և առևտրական գործարքները կնքելու համար մշտապես դրամի կարիք էին զգում: Ընդհուպ մինչև Շահնշահական և Հաշվագարկային բանկերի ստեղծումը, իսկ որոշ շրջաններում նաև դրանից հետո, սարաֆները հանդիսանում էին մանր ու միջին վաճառականների ֆինանսավորման գլխավոր աղբյուրը:

«Տեղական դրամափոխների փոքր խմբերը գավառական շաղաթերում վերահսկում են շուկան», — նշում է Հ. Քերպոնը¹:

Սարաֆները բանկիրների դեր էին խաղում, բարձր տուկուների դիմաց վաճառականներին տրամադրելով փոքր գումարներ Սակայն նրանց մեծ մասը ևս սահմանափակ դրամական միջոցներ ուներ: Նույն Քերզոնի վկայությամբ, XIX դարի վերջին Մաշհագում հաշվվում էր 144 դրամափոխ և վաշխառու՝ 931 հազար թուման ընդհանուր կապիտալով: Նրանցից երկուսն ունեին 100.000-ական թուման կապիտալ, Երեքը՝ 50.000-ական թուման, մնացածները մանր վաշխառներ էին²:

Դարի վերջին իրադրությունը որոշ շափով փոխվում է: Առևտրական խոշոր կենտրոններում բացվեցին Շահնշահական և Հաշվավարկային բանկերի բաժանմունքներ: Միևնույն ժամանակ իրենց գործունեությունն սկսեցին իրանական առաջին խոշոր առևտրաբանկային տները:

Իրանի տնտեսական կյանքի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ առևտրական և ֆինանսարանակային գործարքները սերտորեն միահյուսված էին: Խորհրդային հետազոտող վ. Գլուխողեղի խոսքերով «առևտրադրամական կապիտալի ներկայացուցիչները կազմում էին վարկագրամական ոլորտում զբաղված անձանց ամենահարուստ և զգոր շերտը»³:

Իրոք, խոշոր վաճառականները և առևտրական ընկերություններն առևտրական գործունեությանը զուգընթաց զբաղվում էին նաև վարկագրամական գործառնություններով: Ավելին, երբեմն, վերջիններս այնպիսի նշանակություն էին ձեռք բերում, որ դժվար է պարզել, թե ինչն է զիսավորը նրանց գործունեության մեջ՝ առևտրական թե վարկագրամական գործարքները:

Դրանց սերտաճման փայլուն օրինակ է «Թումանյանց կղբայրներ» առևտրական տան գործունեությունը: Այն ստեղծվել էր Թավրիզում անցյալ դարի 70-ական թվականներին: Առևտրական տան հիմնադիրը թավրիզի կրպակատեր

Հարություն Թումանյանցն էր: Սկզբում նրա ձեռնարկությունը զբաղվում էր իրանական շոր մրգի և մետաքսի արտահանմամբ: Սակայն առևտրական շրջանառության արագ աճը և այն հանգամանքը, որ նրանք ստիպված էին զործ ունենալ դրամական տարրեր միավորների հետ, Հարություն Թումանյանցի որդիներին ստիպեցին զբաղվել նաև դրամական գործառնությամբ: Շուտով Թումանյանց եղրայրները միավորեցին իրենց կապիտալները և ստեղծեցին առևտրաբանկային տուն: Եվ Եթե մինչև XIX դարի 90-ական թվականները վերոհիշյալ հաստատության գործունեության հիմքը կազմում էին առևտրական դրամարժները, ապա դրանից հետո առաջին պլան մղվեց ֆինանսական գործունեությունը⁴:

Իրականացնելով խոշոր առևտրական շրջանառություն և մշտապես կանխիկ դրամի անհրաժեշտություն զգալով, Թումանյանցները Ռուսաստանից ձուլած արծաթ էին ներմուծում և մատակարարում էին դրամահատարանին, դրա դիմաց ստանալով որոշակի քանակությամբ արծաթե դրամ: Մինչև 1894 թ. արծաթեզրամի՝ զանի, հատումն աղատ էր: Յուրաքանչյուր ոք իրավունք ուներ դրամահատարանին արծաթ մատակարարել և դրա դիմաց որոշակի գումար ստանալ: Սակայն, ըստ էության, արծաթի մատակարարումը կենտրոնացած էր մի քանի ընկերությունների ձեռքում:

Թումանյանցները դրամահատարանին մատակարարում էին տարեկան 4000 փութ արծաթ, յուրաքանչյուր մսխալի (1 մսխալը մոտավորապես հավասար է 4,6 գ) դիմաց ստանալով 21 շահի:

Կաստելի առևտրական տունն Արամյանցի հետ միասին մատակարարում էր 2000 փութ արծաթ նույն պայմանով:

Մուկվայի Միջազգային և Շահնշահական բանկերը մատակարարում էին տարեկան հաղարական փութ արծաթ, 1 մսխալի դիմաց ստանալով 20,5 շահի⁵:

Թուա աստիճանավոր Մ. Տոմարայի հաշվարկներով, արծաթ մատակարարողները ստանում էին մինչև 10 տոկոս շահույթ:

1894 թվականին շահը, նպատակ ունենալով բարձրացնել դռանի գնողունակությունը, արգելեց արծաթի ազատ ներմուծումը և դռանի հատումը: Սակայն դա քիչ բանով փոխեց գործի վիճակը: Գրամահատարանի վարձակալ Նազր Էս-Մալթանեն, անհրաժեշտ միջոցներ և արծաթի հիմնական շուկաների հետ գործարար կապեր շունենալու պատճառով, համաձայնություն կնքեց Թումանյանցի և Կաստելիի հետ, որով վերջիններս պարտավորվում էին գրամահատարանին մատակարարել տարեկան 6 հազար փութ արծաթ՝ 1 մսխալի դիմաց 21 շահի ստանալու պայմանով⁷:

Այն բանից հետո, երբ նասր էս-Մալթանեին փոխարինեց Հաջի Մեհմեդ Հասանը, վերոհիշյալ Ընկերություններին հաջողվեց համարյա նույն պայմաններով համաձայնություն կնքել գրամահատարանի նոր տիրոջ հետ: Սակայն 1894 թվականի ամռանը Հաջի Մեհմեդ Հասանը հրաժարվեց համաձայնությունից: Ամենայն հավանականությամբ դրա պատճառն այն էր, որ նրան հաջողվել էր իր համար ավելի նպատագոր համաձայնություն կնքել Սրամյանցի հետ⁸:

Թումանյանց եղբայրների առետրական տունը մեծ շափով զբաղվում էր վարկային և այլ ֆինանսական գործարքներով: Նա իր հաճախորդների համար ընթացիկ հաշիվներ էր բացել, ավանդներ էր ընդունում և վարկեր տրամադրում, ինչպիս նաև զրազվում էր պարտամուրհակների հաշվառմամբ և դրամական փոխադրումներով: Ընկերությունը բաժանմունքներ ուներ Իրանի Հյուսիսային շրջանների բոլոր խոշոր առետրական կենտրոններում:

Իրանում սուսական գործերի հավատարմատար Ա. Սումովի վկայությամբ, Շահը ուղարկում «...բանկային բոլոր գործարքները գտնվում էին Թումանյանց ընկերության ներկայացուցիչ ձեռքում»⁹:

Ռաշտում պարտամուրհակների հաշվառմամբ զրազվում էին Հաշվարկային և Շահնշահական բանկերի բաժանմունքները և Թումանյանցների գրասենյակը¹⁰:

Ղաղվինում հիմնական վարկային հաստատությունները շաշվարկային բանկի գործակալությունը, թումանյանց եղբայրները և բանկիր Հաջի Մուհամեդ Ալի Աղան էին¹¹: Թումանյանցների առետրաֆինանսական գործարքները շյուտիսային իրանում այնքան էին ընդլայնվել, որ գնդապետ Յիսի խոսքերով «...իրանում արմատավորված կարծիքի համաձայն ուստական ուրբատ կուրսը հաստատվում է թումանյանց գրասենյակի կողմից»¹²:

Սակայն առետրական տան ֆինանսական գործունեությունը չէր սահմանափակվում իրանի հյուտիսային շրջաններով: Ընկերությունը բաժանմունքներ ուներ նաև Բաքվում, Աստրախանում, Մոսկվայում, Վիեննայում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում, Կ. Պոլսում և ֆինանսական գործառնություններ էր կատարում նաև Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի խոշորագույն առետրաֆինանսական կենտրոններում¹³:

Թումանյանցները զգալի կապիտալ ունեին, որը հնարավորություն էր տալիս նշանակալի վարկեր տրամադրել: Նրա վարկերը նկատելիորեն գերազանցում էին իրանական մյուս հաստատությունների վարկային գործարքները, չնայած կազմում էին առետրական տան եկամուտների ընդամենը 26 տոկոսը¹⁴:

Հարկ է նշել, որ թումանյանցները վարկեր էին տրամադրում ոչ միայն մասնավոր անձանց, այլև իրանական կառավարությանը: Օրինակ, Մոզաքներ Էդ-Դին շահի իշխանության տարիներին կառավարության պարտքը թումանյանցներին կազմում էր 500.000 դռամ¹⁵:

Իրանական կառավարության պարտքը թումանյանցներին հատկապես արագ էր աճում 1905—1911 թթ. իրանական հեղափոխության շրջանում, երբ կառավարությունը մշտապես դրամի կարիք էր զգում: 1906 թվականի հեղափոխական իրադարձությունների շրջանում, երբ պետական գանձարանը դատարկ էր, թումանյանցները «...պետության կարիքների համար կառավարությանը տալիս էին օրական 10, 20, երեսմն էլ մի քանի հարյուր հազար թուման»¹⁶,

Միանգամայն օրինաշափի է, որ իրանական կառավարության աճող պարտքը սկսեց անհանգստացնել 1906 թվականի սեպտեմբերին ստեղծված Ազգային բանկին: 1907 թվականի սկզբին բանկը շահական կառավարությանը առաջարկեց 3 մլն թուման վարկ: Դրանից 500.000 տրամադրվում էր կանխիկ, որից 300.000 նախատեսված էր 3,5 ամսվա ընթացքում թումանյանցների պարտքը վճարելու համար^{17:}

Սակայն հետագայում ևս իրանական կառավարությունը մեկ անգամ չէ, որ դիմում էր թումանյանցների ֆինանսական օգնությանը: 1912 թվականին կառավարության պարտքը վերաբերյալ ընկերությանը կազմում էր 1.500.000 դրամ^{18:}

Առեւտրական տունը իրանական մյուս բանկային հաստատությունների հետ պայքարում այնքան ամրապնդվեց, որ սկսեց մրցակցել նաև Շահնշահական բանկի հետ: Վերջինիս դեմ պայքարը, ազգային դրամական կապիտալի ներկայացուցիչներին ստիպում էր հաճախ հանդես գտն միասնական հակատով: Այսպես, 1897 թվականին, երբ Շահնշահական բանկի արծաթի պաշարները սպառվել էին, թափրիդում ստեղծվեց ազգեցիկ բանկիրների մի միություն, որի մեջ մտնում էին Թումանյանց եղբայրները, Հաշի Լութֆ Ալին, Էթազին, Հաշի Բաղիրը, Մալեք Թուշարը և ուրիշներ^{19:} Միությունը նպատակ ուներ օգտվել Շահնշահական բանկի գործարություններից և խոշնողութել նրա ազդեցության հետագա աճը:

Շահնշահական բանկի և մյուս բանկային հաստատությունների հետ թումանյանցների մրցակցությունը կանխորոշեց նրանց դաշինքը Հաշվավարկային բանկի հետ: Թումանյանցները զգալի վարկեր էին վերցրել այդ բանկից և մշտապես ներք զգալի վարկեր էին վերցրել այդ բանկից հասպատությունների համար էր շահավետ էր, քանի որ փոխառատությունների համար էր շահավետ էր, քանի որ փոխառադ աշակցությունը հեշտացնում էր պայքարը մյուս բանկային հաստատությունների դեմ: Մյուս կողմից, այն բացակային հաստատությունների դեմ Շահնշահական և Հաշվառում էր առեւտրական տան դեմ Շահնշահական հակատով հանդես գտնությակային բանկերի միասնական հակատով հանդես գտնության սակայն, չնակած այդ հարավորությունը: Տարօրինակ է, սակայն, չնակած

երկու աղղեցիկ բանկային հաստատությունների սուր մըրցակցությանը, նման համաձայնության վտանգ իրոք գոյություն ուներ: XX դարի սկզբից ավելի որոշակի է դառնում աղղային բանկային կապիտալի գեմ համատեղ հանդես գալու Շահնշահական և Հաշվավարկային բանկերի ձգտումը, որը նպատակ ուներ թույլ շտալ առաջինի հետագա համակենտրոնացումը և հզորացումը:

Իհարկե, Թումանյանց եղբայրների առևտրական տան ֆինանսական և բանկային գործունեությունը եղակի երևույթ էր իրանի տնտեսական կյանքում: Միևնույն ժամանակ, կարելի է վստահությամբ նշել, որ առևտրական և ֆինանսական գործարքների սերտաճումն իրանում հայ վաճառականության գործունեության բնորոշ դեերից էր:

Իրանում վաշխառությունը ոչ միայն շէր դատապարտվում, այլև վաղուց ի վեր խրախուսվում էր: Ստացված վարկի դիմաց տարեկան 12 տոկոս վճարելը սովորական երևույթ էր: Նման պայմաններում վաշխառուները հաճախ վարկեր էին տրամադրում տարեկան 25 և նույնիսկ 50—60 տոկոսի հաշվով²⁰: Հատկապես դժվար էր իրանում վարկ ստանալ հեղափոխական իրադարձությունների շրջանում:

«Պարսկաստանում դրամի ընդհանուր բացակայության պայմաններում Գիլանի շուկայում ևս դժվար է դրամ ստանալ, իսկ ով էլ ստանում է, ապա 30—40 տոկոսի հաշվով», — նշում է ուսւաստիճանավոր Մ. Նիկոլակին²¹:

Դրա պատճառը ոչ միայն դրամը թաքցնելու տեղական առևտրափինանսական շրջանների ձգտումն էր, այլև վարկային համակարգի շկարգավորվածությունը: Հայ վաճառականները ևս զրադվում էին վաշխառությամբ և այլ ֆինանսական գործարքներով:

Զուլիան Բարիերը նշում է, որ հայկական տարբեր ընկերություններ հիմնավոր բանկային գործունեություն էին ծավալել ամբողջ երկրում²²:

Բանգար Գյաղում զգալի վարկեր էին տրամադրում «Բեգլարյանց և Կարապետյանց» և «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» ընկերությունները: Կայեմի վկայությամբ դրանցից
136

առաջինը տեղական բնակչությունից որպես ավանդ ստանում՝ էք տարեկան միջնև 150.000 թուման (մոտ 300.000 ռուբլի)՝²³ Սովորաբար տեղական բնակչությունից ավանդներն ընդունվում էին 7,5 տոկոս վճարելու պայմանով։

Միանգամայն օրինաշափ է, որ հայ վաճառականութեադկամությամբ էին ընդունում Շահնշահական կամ Հաշվապարկային բանկերի բաժանմունքների բացումը և ամեն կերպ և ուղղակային այլ հաստատությունների առանձին բանկային այլ հաստատությունների առանձին բանկային բանկերի բացումը: Օրինակ, Բանդար Գյաղում Հաշվապարկային բանկի բաժանմունքի բացումը բոլորովին դուր չեկալ տեղի հայ բաժանմունքի դուր գործարքներին, որոնց ձեռքում էին դտնվում վարկային բոլոր գործարքները^{24:}

Հայ վաճառականները ոչ միայն վարկեր էին տրամադրում և ավանդներ ընդունում, այլև զրադվում էին գրամական փոխագրումներով, պարտամուրհակների հաշվառմամբ և այլն: Նույնիսկ հայկական բաժնետիրական առևտրական ընկերությունները չէին բավարարվում զուտ առևտրական գործարքներով:

գարբներով։ Հնդկանրապես իրանում և մասնավորապես հայ վաճառականության շրջանում լայնորեն տարածված էր առևտրի կազմակերպման հետևյալ եղանակը։ Հումք արտադրողներին նախապես կանխավճար էր տրամադրվում, նման վարկերը տրվում էին սովորաբար բամբակի, մետաքսի, բրնձի և այլ ապրանքների դիմաց, բերքը հավաքելուց շատ առաջ՝ Անշուշտ դրանք առաջին հերթին առևտրական գործարքներ էին։ Միևնույն ժամանակ դրանք հանդիսանում էին վարկաժին գործառնության յուրահատուկ ձև, քանի որ մի դեպքում վարկատունները տրամադրած վարկի դիմաց ստանում էին որոշակի տոկոս՝ 12—15, իսկ մյուս դեպքում, արտադրողները վաճառականից նախապես վարկ ստանալով պարտավորվում էին նրան հումքը վաճառել որոշակի գեղզով։ Այս դեպքում, ըստ էության, փոխառությունները վարկի դիմաց տոկոսները ստանում էին տարբեր ապրանքներով։

սերը ստանում էին տարբեր ազգությունների կողմէց հարցում, Աստրաբադում և Մազանդարանում բարեկի գիմազ զգայի վարկեր էին տրամադրում Թումանյանց

և Տեր-Մկրտիչն եղբայրների, «Հախնազարյանց և Ընկ.» առևտրական տները, «Բեգլարյանց և Կարապետյանց», «Նաւսիբյանց և Տեր-Պետրոսյանց» ընկերությունները, ինչպես նաև վաճառականներ Փանջանցը, Խալափյանցը, Բոգդյանցը և ուրիշներ: Սպահանի շրջակայքում և Թիրմանում նույն կերպ էր գործում Արզումանով Եղբայրների առևտրական տունը:

Վերոհիշյալ վարկային գործարքները սովորաբար ինքնուրույն բնույթ շէին կրում, այլ նպաստում էին այս կամ այն վաճառականի առևտրական շրջանառության աճին: Սակայն թիշ շէին գեղքերը, երբ հայ վաճառականներն իրենց կապիտալի մի մասը շրջանառության մեջ էին դնում զուտ վարկադրամական հարաբերությունների ոլորտում և զգալի շահույթ էին ստանում: Օրինակ, Հյուսիսային Իրանի շատ շըրշաններում նրանց ձեռքում էր գտնվում դրամական փոխագրումների գործը: Քաջատեղյակ լինելով ոռւսական և իրանական շուկաների վիճակին և ուշադրությամբ հետևելով ոռորդու և զուանի կուրսերի փոփոխությանը, նրանք շահավետորեն գնում կամ վաճառում էին դրամական փոխագրումներ: Նույնիսկ խոշոր առևտրական տները և վաճառականներն աննպաստ առևտրական տարիներին դադարեցնում կամ կըրճատում էին առևտրական շրջանառությունը և զրադվում զերազանցապես դրամական փոխագրումներով: Օրինակ, 1916 թվականին բամբակի խոշորագույն արտահանողներից մեկը՝ Ասլանյանցը, բարձր զնի պատճառով դադարեցրեց բամբակի գնումը և սկսեց զբաղվել դրամական փոխագրումներով: Թիզ դա որքան ձեռնոտու էր վկայում է հետեւյալ փաստը: Նույն թվականին Ասլանյանցը 30 հազար ոռորդու դրամական փոխագրում էր զնել 1 թումանը 6 ոռորդի 60 կոպեկով, մինչդեռ ինքն իրանական դրամը ձեռք էր բերել թումանը 4 ոռորդի 30 կոպեկով²⁵:

Տեր-Մկրտիչների առևտրական տունը ևս կըմատեց բամբակի զնման գործարքները և սկսեց դրամական փոխագրումներ զնել²⁶:

Հաճախ դիտվում էր նաև հակառակ միտումը: Հումքի գնման եռուն շրջանում հայ վաճառականները, կանխիկ դրա-

մի խիստ կարիք զգալով, դրամական փոխադրումներ էին վաճառում Ռուսաստան։ Օրինակ, Խորասանում գործող Հայկական խոշորագույն ընկերություններից մեկը՝ «Աթայանց և Ընկ.» առևտրական տունը 1913 թվականին 250.000 ռուբ-լու դրամական փոխադրում էր վաճառել Հաշվավարկային բանկի Ղուշանի բաժանմունքին²⁷։

Հայ վաճառականները ֆինանսական լայն գործունեու-թյուն էին ծավալել Հատկապես այն շրջաններում, որտեղ Բույլ էր Շահնշահական և Հաշվավարկային բանկերի աղ-ղեցությունը։ Օրինակ, Ղուշանում դրամական փոխադրումնե-րի գործը գտնվում էր Թումանյանցների, «Քուրշիյանց, Աթա-յանց և Ընկ.» առևտրական տան և վաճառականներ Արդե-կասիմ Ախավանի և Արդուկ Վահար Ռաֆիկի ձեռքում²⁸։

Հայ վաճառականները, որոնք զգալի կանխիկ դումար-ներ ունեին, իրանական դրամ էին տրամադրում ոչ միայն մանր և միջին վաճառականներին, այլև խոշոր ընկերու-թյուններին և նույնիսկ Հաշվավարկային բանկի բաժան-մունքներին։ Մինչև 1915 թ. կիանողովների ընկերություններ իրանական դրամի անհրաժեշտության դեպքում դիմում էր բացառապես Թումանյանց եղբայրների առևտրական տան օգնությանը²⁹։

1913 թվականին Հաշվավարկային բանկի Ղուշանի բա-ժանմունքը կանխիկ դրամի կարիք զգալով «Աթայանց և Ընկ.» առևտրական տնից գնել էր 50 հազար ռուբլու իրանա-կան դրամ³⁰։

Իրանի Հյուսիս-արևմուտքում Հայ վաճառականները զգալի վարկեր էին տրամադրում շարժական և անշարժ կայ-քի դիմաց։ Նման վարկային գործարքները տարածված էին Հա-շատկապես քրդաբնակ շրջաններում։ Քուրդ Հողատերերը Հա-ճախ Հայ և սպասիկ վաճառականներից վարկեր էին վեր-ցընում Հողի, տների, կրպակների կամ քարվանսարանների շընում Հողի, տների, կրպակների կամ քարվանսարանների գրաւի դիմաց։ Հետագայում Հարողանալով վճարել պարտ-քրավի դիմաց։ Հետագայում Հարողանալով վճարել պարտ-քերը, նրանք ստիպված էին պարտատերերին հանձնել իրենց շարժական և անշարժ կայքը³¹։

Գնդապետ Յիսի վկայությամբ, հայտնի վաճառական Զաքարիա Նազարեակյանցի գործակալները «...փողի պարկերով շրջում էին ողջ Հյուսիսարևմտյան» Պարսկաստանով, հողի դիմաց վարկեր էին տրամադրում և չնշին գնով հող ձեռք բերում»^{32:}

Թավրիզում ուստական զինավոր հյուսպատոս Ա. Միլերի տվյալներով, 1911 թվականին հայ ձեռնարկատերերն իրանական Ազրբեջանում տիրում էին մոտ 704.930 թուման (մոտավորապես 1.268.000 ռուբլի) արժողությամբ անշարժ գույքի, որի զգալի մասը նրանց ձեռքն էր անցել վարկային գործարքների հետևանքով^{33:}

Հայ առեւրաֆինանսական շրջանների ներկայացուցիչները որոշակի հետաքրքրություն էին ցուցարերում իրանում պետական բանկի ստեղծման նկատմամբ: Նման զաղափար Օսմանյան կայսրության հայերի կողմից առաջ էր քաշվել գեռևո 1885 թվականին: Անզինական աղբյուրների համաձայն, Կ. Պոլսի մի խումբ հայ ձեռնարկատերեր, այդ թվում Քիթարշին, Զարլզ Բավրիզյանը և Միրզա Յուսուֆը, բանակցություններ էին վարում Կ. Պոլսում իրանի գեսպան Մոշիր Էդ-Դովլեի և նրա փեսայի՝ Եգիպտոսում իրանի զինավոր հյուսպատոս Հաջի Մեհմեդ Խանի հետ, նպատակ ունենալով իրանում հիմնել բանկ «Իրանի և Աֆղանստանի բանկ» անվանումով: Խմբի ներկայացուցիչները մտադիր էին համագործակցել օսմանյան բանկի հետ, իսկ անհրաժեշտ կապիտալը ձեռք բերել Փարիզում^{34:}

Այդ փաստն ուշագրավ է նաև նրանով, որ իրանում գեռևո շկար պետական բանկ և ֆինանսական բոլոր գործարքներն իրականացնում էին սարաֆները:

1905—11 թվականների հեղափոխությունն ինքնուրույն գործունեության մղեց առեւրական և ֆինանսական բուրժուազի լայն շրջաններին: Մեջիսի առջև ծառացած կարմորագույն խնդիրներից մեկն Ազգային բանկի ստեղծումն էր: Այն պետք է իր վրա վերցներ Շահնշահական բանկի գործառնությունները: Ազգային բանկի ստեղծման մասին հայտարարվեց գեռևո 1906 թվականին: Նրա ստեղծման համար

անհրաժեշտ գումարը պետք է հավաքվեր բաժանորդագրության միջոցով։ Առաջին բաժանորդների թվում էին Հաջի Մամին էս-Զարբի, Հաջի Բաղիրի, Թումանյանցների, Հաջի Մամեդ Իսմայիլի և Արքար Զամշիդի բանկային գրասենյակները³⁵,

Առաջին հ Սրբար հասցերու բարի տարին պատերազմի տարին էրին,
Հյուսացին հրանի տնտեսության տարբեր ճյուղերում զգա-
լի կապիտալներ ներդրած ուստահապատակ ձեռնարկատերերը
որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերում Հաշվագրակա-
լին բանկի բաժնետոմսերի նկատմամբ: 1917 թվականի հու-
նիսին Ս. Էփանովը, Ա. Խոշտարիան և է. Վատացին խընդ-
րագիր հղեցին Ռուսաստանի ֆինանսների նախարարությա-
նը, առաջարկելով իրենց վաճառել վերոհիշյալ բանկի բաժ-
նեկում արային կապիտալի 60 տոկոսը: Այդ խումբը ձեռ-
նարկատիրական լայն գործունեություն էր ծավալել Հյուսի-
սային իրանում և գտնում էր, որ Հաշվագրակալին բանկը
բոլորովին շի համապատասխանում «Պարսկաստանում ու-
սական տնտեսական շահերի ոչ ծավալին, ոչ բովանդակու-
թյանո»³⁶,

թյանը՝³⁶։ Այսպիսով, ֆինանսարանկային գործառնությունները կազմում էին հայ քուրժուազիայի ձեռնարկատիրական գործունեաթյան կարևոր մասը։ Բնդցանուր առմամբ դրանք սերտորեն կապված էին նրանց առևտուական գործարքների հետ։ Բացառություն էր կազմում թումանյանց եղբայրների առևտրական տունը, որն արդեն XIX դարի վերջին վերածվել էր առևտրարանկային խոշոր հաստատության և կարևոր դեր էր խառում իրանի ֆինանսական կյանքում։

Համապատականությունը որոշակի դիրքեր էր ու համապատական ներքին առևտում։ Երկրում ապրանքագրամական հարաբերությունների զարգացման հետևանքով նախադրյալ-ներ էին ստեղծվում բնատնտեսության քայլայման և ներքին շուկայի ձեւավորման համար։ Այդ գործընթացը հատկապես արագ էր ընթանում Հյուսիսային շրջաններում, որտեղ գուշակատնտեսության ապրանքայնացման աստիճանն ավելի բարձր էր։

Ընդհանուր առմամբ, երկրի ներսում մանրածախ առետուրը գտնվում էր գերազանցապես մահմեդական վաճառականների ձեռքում: Հայ վաճառականները հիմնականում մեծածախ առևտուր էին վարում: Սակայն իրանի հյուսիսային շրջաններում հիմնավորապես հաստատվել էին նաև մեծ թվով մանր և միջին առևտրականներ, որոնք աշխույժ առևտուր էին անում: Պ. Ավերյանովի վկայությամբ, իրանական Ազգի հանուր ներքին առևտուրը գտնվում էր պարսիկ և հայ վաճառականների ձեռքում³⁷:

Հայ վաճառականները մանրածախ առևտուր էին վարում ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև զյուղական վայրերում: Բոլոր այն զյուղերում, որտեղ հայեր էին բնակվում, առևտուրը գտնվում էր նրանց ձեռքում: Օրինակ, Մակովի խանության Քիշմիշեկի զյուղում կար 5—6 կրպակ, որոնք անհրաժեշտ ամեն ինչ մատակարարում էին ոչ միայն հայ, այլև քուրդ բնակչությանը³⁸:

Սալմաստում հայ և հրեա վաճառականները քրդերի հետ պարզ փոխանակային առևտուր էին վարում: Նրանք քըրդերին տալիս էին ոռւսական չիթ, հագուստ և այլ ապրանքներ և նրանցից ստանում բուրդ, յուղ, պանիր և այլն³⁹, նման առևտուրը կանխիկ դրամով չէր կատարվում, ինչը շափականց բնորոշ երեսով է ապրանքադրամական հարաբերությունների անրավարար զարգացման պայմաններում:

Հայ վաճառականության գործունեության կարևոր կենտրոններից էին Ռաշտը և Էնզելին, որտեղ հաստատվել էին ինչպես խոշոր, այնպես էլ բազմաթիվ մանր ու միջին հայ վաճառականներ: Էնզելիում մեծ թվով հայկական կըրպակներ կային, որոնք վաճառում էին գերազանցապես ոռւսական ապրանքներ և սպասարկում էին ինչպես էնզելիի, այնպես էլ մոտակա շրջանների բնակչությանը⁴⁰:

Ն. Շավրովի վկայությամբ, Ռաշտում ամեն քայլափոխի կարելի էր հանդիպել հայկական ցուցանակների⁴¹:

Նույն հեղինակի վկայությամբ, Բանդար Գյազում և Մաշտադիսերում շկար մի զյուղ, որտեղ վիճեր հայ առևտրականի կրպակ⁴²:

Օտար հեղինակները ևս վկայում են այն մասին, որ հայերը կարևոր դեր էին խաղում իրանի ներքին առևտում։ «Հայերը մինչև այժմ էլ առևտուր են անում և դրամ փոխում իրանական շուկաներում և բարգավաճում են հաստավաճառ առևտորից ստացվող շահույթից...», — նշում է Ք. Քերզոնը⁴³:

Ուշագրավ է այն փաստը, որ եթե արտաքին առևտում հայ վաճառականները կողմնորոշվում էին դեպի ոռւսական արդյունաբերություն, երկրի ներսում նրանք հաջողությամբ վաճառում էին ոչ միայն ոռւսական, այլև արևմտաեվրոպական արտադրության ապրանքներ։ Նրանց խանութները լցված էին անգլիական բամբակյա մանուֆակտուրայով, ֆրանսիական անձնապիտո առարկաներով, ավստրիական և գերմանական բրդյա գործվածքներով։

Ներքին առևտորի գարգացման համար շափազանց կառոր նշանակություն ունեին առևտրական ուղիների վիճակը և ժամանակակից փոխադրամիջոցների առկայությունը։ Այդ երկու պայմաններն էլ իրանում բացակայում էին։ Ճանապարհների մեծ մասը հարմարեցված էր միայն գրաստների շարժման համար։ Միենույն ժամանակ այդ ճանապարհներով էրթևեկելը ոչ միշտ էր անվտանգ։ Առևտրական բարվանների վրա հարձակումները սովորական երեսույթ էին հատկապես այն ճանապարհներին, որոնք անցնում էին ուղամատենալ քոչվոր ցեղերի բնակության վայրերով։

Կազմակերպված ապրանքային և մարդատար երթևեկության բացակայությունը խոշոր վաճառականներին և առևտրական ընկերություններին ստիպում էր ինքնուրույնարար տրամադրությունը կազմական ապաքմամբ։ 1891 թվականին Լ. Պոլոզավել ապրանքների առաքմամբ 1891 թվականին կազմակերպված կազմակերպեց «Պարսկական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը», սակայն գրանից հետո էլ առևտրական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները առևտրական սովորություններին էին սպասարկել իրանի կարևորագույն առևտրական ուղիները։ Հայ բուրժուազիան ևս ակտիվորեն մասնական ուղիները։ Հայ բուրժուազիան ևս ակտիվորեն մասնակցում էր հյուսիսային իրանի ճանապարհներով առևտրական երթևեկության կազմակերպմանը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին էնդիլի-Ռաշտ-Թէհրան ճանապարհով ապրանքների առաքումը գտնվում էր հիմնականում Թումանյանցների, Արամյանցի, Տէր-Մարգսյանցի և Պարսկական տրանսպորտի գրասենյակի ձեռքում։ Նրանք բոլորն էլ զգալի շահույթ էին ստանում, քանի որ այդ ճանապարհը առևտրական մեծ բեռնաշրջանառություն էր իրականացնում⁴⁴։

Հյուսիսացին Իրանի մյուս կարևոր առևտրական ուղին Աստարա-Արդարի ճանապարհն էր, որն ուներ նաև կարևոր ստրատեգիական նշանակություն։ Այն վարձակալության էր տրված կանողովների ձկնորսարանների կառավարիչ գրիգորովին⁴⁵։

Թումանյանցները, ինչպես նաև վաճառականներ Ներսիսյանցը և Հարությունյանցը Աստարայում նաև առևտրական միջնորդի գեր էին խաղում։ Նույն Հարությունյանցը (Խարտունով) և Աղայանցը մի քանի ուրիշ վաճառականների հետ սպասարկում էին Ջուղա-Թավրիզ և Ջուղա-Խոյ-Ռումիա ճանապարհները⁴⁶։

Ռուս-իրանական առևտրի զարգացման համար կարևոր նշանակություն ուներ Մաշադիսեր-Թէհրան ուղին։ Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբն ապրանքների առաքումն այդ ճանապարհով կատարվում էր քարավանների միջոցով, որոնք վարձվում էին Փանյանց եղբայրների, Ալիկի և ուրիշների միջնորդությամբ։ Սակայն պատերազմի նախօրյակին այդ ճանապարհը շահագործելու իրավունքը ձեռք բերեց Թումանյանց եղբայրների առևտրական տունը⁴⁷։

XX դարի սկզբին սրբեց պայքարը Ռումիա լճում նավարկության իրավունք ստանալու համար։ Այն վիթխարի նշանակություն ուներ ինչպես իրանական Աղրբեշանի, այնպես էլ Հյուսիսային Թրամանի առևտրի համար։ Մողափեր էդ-Դին շահն այդ իրավունքը հանձնել էր Իմամ Կուլի Միրզային՝ թշչակի գիմաց։ Մինչև մեր դարի 10-ական թվականների սկիզբը կոնցեսիոններն ինքն էր իրականացնում նավագությունը։ Չնայած պարզագույն տեխնիկական միջոց-

ներին, իմամ Կուլի Միրզայի տրամադրության տակ կար գուագաստավոր բեռնանալ, 1 շոգեմակույկ և 1 նավաբարշ բեռնանավ, Ուրմիա լճի բեռնաշրջանառությունը կազմում էր՝ 1.300.000—1.500.000 փութ⁴⁸, իմակ կոնցեսիոների տարեկան շահուցթը՝ 8—10 հազար թուման⁴⁹:

Նրան արգելված էր Ուրմիա լճում նավարկության իրավունքը փոխանցել օտարերկրացիներին կամ նրանց հետ ընկերակցության մեջ մտնել լճի համատեղ շահագործման համար: Չնայած արգելվին, իմամ Կուլի Միրզան ՀՀ դարի սկզբից հարաբերությունների մեջ էր մտնել օտարերկրյա և տեղական խոշոր ընկերությունների հետ, նպատակ ունենալով նրանց հանձնել Ուրմիա լճում նավարկության իրավունքը: Առաջինն այդ գործով հետաքրքրվեց թումանյանցների առևտրական տունը, որն առևտրական լայն գործունեություն էր ծավալել իրանի հյուսիս-արևմուտքում: Հավանաբար հենց դրանով էր պայմանավորված թումանյանցների առանձնահատուկ հատաքրքրությունը Ուրմիա լճի նկատմամբ: Հաջողության դեպքում վերոհիշյալ կոնցեսիան կարող էր ունենալ ոչ միայն ինքնուրուցյան տնտեսական նշանակություն, այլև, որ ավելի կարևոր էր, կնպաստեր ընկերության առևտրական շրջանառության աճին: Դեռևս 1901 թվականին թումանյանցներն «Իրանի» բանկային գրասենյակի հետ համատեղ ցանկություն էին հայտնել ձեռք բերել Ուրմիա լճում նավարկության իրավունքը⁵⁰: Չնայած անհաջողությանը, առևտրական տունը հետագայում ևս բանկցություններ էր վարում Կուլի Միրզայի հետ նավարկության իրավունքն ստանալու համար⁵¹:

Օտարերկրյա ընկերություններից վերոհիշյալ կոնցեսիայի ձեռք բերմամբ հատկապես շահագործված էր անգլիական «Սթիվենս» ընկերությունը, որը ձգտում էր իր ձեռքը կան արգելվել իրանական Ազգային արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունները: Ուշագրավ է, որ իմամ Կուլի Միրզայից Ուրմիա լճում նավարկության իրավունք ստանալու անհաջող փորձից հետո անգլիացիներն առաջարկում էին ստեղծել անգլո-ռուսական համատեղ ձեռնարկություն՝

Սթիվենսի գլխավորությամբ, նպատակ ունենալով թույլ շտալ այդ կոնցեսիայի անցումը գերմանացիների ձեռքը^{52:}

Նման անհանգստությունը որոշակի հիմքեր ուներ: XX դարի սկզբից, և Հատկապես 1905—11 թթ. իրանական հեղափոխության շրջանում և նրանից հետո գերմանական իմպերիալիզմի ակտիվությունն իրանում կտրուկ աճեց: Գերմանացիները ձգտում էին շահական կառավարությունից տարբեր կոնցեսիաներ ստանալու միջոցով թուլացնել Անգլիայի և Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական դիրքերն իրանում: Նրանց հակառակեցությունն առանձնապես ուժեղ էր իրանի հյուսիս-արևմուտքում, ընդ որում գերմանացիները գործում էին ոչ միայն ուղղակիորեն, այլև իրենց պարսիկ գործակալների միջոցով: 1909 թվականին Թավրիզում գերմանամիտ Ռահիմ Աղա Ղազվինիի զինավորությամբ ստեղծվեց խոշոր վաճառականների և բանկիրների մի ընկերություն, որը նպատակ ուներ ստանալ Ռումիա լճում նավագնացություն կազմակերպելու մենաշնորհ իրավունք^{53:}

1910 թվականին Ղազվինին Սաթթար խանի միջոցով վերսկսեց բանակցությունները Իմամ Կուլի Միրզայի հետ^{54:}

Ռուսաստանը ևս որոշակի ակտիվություն էր ցուցաբերում այս հարցում: «Ապահովագրության և տրանսպորտի պարսկական ընկերությունը», որին էր պատկանում իրանում տրանսպորտային փոխադրումների մենաշնորհ իրավունքը, բանակցում էր Թավրիզի երկաթուղային ընկերության հետ նպատակ ունենալով նրան հանձնել ուղեկորների և բեռների փոխադրման իրավունքը: Վերջինս իր հերթին բանակցում էր Հաշվավարկային բանկի վարչության հետ Ռումիա լճում նավագնացության իրավունքը նրան հանձնելու համար: Սակայն այս ծրագրերից ոչ մեկին վիճակված չէր իրականացնալ:

Իմամ Կուլի Միրզան հոյժ գաղտնի բանակցություններ էր վարում նաև ռուսահպատակ վաճառական Գաբրիել Բուդայցյանցի հետ, որն առևտրական ակտիվ գործունեություն էր ծավալել իրանական Աղբքաջանում: Թավրիզի ռուսական հյուպատոսության տվյալներով, Իմամ Կուլի Միրզան դիմել

Էր Բուդաղյանցին՝ Ուրմիա լճում նավարկության իրավունքի գրավի դիմաց իրեն տրամադրել 23 հազար թուման վարկ⁵⁵:

Չնայած իմամ Կուլի Միրզան միաժամանակ բանակցություններ էր վարում նաև մյուս շահագրգիռ Կողմերի հետ, Բուդաղյանցին հաջողվեց 1912 թվականի Հունվարի 23-ին նրա հետ վարձակալական պայմանագիր կնքել: Բայց այդ պայմանագրի, իմամ Կուլի Միրզան իր և որդիների անունից Բուդաղյանցին վարձակալության էր տալիս Ուրմիա լճում գործող բոլոր շոգե-և առագաստանավերը: Պայմանագրիը կրնակական մարտի 9-ից⁵⁶: Վարձակալը պարտավոր էր վճարել տարեկան 13.400 թուման վարձավճար⁵⁷:

Մինչև վարձակալական պայմանագրի ժամկետի լրանալը Բուդաղյանցն իրավունք չուներ վաճառել կամ ուրիշին գիշել իրեն տրված իրավունքը, հակառակ դեպքում (կետ 6) այն կորցնում էր ուժը: Իմամ Կուլի Միրզան ևս իրավունք չուներ մինչև ժամկետի ավարտը կոնցեսիան տալ ուրիշին⁵⁸:

Պայմանագրի համաձայն, Բուդաղյանցի կառուցած բոլոր նավերը համարվում էին նրա սեփականությունը: Իմամ Կուլի Միրզան պարտավորում էր անհրաժեշտության դեպքում պահպան այլ շինություններ կառուցել ափամերձ շրջաններում:

Բուդաղյանցն անմիջապես ձեռնամուխ եղավ նավարկության կազմակերպմանը: Նա ձեռք բերեց ու մեծ շոգենավ, կառուցեց նավակայաններ և այլ անհրաժեշտության դեպքում պահպանացնությունը:

Վարձակալը մտադիր էր նավամատուց կառուցել նաև Դերեներում, որպեսզի շոգենավերը կանոնավորապես այցելեն Ուրմիա լճի հարավային ափը⁵⁹: Դա մեծ շափով կը-նպաստեր Ուրմիա լճի վրայով Սոուքը պակաղի և Մուքրիի քը-դատանի առևտրին:

Ինչպես տեսնում ենք, հայ վաճառականներն ակտիվորեն մասնակցում էին Հյուսիսային իրանում առևտրական փոխադրումների կազմակերպմանը:

Վերեռում հիշատակել ենք, որ *XIX* դարի վերջից առեւ-
 տրական կապիտալն արագորեն ներթափանցում էր զյուղ:
 Խոշոր վաճառականները նշանակալի հողատարածություններ
 էին զնում, ձգտելով իրենց ձեռքը վերցնել զյուղատնտեսա-
 կան մթերքների արտադրությունը: Բնականաբար հայ վա-
 ճառականները ևս զգալի կապիտալներ էին ներդրել հողա-
 գործության մեջ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ
 հող էին ձեռք բերում ոչ միայն իրանահպատակ հայ վաճառա-
 կանները, ինչը կապված չէր որևէ դժվարության հետ, այլ հ
 ուսւահպատակ հայ ձեռնարկատերերը: Իրանական կառա-
 վարությունն օտարահպատակներին արգելել էր իրանում հող
 գնել, վկայակոչելով Թուրքմենշայի պայմանագրի Հատուկ
 ակտի 5-րդ հոդվածը, որով ուսւահպատակներին թույլա-
 տըրվում էր սեփականատիրության իրավունքով իրանում
 ձեռք բերել տներ, պահեստներ և այլ շինություններ, սակայն
 հողի մասին ոչինչ չէր ասվում: Միևնույն ժամանակ երկրում
 գործում էին շարիաթի օրենքները, որոնք օտարահպատակ-
 ներին շեխն արգելում իրանում հող գնել: Հայ վաճառական-
 ները, որոնք հիանալի գիտեին տեղի սովորույթները և օրենք-
 ները, բոլոր հողային գործարքները կատարում էին շարիաթի
 համաձայն: Նրանք վիթխարի հողային տիրույթներ էին ձեռք
 բերել հյուսիսային իրանի բոլոր շրջաններում և հատկապես
 իրանական Աղրբեջանում: Այս բնագավառում հայկական
 խոշորագույն ձեռնարկությունը Թումանյանց եղբայրների
 առեւտրական տունն էր, որի կալվածքները գտնվում էին
 իրանական Աղրբեջանում, Մազանդարանում, Գիլանում,
 Ղաղվինում⁶⁰,

1915 թվականին Թումանյանցները Յ հազար դեսյատին
 հող գնեցին Սալավաթի շրջանում, չնայած շահսեանների
 ուղղմատենչ ցեղերը մշտապես հարձակումներ էին գործում
 այդ շրջանի զյուղերի վրա⁶¹:

Առեւտրական տան ներկայացուցիչ, բաքվեցի առաջին
 գիլդիայի վաճառական թովմաս Թումանյանցը Թավրիզի մոտ
 գտնվող Գյունեյ-Արգանակի շրջանում ձեռք էր բերել 12

